



ԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ




ՆԱՅԵՐԵՆԻ
ՊԱՐԲԵՐՈՒՅԹԸ

ԵՐԵՎԱՆ 1965









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

ВАРАГ АРАКЕЛЯН

ПЕРИОД В АРМЯНСКОМ
ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН

1968


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հր. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐԲԵՐՈՒՅԹԸ

A $\frac{\pi}{42131}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1968

Ներկայումս, երբ հայ լեզվաբանությունը և գրականագիտությունը շատ հրատապ հանրաց են համարում հայոց գրական լեզվի, հատկապես գեղարվեստական գրականության լեզվի գիտական ուսումնասիրությունը, պարբերության ուսմունքն այս բնագավառում առանձին գեր ու նշանակություն կարող է ստանալ, որովհետև որքան որ այն քերականության առարկա է, նույնքան, և դուրս ավելի, վերաբերում է սճարանության և գրական լեզվի պատմության: Այս առումով սույն աշխատանքը ոչ միայն մի արահետ է բացում պարբերության ուսումնասիրության դժբի մեջ, այլև կարող է օգնել գեղարվեստական լեզվի ոճն ու լեզվական արվեստը ուսումնասիրողներին, ուսուցիչներին և ուսանողությանը:

ՊԱՐԲԵՐՈՒՅԹԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Պարբերութի մասին առաջին անգամ հիշատակել են հույները, որոնք մեր թվարկությունից դեռևս շատ առաջ տներին գիր ու գրականություն: Նրանք շատ լավ տարբերում էին գրական և խոսակցական լեզուն և հատկապես ձգտում էին, որքան հնարավոր է, գրական խոսքը դարձնել գեղեցիկ, արտահայտիչ և ներազդու:

Նրանք տարբերություններ էին որոնում գրողների լեզվի, ոճի մեջ և սահմանում նրանց լեզվաոճական առանձնահատկությունները: Սկզբնապես այդ կարգի ուսումնասիրությունները զուտ գործնական նպատակ էին հետապնդում, իսկ աստիճանաբար զարգանալով՝ ստացան տեսական ու գիտական բնույթ:

Նախապես լեզվի ու ոճի հարցերի գործնականությունը առնչվում էր հոեոորական արվեստի հետ: Գեղեցկախոսությունը իր բոլոր հնարավոր ձևերով ու միջոցներով հույները ուսումնասիրեցին, խորացրին՝ մշակելով կանոններ ու օրինաչափություններ: Հոեոորական արվեստի զարգացումը յուրաքանչյուր հույն գիտունի համար միջոց էր իր քարոզած սկզբունքներն ու գաղափարները տարածելու և ժողովրդի լայն զանգվածներին դրանց ճշմարտացիության մեջ համոզելու. սա մի կողմից: Մյուս կողմից դատական գործերի ելքը կախված էր կողմերի ճառերի՝ դատավորների վրա թողած ազդեցության զորությունից. բացի այդ, դահլիճում ներկա գտնվող հասարակությունը նույնպես դեր էր կատարում վճռին այս

Եւամ այն ընթացքը տալու գործում: Ուրեմն՝ դատարանում հանդես եկող կողմերը իրենց խոսքի ուժով պետք է նվաճեն ամբողջ դահլիճը: Եթե դատարանում կողմերից մեկնումնկը արդարանալու կամ մեղադրելու քիչ փաստեր էր ունենում, դիմում էր ամենազոր խոսքի ուժին և գեղեցկախոսությամբ դրեթե գործը շահում: Մեղ հասել են հռետորական արվեստի կանոններով մշակված փայլուն ճառերի մի քանի դասական նմուշներ:

Գեղեցկախոսության համար տեսումնասիրվող ու մշակվող խոսքը աստիճանաբար դառնում է գիտական վերլուծության առարկա. զուտ գործնական նպատակների հետամտող հռետորական հնարամտությունները ընդարձակվելով դառնում են խոսքարվեստի ու քերականության առարկա և սկսում են մշակվել արդեն գիտական երեք տեսանկյուններով: Առաջ են գալիս ճաբատասանությունը, խոսքարվեստագիտությունն ու քերականությունը:

Հռետորական ու բանաստեղծական արվեստի զարգացման սկզբնական շրջանում հույները գրում են՝ «Խոսենք այն մասին, թե ինչպես պետք է անենք, որ գեղեցիկ արտահայտվենք և խոսքը ընդարձակենք, երբ այն որևէ մեկին ցանկալի է: Գեղեցիկ խոսել՝ նշանակում է միտքը արտահայտել կիսով չափ, բայց այնպես, որ լսողը առանց դրան էլ մյուս կեսը հասկանա: Պետք է խոսքը օժտել նաև ասացվածքներով: Անհրաժեշտ է մտքերը ամեն կերպ բաղմազան դարձնել՝ փոխելով արտահայտությունները, և երբեք նման մտքերը չպետք է կրկնվեն միևնույն բառերով:

Ընդարձակ խոսել ցանկացողը պետք է խոսի ամեն առարկայի մասին՝ կիրառելով որքան հնարավոր է շատ բառեր: Իսկ համառոտ խոսել ցանկացողը պետք է ամբողջ առարկան ընդգրկի մի բառով և ընդ որում այնպիսի բառով, որն այդ առարկան նշանակող բառերից ամենակարճն է: Պետք է գործածել քիչ շաղկապներ, բայց շատ շարակցումներ: Այդ վերաբերում է բառերին, գալով կառուցվածքներին, ապա չպետք է կիրառել այնպիսիք, որտեղ միևնույն միտքը

երկու կերպ է արտահայտված: Իսկ եթե նախընտրում ես միջին ճանապարհը, ապա պետք է նաև արտահայտութայունների մեջ պահպանվի համաշափությունը. հարկավոր է խուսափել ինչպես չափազանց երկար, այնպես էլ խիստ համառոտ արտահայտութայուններից՝ չգործածելով միևնույն առարկայի համար մի քանի բառ. պետք է օգտվել միջին մեծութայան բառերից»¹:

Արիստոտելը «Պոետիկայի» մեջ արդեն խոսում է ոճի տարբեր տեսակների, փոխաբերութայունների, բառապաշարի տարբեր շերտերի, հոմանիշների, համեմատութայունների, լեզվի ու ոճի այլ հարցերի մասին և դրանք քննում է գիտական ընդհանրացումներով ու օրինակներով: Որպեսզի առավել պարզ պատկերացնենք, թե Արիստոտելը ինչպես է դնում հարցերը և քննում դրանք, բերենք մի քաղվածք նրա «Պոետիկայից»:

«Ոճի արժանավորութայունը պարզութայան և ոչ թե հասարակ լինելու մեջ է: Ամենապարզ ոճը այն է, ուր կիրառվում են ընդհանուր գործնական բառեր. բայց այդպիսի ոճը հասարակ է (ցածր): Իսկ վսեմ ոճը, որ հեռանում է խոսակցականից, օգտագործում է անսովոր բառեր: Անսովոր ես համարում եմ մեկնաբանելի օտար բառերը, փոխաբերութայունը, ընդլայնումը և այն բոլորը, ինչ որ առօրյա խոսքի սահմաններից ելնում է: Բայց եթե միայն այդպիսի բառեր գործածվեն, այն ժամանակ կստացվի կամ հանելուկ և կամ օտարաբանութայուն: Եթե նախադասութայունը կազմվի փոխաբերութայուններից, կդառնա հանելուկ, եթե կազմվի մեկնաբանելի օտար բառերից, կստացվի օտարաբանութայուն... Մեկնաբանելի օտար բառերը, փոխաբերութայունները, զարդարանքները և այլ կարգի բառեր, որ հիշատակված են իմ կողմից, ոճը դարձնում են անսովոր ու վսեմ. իսկ ընդհանուր գործածական արտահայտութայունները նրան պարզութայուն են հաղորդում: Առանձնապես խոսքի պարզութայանը նպաստում են,

¹ «Античные теории языка и стиля», М., 1936, էջ 171:

շղարձնելով այն խոսակցական, ընդլայնումը, համառոտումը և բառերի նշանակությունների փոփոխությունները: Մի կողմից արտահայտման սովորական եղանակից շեղվելու շնորհիվ բառը իր անսովոր բնույթով խոսքը դարձնում է անսովոր, իսկ այն պատճառով, որ խոսքի մեջ կան սովորական արտահայտություններ, ձեռք է բերվում նաև պարզություն: Ըստ այդմ անարդար են պարսավանքները նրանց հասցեին, ովքեր դատապարտում են այդ տեսակ ոճը և ծաղրում են բանաստեղծներին, ինչպես օրինակ էվկլիդես ավագը»¹:

Ինչպես նկատելի է, Արիստոտելը հիմնականում առաջ է քաշում լեզվի ու ոճի հարցերը և դրանք գործնական նկատառումներից բարձրացնում, դնում է գիտական հաստատուն հողի վրա: Նա արդեն ուսումնասիրության առարկա է դարձնում տարբեր խնդիրների ամբողջ միակցություններ, քննում է դրանց առանձնահատկությունները, տալիս է սահմանումներ, վերլուծում և գիտական դասակարգման ենթարկում ուսումնասիրվող նյութը:

Լեզվի և ոճի փաստացի երևույթների մեջ խորանալով, Արիստոտելը հասնում է նաև պարբերության ըմբռնմանը: Նա իր «Ճարտասանության» մեջ խոսում է պարբերության մասին, քննում է նրա առանձնահատկություններն ու հատկանիշները, բաժանում է տեսակների և լայն հասկացողություն տալիս պարբերության վերաբերյալ:

Ըստ Արիստոտելի խոսքը լինում է կամ շարակցական, որ միահյուսվում, զոդվում է շաղկապներով, — այդպիսի խոսք են նախերգանքները, ներբողները, — կամ էլ հարթ ու ավարտուն, ինչպես հին բանաստեղծությունների տները:

«Շարակցական խոսքը հնագույնն է: Առաջ այդ ոճը կիրառում էին բոլորը, իսկ այժմ այն գործածում են քչերը: Ես շարակցական եմ կոչում այնպիսի ոճը, որ ինքնին վերջ չունի, քանի չի վերջանում այն առարկան, որի մասին խոսվում է. դա իր անավարտունությամբ տհաճ է, որովհետև ամեն ոք

¹ Նույն տեղում, էջ 175:

ցանկանում է վերջը տեսնել. այդ է պատճառը, որ վաղըստ մրցորդները շնչակտուր են լինում և ոլորանում, ուժասպառվում, մինչդեռ առաջ նրանք հոգնություն չէին զգում՝ իրենց դիմաց տեսնելով վաղքի առարկան: Ահա ինչով է բնութագրվում շարակցական խոսքը: Հարթ ու ավարտուն ոճը այն ոճն է, որ կազմված է պարբերություններից (շրջաններից): Ես պարբերությամբ եմ կոչում այն արտահայտությունը, որն ինքնին ունի սկիզբ և վերջ և որի շափերը հեշտ է շրջահայել: Այդպիսի ոճը հաճելի ու հասկանալի է: Այն հաճելի է, որովհետև հակադիր է անավարտ խոսքին, և ամեն անգամ շնորհիվ այդ ավարտունության, լսողին թվում է, թե նա ինչ-որ ըմբռնում է, իսկ ոչինչ չնախադգալ և ժշնշի չհանգել, տհաճ է: Այդպիսի խոսքը հասկանալի է, որովհետև այն հեշտությամբ հիշվում է, իսկ այդ առաջանում է այն բանից, որ պարբերութային խոսքը ունի թիվ, իսկ թիվը ավելի հեշտ է հիշվում: Այդ պատճառով էլ բոլոր ոտանավորները ավելի լավ են հիշվում, քան արձակը, որովհետև ոտանավորները ունեն թիվ, որով նրանք շափվում են: Պարբերությամբ պետք է իր մեջ պարփակի նաև վերջացած միտք և ոչ թե երկատվի:

Պարբերությամբ կարող է կազմվել մի քանի կոլոններից (մաս) կամ լինել պարզ: Այն պարբերությամբ, որ կազմված է մի քանի կոլոններից, ավարտուն պարբերությամբ է, ունի բաժանումներ և հարմար է շնչառության համար ամբողջությամբ և ոչ թե մասամբ: Կոլոնը պարբերության երկու մասերից մեկն է: Պարզ պարբերությամբ ես անվանում եմ միանգամայն պարբերությամբ: Ոչ կոլոնները և ոչ էլ պարբերությամբ չպետք է լինեն ոչ կարճ և ոչ էլ շատ երկար, որովհետև կարճ ձևը հաճախ ստիպում է լսողներին սալթաքել. իրոք, երբ լսողը դեռ ձգտում է առաջ դեպի այն առարկան, որի մասին նա պատկերացում ունի իր մեջ, հանկարծ պետք է կանգ առնի՝ խոսքի դադարման հետևանքով. կարծես նա սալթաքում է՝ հանդիպելով խոչընդոտի: Իսկ երկար պարբերությունները ստիպում են լսողներին ետ մնալ, ինչպես պատահում է այն մարդկանց հետ, որոնք զբոսնելով, դուրս են գալիս նշված սահմաններից և

իրենց հետևում թողնում նրանց, ում հետ զբոսնում են: Այդպես էլ պարբերությամբ. եթե դրանք երկար են, վերածվում են ամբողջական խոսքերի և նմանվում են նախերգանքի:

Հափաղանց կարճ կոլոններով պարբերությամբ պարբերությ չեն, դրանք լսողին առաջ են մղում հափաղանց սրբանշան:

Մի բանի կոլոններից կազմված պարբերությիւնում և տրոհական կամ հակադրական: Տրոհական պարբերությիւն օրինակ. «Ես հաճախ դարձանում էի նրա վրա, ով սահմանեց հանդիսավոր ժողովները և հիմնեց մարզական մրցումները»: Հակադրական պարբերությիւն աչնախին է, որի մեջ երկու անդամից մեկը մյուսի նկատմամբ հակադիր է կամ հենց միևնույն անդամը հարակցվում է երկու հակադրությունների. օրինակ՝ «Նրանք ծառայություն մատուցեցին և նրան, և ուրիշներին. նրան, ով մնաց, և նրան, ով հետևեց նրանց»: Այստեղ հակադրություններ են՝ մնալ — հետևել, բավականաչափ — ավելի շատ: Ծիշտ աչգպես էլ մյուս տրոհությունների մեջ. «Եվ նրանց համար, ովքեր կարիք ունեն փողի, և նրանց համար, ովքեր ցանկանում են դրանից օգտվել»: օգտվելը հակադրվում է ձեռք բերելուն: Շարադրման աչս եղանակը հաճելի է, որովհետև հակադրությունները հափաղանց մատչելի են ըմբռնմանը. իսկ եթե նրանք կողք-կողքի են, էլ ավելի հասկանալի են. աչև աչն պատճառով, որ շարադրման աչգ եղանակը նմանվում է հավաքաբանության (սիլլոգիզմի), աչնպես որ ապացույցը հակադրությունների ղուգադրություն է»¹:

Ինչպես տեսնում ենք, Արիստոտելը երկու տեսակ ունի էրնդունում, մեկն աչն է, որ դեռևս չի վերջացել, ամբողջացել, աչսինքն՝ աչն առարկան, որի մասին խոսվում է, խոսքի միջոցով չի սպառվում, չի կլորացված, իսկ սրան հակադիր ավարտուն, կլորացված, վերջավորված խոսքը նա կոչում է պարբերությ: Ուրեմն՝ ըստ Արիստոտելի պարբերությիւն տա-

¹ Նույն տեղում, էջ 183—184:

ջին հատկանիշը վերջավորված, կլորացված, ավարտուն լինելն է: Այդպիսի խոսքը ունի սկիզբ ու վերջ, և մտքով այն ընկալելը դյուրին է: Ունեւորեն այդպիսի խոսքը նա համարում է հաճելի ու հասկանալի և բերում դրանց պատճառաբանությունները: Հաճելի լինելը նա բացատրում է ավարտունությամբ. այդպիսի խոսքը, ըստ նրա, ընթերցողը կամ լսողը ամբողջությամբ ընկալում է, և հենց այդ հաճելի է: Իսկ հասկանալիությունը պատճառաբանվում է հեշտ հիշվելով:

Ըստ Արիստոտելի պարբերութային խոսքը ունի թիվ, քանակ, այսինքն՝ բաղկացած է որոշակի մասերից ու անդամներից, իսկ թիվը դյուրությամբ է մնում հիշողության մեջ: Այս առումով նա պարբերութային խոսքի և ոտանավորի մեջ նմանութուն է տեսնում, ասելով՝ թե երկուսն էլ ունեն թիվ, պարբերութը ունի կոլոններ, իսկ ոտանավորը՝ ոտքեր:

Պարբերութի մյուս հատկանիշը, ըստ Արիստոտելի, բաղմամասնությունն է: Ծիշտ է, նա նշում է, որ կան նաև պարզ միանդամանի պարբերութներ, սակայն հիմնական ուշադրությունը բեռում է մասեր սնեցող պարբերութի վրա: Բաղմամաս պարբերութը, ըստ նրա, երկատվում է և հարմարվում շնչառությանը ամբողջությամբ, այլ ոչ թե մասնակիորեն: Հիմնականում Արիստոտելը ծանրանում է երկմասնյա պարբերութի վրա, նշելով ֆիաժամանակ շնչառության պարագան, որ առնչվում է հնչերանգի հետ:

Արիստոտելը նկատում է, որ պարբերութի ու սովորական նախադասության միջև կան զանազանություններ, սակայն դրանք որոշակի սահմանադատելու եզրեր չունեն: Արիստոտելի և նրան հետևող անտիկ աշխարհի ուրիշ գիտունների համար նույնիսկ պարզ նախադասությունը, երբ սկիզբ ու վերջ ունի, այսինքն՝ ավարտված է, մի պարբերութ է:

Հիմնական ուշադրությունը բեռնելով երկմասնյա պարբերութի վրա, Արիստոտելը նշում է պարբերութի նարեղ առանձնահատկություններից մեկը՝ հակադրականությունը:

Իսկապես պարբերությի երկու մասերը զերազ սնցապես հակադիր են: Հակադրականությունը արտահայտվում է մի քանի գծերով. հնչերանգային հակադրությունը պարբերությի հիմնական հատկանիշներից մեկն է. սրա հետ առկա է նաև քերականական՝ ձևական հակադրությունը: Արիստոտելը սրանք չի նկատում, նա նշում է միայն իմաստային հակադրությունը, որ և համարում է պարբերությի կարևոր հատկանիշը:

Նա մեծ նշանակություն է տալիս նաև պարբերությի շափավոր լինելուն. ըստ նրա, շափազանց կարճ նախադասությունը չի կարող պարբերությ լինել, իսկ սրան հակադիր, շատ երկարը կորցնում է իր համաշափությունը, խճողվում է, որ նույնպես պարբերությի համար ձեռնառու չէ: Պարբերությի մյուս հատկանիշը, որ նշվում է նրա կողմից, շափավորությունն է:

Արիստոտելը պարբերությի մասերի միջև որոշ հարաբերություններ է նկատում: Պարբերությի տարբեր մասերը լինում են, ըստ նրա, հակադրական, հավասար և նման: Հակադրության նրա ըմբռնումը երևում է մեր վերը բերած քաղվածքից, իսկ հավասարությունը այն է, որ պարբերությի երկու մասերը լեզվական միավորումներով հավասար են: Իբրև նմանության հատկանիշ նա ընդունում է երկու մասերի ծայրերի նմանավանդությունը: Այդ նմանությունը պետք է արտահայտվի կամ սկզբում, կամ վերջում: Սկզբում լինում են նման անուններ, իսկ վերջում՝ ետին վանկերը կամ միևնույն անունների տարբեր հոլովները և կամ միևնույն անունը¹:

Ըստ Դեմետրիոսի պարբերությը կազմված է կոլոններից (մասերից) և կոմերից (անցում): «Պարբերությը կոլոնների ու կոմերի համակարգ է, որ վարպետորեն հարմարեցված է արտահայտելու նրա մեջ պարունակված մտքերը»: Դեմետրիոսը բերում է Արիստոտելի սահմանումը («Պարբերությը բառական դարձված է, որն ունի սկիզբ և վերջ») և նշում է,

¹ Նույն տեղում, էջ 184:

թե այդ սահմանումը գեղեցիկ է ու ճիշտ: Նա ավելացնում է. «Արդեն «պարբերույթ» բառը անմիջապես հասկանալ է տալիս, որ այն ինչ-որ տեղ սկսվում է և որ այն ձգտում է վերջնականորեն, ինչպես մրցողները վաղրի մեջ»: Ըստ նրա՝ «Պարբերույթը նման է շրջանաձևի կամ օղակաձև ճանապարհի: Եթե պարբերույթի մեջ ոչնչացնենք այդ օղակաձևությունը և բառերի տեղը փոխենք, էությունը կմնա նույնը, բայց պարբերույթ չի լինի: Խոսքի մի ձևը կոչվում է կլորացված. այդպիսի խոսքը պարբերույթային է, իսկ խոսքի մի այլ ձևը կտրատված է. այդպիսի խոսքը բաժանվում է կոլոնների, որոնք թույլ են ղողվում միմյանց հետ: Այսպիսի խոսքի մեջ կարծես կոլոնները թափված են մի կույտով և նետված են առանց ներքին կապի ու փոխադարձ հենարանի: Դրանք այստեղ չեն օժանդակում միմյանց, ինչպես պարբերույթի մեջ են օժանդակում: Պարբերույթի կոլոնները նման են այն քարերին, որոնք պահում և իրենց վրա կրում են կամարը: Իսկ կտրատված խոսքի կոլոնները նման են այն քարերին, որոնք իրար մոտ են թափված, բայց չեն ընդելուզված կառույցի մեջ: Դրա համար է, որ այդ ավելի հին խոսքի մեջ կա ինչ-որ ողորկություն և մաքրություն, ինչպես հնագույն արձաններում, երբ արվեստը ձևերի շոր պարզությամբ էր արտահայտվում. իսկ ավելի ուշ շրջանի խոսքը նման է Ֆիդիասի ստեղծագործություններին, քանի որ նա ունի և մեծափառություն և մշակվածություն»¹:

Դեմեարիոսը երեք տեսակ պարբերույթ է ընդունում՝ պատմական, խոսակցական և հոեաորական: Պատմական պարբերույթը այն է, որ ոչ չափազանց կլորացված և ոչ էլ չափազանց աղատ է կառուցված, այլ զբաղեցնում է այդ երկու ծայրահեղությունների միջին տեղը, որպեսզի իր կլորության հետևանքով չթվա հոեաորական, անհամողիչ. իր արժանավորությունն ու հարմարությունը պատմական շարադրման համար պայմանավորված են իր պարզությամբ: Հոեաորական խոսքի պարբերույթը կառուցիկ է և կլորացված,

¹ Նույն տեղում, էջ 184:

որ պահանջում է ուժեղ ձայն ու դիմաշարժեր, որոնք ուղեկցում են նրա կշռույթին: Հենց սկզբից այդ պարբերույթը ունի ինչ-որ կենտրոնացածութիւն, և հասկանալի է, որ այն պարզ չափաի վերջանա: Խոսակցական պարբերույթը էլ ավելի ազատ է ու հասարակ, քան պատմականը: Այն հազիվ թե պարբերույթ համարվի: Կոլոնները նրա մեջ նկատված են մեկը մյուսի վրա, ինչպես կտրատված խոսքի մեջ և վերջանալու միջոցին հազիվ ենք նկատում, թե ասվածը պարբերույթ է: Խոսակցական պարբերույթը պետք է տեղադրվի կտրատված և կլորացված խոսքերի միջև իբրև երկուսի խառնուրդ¹:

Պարբերույթի մասին խոսել է նաև լատին ճարտասան Կիկերոնը. նա պարբերույթը բնութագրում է հետևյալ ձևով. «Իր շրջապատույտի մեջ վերջացած պարբերույթը կազմված է մոտավորապես, չորս մասից, որոնք մենք անվանում ենք անդամներ. այդպիսի տեսքով այն (պարբերույթը) լսողությանը բավականաչափ դոհացում է տալիս՝ լինելով պահանջվածից ոչ շատ կարճ և ոչ էլ շատ երկար: Սակայն երբեմն, կամ նույնիսկ, ավելի ճիշտ, հաճախ, լինում են շեղումներ և դեպի այս, և դեպի մյուս կողմը, այնպես, որ անհրաժեշտ է լինում կամ շատ դադար տալ, կամ պարբերույթը շարունակել որոշ շափով առաջ այն նպատակով, որպեսզի կամ պարբերույթի շափազանց կարճությամբ չխաբենք լսողների սպասելիքները, կամ չբթացնենք նրանց ուշադրութիւնը ավելորդ մեծ երկարութեամբ:

Այսպիսով, լրիվ պարբերույթը մոտավորապես կազմված է չորս անդամից, ինչպես հեկղամետրային չափի ոտանավորը՝ տներից: Այդ առանձին տների վերջույթները՝ կարծես հանգույցներ են՝ կապակցելու համար հետագա մասերը, և պարբերույթի մեջ մենք այդ հանգույցները ամրացնում ենք: Եթե մենք ուղում ենք անդամահատված խոսել, ապա այդ տեղերում դադար ենք առնում, և այդպիսով, երբ անհրաժեշտ

¹ Նույն տեղում, էջ 241:

է, հեշտությամբ և հաճախ հրաժարւում ենք խոսքի այդ ան-
ընդհատ հոսանքի խիստ պահանջներին»¹:

Շարունակության մեջ Կիկերոնը մանրամասն խոսում է
խոսքի կշռութի մասին, որին մենք առանձին դեռևս կան-
դրադառնանք, բայց հենց այստեղ նա նշում է պարբերութի մի
այլ առանձնահատկությունը, որը ոչ ոք նրանից առաջ չի
նկատել: Նա գրում է. «Չէ՞ որ հենց պարբերութի, որի մասին
մենք բազմաթիվ անգամ խոսեցինք, պայմանավորւած է
կշռութիով, ընթանում է և ավելի ու ավելի ցած է իջնում արագ
թափով, մինչև չի հասնում վերջին և չի դադարում»²: Պար-
բերութի կշռության և հնչերանգային տեսանկյունից իսկա-
պես բաժանւում է երկու հակադիր մասերի՝ բարձրացող և
իջնող: Ահա Կիկերոնը, ճիշտ է, ոչ պարզորոշ, բայց նշում է
նաև այդ հանգամանքը, որ իսկապես պարբերութի էական
հատկանիշներից մեկն է:

Կիկերոնը խորանալով խոսքի կշռութի, հնչերանգային
խնդիրների մեջ, բացահայտում է նաև պարբերութի
մի այլ կարևոր հատկանիշ. ըստ Կիկերոնի, պարբերութի
պետք է շարադասվի կառուցիկ և ոչ թե անկարգ նետվի: Սո-
վորաբար կարծում են, ասում է նա, որ պարբերութի սկզբի
և վերջի մասերը պետք է պահպանեն շափակցություն, իսկ
շատերն էլ ենթադրում են, թե կշռութիավոր պետք է լինի մի-
այն եղրափակիչ մասը, միայն արտահայտության վերջը:
Ճիշտ է, պատասխանում է նա, կշռութիավոր պետք է լինի
դերադանցապես վերջին մասը, բայց այն մենակ չէ, պետք է
ամբողջ պարբերութի լինի կառուցիկ: Բայց քանի որ լսողու-
թյունը լարված սպասում է եղրափակող բառերին և հանդըս-
տանում է այդտեղ, ուստի հենց այդ վերջին մասերի ան-
կշռութի լինելը անթույլատրելի է: Պարբերութի, սակայն,
պետք է հենց սկզբից ուղղություն վերցնի դեպի այդ վերջը,
և ամբողջ իր ընթացքին ակունքից հոսի այնպես, որ մոտենա-
լով վերջին, ինքն իրեն դադարի»³: Ուրեմն Կիկերոնը սահմա-

¹ Նույն տեղում, էջ 242:

² Նույն տեղում, էջ 248, 251:

³ Նույն տեղում:

նում է պարբերութի մի այլ հատկանիշ ևս, այն, որ պարբերութիւնը պետք ունենա որոշ շափակցութիւն, կառուցվածքային համաչափութիւն, մասերի դասավորման կարգավորութիւն: Պարբերութի այս հատկանիշը ևս ընդունվում է ժամանակակից ուսումնասիրողների կողմից:

Դեմետրիոսը պարբերութի մասերի ու անդամների մասին նշում է՝ «Արիստոտելը այսպես է սահմանում կոլոնը. կոլոնը պարբերութի երկու մասերից մեկն է, իսկ հետո ավելացնում է՝ լինում է նաև պարզ պարբերութի: Այսպիսով սահմանում է. մեկը երկու մասերից ասելով, նա ահնհայտորեն նկատի է առնում, որ պարբերութիւնը պետք է կազմվի երկու կոլոնից: Կարճ պարբերութիւնները կազմված են երկու կոլոնից, ամենաերկարները՝ չորսից: Չորսից ավելի կոլոնը անցնում է պարբերութի շափերից: Կան պարբերութիւններ, որոնք կազմված են երեք կոլոնից և նույնիսկ մեկից: Վերջինը կոչում են պարզ պարբերութի: Եթե կոլոնն ունի մի հայտնի երկարութիւն և վերջում կլորանում է, ապա ստացվում է պարզ պարբերութի՝ բայց միայն երկարութեան և վերջում կլորութեան առկայութեամբ, իսկ սրանցից մեկնումեկով պարբերութի չի ստացվի»¹:

Ինչպես նկատելի է, Դեմետրիոսը ցանկանում է ճշտել Արիստոտելին, ասելով, որ պարբերութիւնը պետք է երկու կոլոնից բաղկացած լինի, սակայն վերջում ինքն էլ ենթարկվում է Արիստոտելի ազդեցութեանը և ընդունում նաև պարզ պարբերութի, որ կազմվում է մի կոլոնից, մի վերապահութեամբ, որ այն պետք է ունենա որոշակի երկարութիւն և կլորութիւն (ավարտունութիւն, փակվածութիւն):

Հույները որոշում են նաև կոլոնի (պարբերութի մասի) բմբռնումը: Նույն Դեմետրիոսը գրում է, թե Արիստոտելը Արիստոտելի սահմանումին միացնելով և նրա լրացումը, տալիս է հետևյալ ավելի պարզ ու լրիվ սահմանումը. կոլոնը կա՛մ պարզ պարբերութի է, կա՛մ բարդ պարբերութի մաս:

¹ Նույն տեղում, էջ 239:

Անտիկ ուսումնասիրողները, հատկապես Կիկերոնը, մամ-
րամասն խոսում են պարբերության և առհասարակ արձակ
խոսքի կշռության ու շափերի մասին, բայց առայժմ այդ հարցը
մեզ չի հետաքրքրում: Որպեսզի ընթերցողը պարզ պատկե-
րացնի, թե վերջապես ըստ անտիկ մտածողների ինչ է պար-
բերությւթը և ինչ հատկանիշներ ունի, ընդհանուր հայտարարի-
բերենք վերը ասվածը: Պարբերությւթը բառերով արտահայտ-
ված մի դարձված է, որ ունի սկիզբ և վերջ: Ամեն նախադա-
սության էլ ունի սկիզբ և վերջ. այս սահմանումի տակ նրանք
հասկանում են այնպիսի սկիզբ ու վերջ, որ փակվածություն,
կլորացվածություն, ավարտունություն է: Գուցե տալիս, այ-
սինքն մի որոշակի կետից սկսվում է և ավարտվում փակ-
վածությամբ: Հիմնականում պարբերությւթը պետք է երկու կամ
ավելի մասեր ունենա, բայց չորսից չպետք է անցնի. չորսից
ավելի մասերը պարբերությւթը ճապաղեցնում են, կորչում են
կշռության ու համաչափությունը: Պարբերությւթը պետք է ունե-
նա համաչափ ու կանոնավոր շարադասություն, մասերի նը-
ձան անդամները պետք է տեղադրվեն համապատասխան տե-
ղերում, և մասերը միմյանցից շատ երկար ու կարճ չպետք է
լինեն. ըստ այս պայմանների, պարբերությւթը պետք է նաև
կշռությւթավոր լինի: Ծիշտ է, անտիկ մտածողները ընդունում
են նաև միամասնյա պարբերությւթ, բայց այս վերջինը ունե-
նալու է անհրաժեշտ երկարություն և ավարտուն փակվածու-
թյուն: Ահա այն ամենը, որոնցով հին աշխարհի գիտունները
պարբերությւթը տարբերում են սովորական նախադասությու-
նից:

A^{II}
42131



ՊԱՐԲԵՐՈՒՅԹԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ ՀԱՅ ՀԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏՈՒՄ

Հայերը գիր ու գրականություն ստեղծելուց հետո բուն հետաքրքրություն են հանդես բերում այն ամեն գիտությունների նկատմամբ, որոնք առաջացել ու զարգացել էին անտիկ աշխարհում՝ հատկապես Հունաստանում: Գիտությունն ու գրականությունը նկատելով իբրև իրենց կյանքի գլխավոր խորհուրդը, հայերը չէին կարող անտես առնել ճարտասանությունը, գրականության տեսությունը, որ այնքան զարգացել էր անտիկ աշխարհում: Մեսրոպի հիմնած դպրոցներում իսկ աշակերտներին սովորեցնում էին ճարտասանություն, երկ ստեղծելու կանոնները, նրանց վարժեցնում էին գործնական շարադրություններով: Միջին դարերում ճարտասանության արվեստը ավելի է զարգանում: Մ. Աբեղյանը գրում է. «Միջնադարյան դպրոցներում «պիտույք» հունական *ῥητορικὴ* բառով կոչում էին այն ճարտասանական կամ բանահյուսական վարժությունը, որով մի խմաստնալից ասացված ու խոսք կամ որևէ անձի պատմություն ու արարք ընդարձակում, աճեցնում էին այս կամ այն եղանակով ու կանոններով և կազմում էին մի ընդարձակ ճառ կամ «բան»: Այդ ճարտասանական վարժություններն իրենց կանոններով նույնիսկ մեր գրականության սկզբներում աշխատել են մտցնել մեր մեջ թարգմանիչները: Հայտնի է Խորենացուն վերագրված «Պիտույից դիրքը», որի մեջ բացի կանոնների բացատրություններից կան

նաև օրինակներ «հրահանգիցն աղագաւ առ մանկունս»¹։ Հիշյալ գիրքը, որ վերագրւում է Խորենացուն, ժամանակակից տնվանումով ասած, գրականության տեսության դասագիրք է, որտեղ շարադրւած են տարբեր տեսակի երկերի առանձնահատկությունները և դրանք գրելու կանոնները։ Բայց նրանում պարբերույթի մասին հիշատակություն չկա, ուստի անհրաժեշտ չէ այս առիթով այն վերլուծել։

Հետագայում էլ հետաքրքրությունը ճարտասանական արվեստի հանդեպ միշտ վառ է մնում. որն է նշանակալից երկ այդ հարցերի մասին հայ գրականության մեջ անարձագանք չի մնում։ Թարգմանւում է Բէովնի «Յաղագս ճարտասանութեան» գիրքը և այլ գրքեր, որոնցից շատերը մեղ չեն հասել։

Մեր մատենադարանում պահպանւում են ավելի քան 25 ձեռագրեր, որոնք վերաբերում են ճարտասանության ու բանահյուսության։ Դժբախտաբար դրանք ուշ շրջանի ձեռագրեր են և XVII դարից այն կողմ չեն անցնում։ Այս դեռ ոչինչ ձեռագրերով հնարավոր չէ պարզել, թե այդ աշխատությունները ինչ աղբյուրներից են ծագում, ովքեր են դրանց հեղինակները և որ ժամանակաշրջանից են։

Միակ ձեռագիրը, որի հեղինակի մասին տեղեկություն է տրւում, գրւած է 1733 թվականին։ Այդ աշխատությունը վերնագրւած է «Համառօտութիւն ճարտասանութեան» և պահպանւում է 875 համարի տակ։ Այդ նույնը բառացի և ստույգ արտագրությամբ գտնում ենք №№ 8333, 3610 ձեռագրերում։ Այս աշխատությունը ամփոփ և հմտորեն կազմւած ճարտասանության դասագիրք է, որ վերագրւած է Մխիթար Սեբաստացուն։ Սրանից ավելի քան մի հարյուր տարի առաջ կա ճարտասանության մասին տպագրւած գիրք, բայց տվյալ դեպքում մենք այս համառոտ տեղությունը տալիս ենք ոչ ըստ ժամանակագրության, այլ աշխատության կարևորության համապատասխան։ Սկսենք հենց Սեբաստացուն վերագրւած

¹ Մ. Արեղյան, Հայ հին գրականության պատմություն, հատ. I, Երևան, 1944, էջ 273։

ձեռագրից: Նշենք նաև, որ պարբերույթի համար անխտիր կիրառվում է պարբերութուն բառը, մի ձեռագրում միայն կա շրջաբերութուն:

Հիշյալ ձեռագրերը պարբերույթը սահմանում են այսպես՝ «Պարբերութունը մի խոսք է, որի շուրջը բառերը շաբակարգվում են շրջաբերաբար կամ բոլորակաբար այնպես, մինչև, որ մի ամբողջ ասացված կամ իմացված ավարտուն է դառնում»¹. օրինակ՝

Նա որքանիցս խնամարկեցաւ, այնքան խանդարեցաւ, որչափ սիրեցաւ, այնքան դաղջացաւ, որքան խրատեցաւ, այնքան ստահակեցաւ, որքան յանդիմանեցաւ, բայց ոչ երբեք զգաստացաւ, ձաղեցաւ, սակայն ոչ զգօնացաւ, շողորթեցաւ, այլ ոչ շահեցաւ, — վասն որոյ ըստ արժանւոյն և իրաւամբ բացամերժեցաւ:

Բերված օրինակը կատարյալ պարբերույթի ցուցադրութիւն է, իսկ սահմանումը պարզապես տրված է հույների հետևողութեամբ, որոնք պարբերույթը նմանեցնում են շրջանի կամ շրջանաձև վաղբի, որը սկսվում է մի կետից և վերջանում է նույն կետում՝ կազմելով շրջան կամ օղակ: Նույնիսկ եթե փորձենք տվյալ օրինակի միջոցով շրջաբերաբար կամ բոլորակաբար (շրջանակաձև, կլոր) հասկացողութիւնները բացատրել, դժվար կլինի, որովհետև շրջանակաձև կամ օղակաձև պարբերույթը այս վերջինիս մի տեսակն է, որի մասին կխոսվի առանձին: Այստեղ պարզ ու մեկին այն է, որ պարբերույթը մի վերջացած, ամբողջացած արտահայտութիւն կամ միտք է:

Ըստ ձեռագրի բացատրութեան պարբերույթը ավարտուն է դառնում, երբ տվյալ առարկայի մասին այլևս ասելիք չի մնում, այսինքն՝ բոլոր կողմերից առարկան բնութագրվում է: Բերված օրինակը պարբերույթ է, որովհետև սպառիչ կերպով տալիս է անկատար և մերժված մարդու բնութագիրը:

¹ Սահմանումները և բացատրութիւնները բերում ենք թարգմանաբար, իսկ օրինակները թողնում ենք գրաբար:

Երբ դրանից հետո խոսքը անցնում է այլ նյութի, կազմվում է նոր պարբերույթ, իսկ եթե այս նորը կցվում է նախորդին, առաջանում է բաղմաղան (բարդ) պարբերույթ. օրինակ՝

Եւ յայսմանէ հետեւեցաւ ինքեան զրկումն յիմաստից ստանալեաց և մոռացումն գիտութեանց շահեցելոց, կորուստ մեծաջան աշխատութեանց և ունայնացումն բաղմամեայ բրտանց, հեռացումն ի հանդարտ կենաց և ներանկումն ի վշտահոծ կեանս աշխարհական վարուց:

Ուրեմն եթե այս օրինակը վերջից կցենք նախորդ օրինակին, կստանանք, իր բառով ասած՝ բաղմաղան պարբերույթ:

Պարբերույթի մասերը երկուսն են՝ անդամ և հատված: Անդամը այստեղ հասկացվում է իբրև մաս, իսկ հատվածը՝ իբրև այդ մասի անդամ: «Անդամն է մասն պարբերութեան կամ գիտաւորութիւն իմն թուով շարափակեցեալ», ուրեմն՝ անդամը նախադասություն է, որ թվով է ամփոփված, բայց այնպես կատարյալ չէ, որ խոսքի ամբողջ միտքը բմբռնվի. դրա համար ինքնին կատարյալ միտք չի արտահայտում. օրինակ՝

Թէև ազնուութիւն տեղոյ, բարեխառնութիւն օդոյ, բաղմութիւն կարկաշահոս աղբերաց, համեղ, սառնատեսակ ջուրց առատութիւն, ամենից տեսակաց բարեաց և բեղմնաւորութիւն անդաւտանաց և պարտիզաց քաղաքին ձերոյ հաճոյ թուեցիր:

Ահա, ըստ ձեռագրի, պարբերույթի մի անդամը, որ սակայն նպատակակետին չի հասցնում, եթե չկցվի նաև մյուս անդամը, ինչպես՝

Սակայն բնակակցիլն ընդ անօրինաց, ստորանկումն նոցունց բռնութեանց, լսելն զձայն գովասանութեան անուան կարապետի նեռան և տեսանելն զայնքան բաղմութիւն հայհոյարանաց մզկթաց այնքան զղուեցուցանէ զիս, մինչ զի և յիշումն քաղաքի ձերոյ գարշելի թուի ինձ:

Իսկ հատվածը անդամի մասն է կամ նախադասություն է, որ թվով չի ամփոփվում և ըստ նշանակության անկատար

է (թվով ամփոփվել = մասերի բաժանվել). օրինակ՝ ոչ միայն հպարտք, ազատ, որկրամուկ և բամբասողք: Այս բոլորը ոչ միայն-ով կապված մի ամբողջութիւնն են կազմում և թիվ չունեն:

Ձեռագիրը պարբերութի համար տալիս է նաև ոճաբանական ցուցում: Պարբերութիւնը այնպես պետք է կառուցվի, որ վայելուչ և հարթ լինի, ինչպես որ հղկած քարով շարված պատերը տեսքով հաճելի են և շափակցված: Ներդաշնակ և համահավասար բառերից կազմված պարբերութիւնը այդպես ախորժելի է. օրինակ՝

Եթե ոչ էիր խնդրեալ, ոչ տայր, եթէ ոչ էիր բաշխեալ, ոչ բանայր, եթե ոչ էիր ջերմասէս արտասուեալ, ոչ գթայր... և այլն: Իսկ եթե այսպես լինի՝

Եթէ ոչ էիր կամեալ, ոչ տայր, եթէ ոչ էիր ծուլացեալ ի բախելոյ, ոչ բանայր, և եթէ ոչ էիր արտասուահեղ եղեալ, ոչ գթայր... կդառնա անհարթ, որովհետև մի անդամի բառերը չեն շափակցված մյուս անդամի բառերի հետ, իսկ որոշ բառեր էլ ծանրալուր են, երկար. օրինակ՝ կամեալ և արտասուահեղ բառերը: Չպետք է նաև պարբերութիւնը հանգավոր դարձնել, այդ դեպքում ճարտասանական խոսքը կլինի տաղաչափական (տե՛ս ձեռագիր №№ 3610, էջ 47 բ-ից 51բ, 8333, էջ 275-ից 287):

Համարյա նույն ձևով են բնութագրում պարբերութիւնը №№ 2282 և 7246 ձեռագրերը, որոնք բառացի նույն նյութն են պարունակում: Առաջինի թվականը հայտնի չէ, իսկ երկրորդը գրված է 1741—1747 թվականներին: Ըստ այս երկու ձեռագրերի, պարբերութիւնը կոչվում է շրջաբերութիւն, որ լրիվ ավարտված խոսքի շրջանակավորում է («շրջաբերութիւն է պարառութիւն խոսից համավճարեցեալ»), կամ նախադասութիւն է («գիտաւորութիւն»), որ լրիվ միտք է արտահայտում. օրինակ՝

Թէև իսկապես տեսեալ իցէ զհայր քո, սակայն ոչ ճանաչէի զնա զոյ հայր քո, որովհետև կանխապես չեմ գիտակ նմա (տե՛ս էջ 81, իսկ երկրորդ ձեռագրի՝ էջ 72բ):

Սրանք նույնպես պարբերույթը բաժանում են անդամներին, անդամները՝ հատվածներին: Երբ բաղմաթիվ հատվածներ բարդվում են միմյանց հետ, դա կոչվում է հատվածորեն խոսել. օրինակ՝

Սիրել զիրեարս, սրբել զմիտս, մաքրել զհոգիս, հնազանդել զկամս, խրատել զստահակս, կանգնել զանկեցեալն, սաստեալ զսարտուցեալս, զերծեալ զգերեցեալս՝ յաւէտ պարտ է մեզ:

Երբ շատ անդամներ են բարդվում միասին, դա էլ կոչվում է անդամապէս խոսել. օրինակ՝

Եթէ ուսուցեալ էի անդգամաց զիմաստութիւն և անսուցեալ էի բանից շարագործաց, վնասեալ էի անձանց միամտաց և հարկեալ էի զուսումն անկարողաց, արդեօք մեղադրելի էի ի բաղմաց:

Երբեմն էլ էրբ շատ շրջաբերություններ (պարբերույթ) միասին են բարդվում, դա էլ կոչվում է շրջաբերապէս խոսել: Սրա համար էլ ձեռագրերը տալիս են հետևյալ օրինակը.

Եթէ բանից իմոց անսացեալք էիք դու և աշակերտք քո, արդարեւ ոչ անկանէիք այդքանիցս ի վտանգ հոգւոյ: Եթէ գալուստն իմ լեալ իցէր ձեզ օգուտ և այս յայտնի իսկ է, զի զոտն իմ ոչ արգելուի դալ առ ձեզ միշտ: Թէև բաղմիցս բարոյութիւն քո համեղացուցեալ էր զիս, սակայն հերձուածողութիւն քո այնքան դառնացուցեալ է զհոգի իմ, մինչ զի ոչ կարեմ հայիլ յերեսս քո:

Նկատենք սակայն, որ նախորդ երեք ձեռագրերը նույնպես նշում են հատվածորեն, անդամապէս և պարբերութեապէս առված խոսքերի մասին և նույնպես բերում են համապատասխան օրինակներ:

XIX դարում գրված № 5760 տակ պահվող մի ձեռագիր պարբերույթի մասին խոսում է այսպես. ըստ ճարտասանական սահմանումի պարբերույթը մի համառոտ և լրիվ խոսք է, որ բաղկացած է միմյանց հետ կապակցված, բայց տարբորոշ անդամներից կամ մասերից:

Պարբերույթը լինում է երկու տեսակ՝ բնական և արվեստական: Բնական է համարվում այն պարբերույթը, որը զար-

դանում է ըստ նյութի պահանջի ու հանգամանքների: Իսկ արվեստականը այն է, որի մասերը ըստ երկարության ու կարճության ներդաշնակվում են, հասվածները շարադասվում են համաչափ ու վայելուչ (տե՛ս էջ 57բ):

Պարբերութի մասին ամենահին հիշատակությունը արել է Հովհաննես Հոլով Վանանդեցին «Համառոտութիւն Հարտասանական արուեստի» աշխատության մեջ 1674 թվականին: Դրանից հին նշում ոչ մի տեղ չենք գտնում: 1711 թվականի մի հրատարակություն, որ կրում է «Համառոտական իմաստասիրութիւն» խորագիրը, պարբերութի բնութագրում է այսպես. «Պարբերութիւն շուրջ բերութիւն և բանից շրջաբերութիւն: Երբ կատարեալ իմացուած լինի, շրջաբերութիւն դադարի: Զի այնու բանք շրջաբերին, զի իմացուածք կատարիցին: Ուրեմն այնքան բանք պարբերին, մինչև իմացմունք կատարիցին, որդան եթէ աստ ասիցի, այս պարբերութիւն շինիցի: Եթէ ոք Աստուած սիրիցէ և զպատգամս պահիցէ, նա եղիցի այր պատուական, ընտիր, ազնիւ, հաճոյական: Ահա այս է պարբերութիւն, զի կատարեալ իմացութիւն: Պարբերութիւն ի յանդամոց և միջաբար ի հատուածոց, շինի, լինի և բաղկանայ և շարադրեցեալ դոյանայ: Անդամ մասն է պարբերութեան, բաղկացուցիչ շուրջ բերութեան: Ուստի անդամ բան անկատար, զի է իմացուած անկատար: Հատուածք էն մասունք անդամոց և անկատար իմացուածոց» (տե՛ս էջ 85):

Ինչպես նկատում է ընթերցողը, թե՛ ձևագրերը և թե՛ տպագիր հրատարակությունները նպատակ չունեն պարբերութի մասին մանրամասն ու գիտական վերլուծություններ տալու: Ճշմարտությունը այն է, որ ժամանակի գիտական ըմբռնումները դրանից այն կողմ չէին էլ անցնում: Յուրաքանչյուր հարցի մասին թուղիկ գաղափար է տրվում, որպեսզի աշակերտները իմանան Հարտասանության տարբեր խնդիրների մասին և շարադրություններ գրելիս օգտագործեն սերտած կանոնները:

Բացի ուսուցողական նպատակներից Հարտասանական արվեստը օգտագործվում էր քարոզչության մեջ: Քարոզներն

ու ճառերը կազմվում էին հիշյալ կանոնների համապատասխան, օգտագործվում էին գեղեցկախոսության հնարները՝ լսողներին գրավելու համար:

Ճարտասանական արվեստը մասամբ ստանում էր նաև գիտական նշանակություն և նպատակադրություն: Հայ գիտունները կարգալուծ մեթոդապական հեղինակների գործերը և դրանք համեմատելով հույն և լատին գրողների գործերի հետ, նկատում էին լեզվաոճական ու այլ կարգի ընդհանրություններ. և որովհետև հույն ու լատին հեղինակների լեզվաոճական այդ հատկանիշները ուսումնասիրված ու ցուցադրված էին այլևայլ տիպի գրքերով և ուսումնասիրություններով, և հատկապես վեր էին հանված նրանց ճարտասանական արվեստի առանձնահատկությունները, հայ գիտունները նույն ձևով ուսումնասիրում էին հայերենի հիշյալ հատկանիշները և դրանք ցուցադրում էին հայերենի օրինակներով: Այս կարգի գիտական ուսումնասիրությունների մեջ առանձնապես աչքի է ընկնում Ստեփանոս Ազոնցի «Ճարտասանություն բովանդակեալ ի հինգ գիրս» աշխատությունը, որը լույս է տեսել 1775 թվականին: Այս գիրքը կարող է մրցել ժամանակի եվրոպական ու ռուսական ճարտասանական ցանկացած ձեռնարկի հետ: Բովանդակությամբ հարուստ, օրինակներով ճոխացված, գիտական բացատրություններով հագեցված հիշյալ ձեռնարկում հանգամանորեն ուսումնասիրված է պարբերությամբ:

Ազոնցը ասում է. պարբերությամբ ըստ ճարտասանների սահմանումի, համառոտ, բայց լրիվ խոսք է, որ բաղկացած է տարրորոշ մասերից կամ միմյանցից կախված սինդաժմներից, որոնք կապակցվում են շաղկապներով: Հենց այստեղ նա բերում է Արիստոտելի սահմանումը. պարբերությամբ այնպիսի խոսք է, որ ունի սկիզբ ու վերջ և սահման ունեցող հեծություն է: Ազոնցը նշում է, որ Արիստոտելի և իր սահմանումները նույնանում են, որովհետև այն մեկից է, որի մասին խոսում է Արիստոտելը, ոչ այլ ինչ է, եթե ոչ պարբերությամբ առաջին անգամը, որ պետք է առկա թողնել, որպեսզի անհրաժեշտորեն այլ անգամներ հետևեն նրան: Իսկ վերջը պար-

բերուլթի վերջին անդամն է, որ որոշ սահմանափակությամբ և բառերի ամփոփիչ շրջափակումով (սլարառությամբ) սլարագրում և ձևավորում է պարբերուլթը. հենց այդ սլարագրումը (կլորացումը) հնարավորությունն է ընձեռում մի հայացքով հեշտ ըմբռնելու:

Պարբերուլթը սահմանավոր մեծությունն է, ըստ Ազոնցի, որովհետև ունի և միջոց, որն ընկնում է սկզբի և վերջի միջև: Պարբերուլթը պետք է չափավոր լինի. եթե այն շատ երկար եղավ, խիստ կճապաղվի խոսքի բովանդակությունը. սլարբերուլթը չպետք է նաև համառոտվի: Ըստ Ազոնցի պարբերուլթը պետք է երկու անդամ ունենա: Մեկ անդամը չի կարող սլարբերուլթ կազմել: Քերականների համար, ասում է Ազոնցը, ամեն մի խոսք, որ իմաստ է արտահայտում և վերջացած է (լրիվացած)՝ սլարբերուլթ է, իսկ ճարտասանների համար այդպես չէ. նրանք, բացի իմաստից, պահանջում են անդամներ և սահմանված մեծություն:

Ազոնցը սլարբերուլթը բաժանում է երկու տեսակի՝ բնական և արվեստավոր. բնականը այն է, երբ խոսքը կարգավորվում է ըստ առաջադրված նյութի հանդամանքների. երբեմն հատվածորեն և երբեմն անդամներով, ու բառերի քանակի և շարադասության մեջ ոչ մի մասնակի եղանակ չի ստեղծվում, այլ սլարբերուլթը ձգվում է, որքան կարիքը սահանջում է. այսպիսի սլարբերուլթը ըստ Ազոնցի կոչվում է շարունակ (անմիջապես իրար կապակցված) կամ պատմական: Իբրև օրինակ բերվում է հետևյալ նախադասությունը՝ «Իսկ արք ոմանք ի թշնամեացն յայնցանէ, որ շուրջն կային, տեսեալ ի սրբոց անտի մանուկ մի զուարթատեսիլ և գեղեցիկ երեսօք Միքայել անուն, յաշխարհէն Գուգարաց, որոյ չէ ևս էր փաղփաղեալ բողբոջեալ մրադիր բոյսք մօրուացն ընդ ծնօտան . և իբրև մարդասիրելի ի նախակացեալ և բուռն հարեալ զնմանէ յինքեանս կորզեալ ձգէին, զի մի ընդ ալլան և նա կորիցէ»: Ահա, ասում է Ազոնցը, այս նախադասությունը մի ամբողջ սլարբերուլթ է, թեպետև գեղեցիկ ու կանոնով է հյուսված, բայց չունի բառերի ու անդամների յուրահատուկ

շարադասական ձև, սուտի շկա նաև բառերի պարափոխումն (շրջանաձևություն):

Իսկ արվեստավոր պարբերությւթը այդպես չէ, ասում է Ա.գոնցը. այս դեպքում բառերի երկարությունն ու կարճությունը չափվում է ըստ արվեստի, որոշվում է նրանց դիրքն ու դասավորությունը, հատվածների հանգամանքները. համառոտ ու ընդհատ չի մնում խոսքը, այլ ձևավորվում է և սահմանադատվելով շրջափակվում (կտրանում է) վայելուչ ու գեղեցիկ ձևավորվածությունամբ, կամ ավելի լավ է ասել՝ այն միահյուսվում է ներդաշնակությամբ. օրինակ՝

«Յայնժամ որ վարանէրն գաղտնի սկզբնաշարն թշնամին, ծանուցեալ թե մեքենայքն իւր խայտառակեցան, տինդերք աստուածապաշտութեամբն ծաղկեցան, պատրեալքն դարձեալ փրկեցան, ժառանգորդք դրախտին ի հայրենիսն փութացան, երկրաքարշ հեշտութիւնն տեղի ետ և երկնային սրբութիւնն պայծառացաւ, գործի ատելութեանն խորտակեցաւ, պտուղ սիրոյն սկսաւ բաղմանալ, յոյսն ամենեցուն ի ստորնայնոցս վերացաւ և յերկնային կայանն հանդեաւ, արտաքս սողէր յորջէն շարութեան, իբրև զառիւծ գոշելով շրջէր բացեալ զկոկորդ շարութեանն. ջանացեալ առ ի կլանել զեկեղեցին փրկեալ Քրիստոսիւ» (Լամբրոնացի): Բերելով այս ընդարձակածավալ պարբերությւթային խոսքը, Ա.գոնցը ավելացնում է, թե ահա այս է արվեստավոր պարբերությւթը, որի մեջ ամեն բառ չափով ու կշռով է դասավորված. եթե սրանց մեջ որևէ փոփոխություն մտցվի, վերուվայր կխորտակվի բառերի շրջանաձևությունը:

Եթե Ա.գոնցի հայտնած մտքերը համեմատենք հին աշխարհի գիտունների արտահայտած մտքերի հետ, կնկատենք մասնակի տարբերություններ: Ա.գոնցը պարբերությւթը ըստ իր կառուցվածքի և անդամների ներքին դասավորության երկու տեսակի է բաժանում. ըստ էության այս բաժանումը որոշ վերապահությամբ պետք է ընդունել: Մենք տեսանք, որ Կիկերոնը պարբերությւթի համար պահանջում էր համաշափություն և կշռույթ: Ա.գոնցի արվեստավոր պարբերությւթը վերջի-

վերջո հենց այդ համաշափ ու կշռույթավոր պարբերույթն է։ Այժմ պարբերույթի ըմբռնումը փոխվել է։ Նրա բովանդակությունն ու ձևը սահմանվում են այլ շափանիշներով ու գիտական պահանջներով. այնպես որ եթե հույները և լատինները միայն Ագոնցի ասած արվեստավոր խոսքն էին պարբերույթ համարում, այժմ ընդունվում է նաև բնական պարբերույթը, բայց այլ մոտեցումով, որի մասին կխոսվի առանձին։

Ագոնցը մաշխարհիկ խոսում է նաև պարբերույթի մասերի վերաբերյալ։ Նա ասում է, որ պարբերույթը իբրև կատարյալ մարմին բաղկացած է մասերից. դրանցից խոշորները կոչվում են անդամներ¹, իսկ փոքրերը՝ հատվածներ։ Ըստ նրա, անդամը պարբերույթի մասն է, որ շնայած իմաստունի և քանակ, բայց երկուսն էլ (ուրեմն նա պարբերույթի համար երկու մաս է ընդունում) անկատար են ամբողջական նշանակության և թվի համեմատության տեսանկյունից. օրինակ՝ «Զի որպէս քան զսերմանելն ժողովելն է ախորժելի, նույնպէս և ամենայն սերմանց Քրիստոսի խորհրդոցն ի յայսմ աւուր պտուղն կթի»։ Այստեղ կա երկու անդամ (այսինքն՝ մաս)։ իսկ ըստ նրա, հատվածը անդամի մասն է, որ ինքնին թեպետև ունի ինչ-որ նշանակություն, բայց թիվ չունի. օրինակ՝ ոչ ոք անիրաւ, ոչ ոք շարագործ, ոչ ոք վրիպեալ, ոչ ոք սխալեալ, ոչ ոք ամաշեցեալ, ոչ ոք դատապարտեալ, ես միայն եմ և այլ ոչ ոք (Նարեկ, ՀԲ)։ Այս օրինակը իբրև պարբերույթ, ըստ Ագոնցի, երկու անդամից (մասից) է կազմված, իսկ այդ անդամներն ունեն իրենց հատվածները, որոնք թիվ չունեն (դրանք միմյանց հետ են թիվ կազմում)։

Երբեմն, ասում է Ագոնցը, անդամները (մասերը) խառնրվում են հատվածներին, որով նույն խոսքը լինում է միաժամանակ և՛ անդամ, և՛ հատված։ Անդամների ու հատվածների տարբերությունը Ագոնցը սահմանում է հետևյալ կերպ.

¹ Ագոնցի դորժածած անդամ բառը նշանակում է մաս, իսկ հատվածը այժմյան ըմբռնումով անդամ է։

անդամը թեպետ ունի իմաստ ու թիվ, որոնցով նա որոշ առումով մոտենում է պարբերության, սակայն թե՛ իմաստը և թե՛ թիվը անկատար են ամբողջ պարբերության իմաստի ու թվի համեմատությամբ. իսկ պարբերության մեջ այդ երկուսն էլ կատարյալ են ու լրիվ: Նույնպես էլ հատվածը թեպետև ունի իմաստ, բայց թիվ բոլորովին չունի: Պետք է ենթադրել, որ հատվածի իմաստն էլ անկատար է անդամի իմաստի համեմատությամբ:

Ինչպես նկատելի է, Ագոնցը պարզ պատկերացում ունի պարբերության մասերի և նրանց անդամների մասին: Իսկպես իսկական պարբերության կազմվում է երկու մասերից, որոնք առանձին ունեն իրենց անդամները: Միայն Ագոնցը չի բացատրում, թե ինչ հիմունքով է պարբերության բաժանվում երկու մասի:

Ագոնցը տալիս է նաև պարբերության կառուցելու պայմանները. նա ասում է՝ պարբերության ունի երեք պայման. առաջինը այն է, որ պարբերության անդամները պատշաճ հեռավորությամբ հարմարապես միմյանց են հյուսվում ներդրծությամբ և զործությամբ. այլապես պարբերության չի լինի, ավցրիվ ու ճապաղ խոսք, ինչպես ասում են՝ ավազ առանց կրի: Երկրորդ պայմանը այն է, որ մասերը չպետք է ունենան լրիվ ու ամբողջական նշանակություն, եթե դեռևս ավարտված չեն անդամները: Եթե յուրաքանչյուր անդամ անկախ մյուսից ունենա լրիվ ու ամբողջական նշանակություն, իսկական ճարտասանական պարբերության չի ստացվի: Երրորդ պայմանն այն է, որ պարբերության բազմաթիվ բառերի շրջանակումով բովանդակություն ստանա: Ինչպես ասվեց՝ պարբերության պահանջում է սահմանավոր (հատվածական) մեծություն, թիվ (այսինքն՝ մասեր). եթե նրա մեջ չլինի բազմաթիվ բառերի կլորացում՝ շրջանակավորում (պարաօություն), պարբերության չի դոյանա:

Պարբերության մասերի վերաբերյալ խոսելով, Ագոնցը ասում է ունենա երկուսից ոչ պակաս և չորսից ոչ ավելի անպետք է ունենա երկուսից ոչ պակաս և չորսից ոչ ավելի ան-

դամ. շորս անդամը կատարյալ պարբերությի սահմանն է:
Այստեղից պետք է եզրակացնել, թույլ է նա, որ կա երեք
տեսակ իսկական պարբերությ՝ երկանդամ, եռանդամ, քա-
ռանդամ: Իբրև երկանդամ պարբերությի օրինակ նա բերում
է հետևյալ բարդ համադասական նախադասությունը. «Փոքր
ինչ ի տնօրինութեան մահուն մեկնեցայ | և երկունք որպէս
պղծնդկանի պաշարեաց զիմ աշակերտս» (Լամբրոնացի):

Եռանդամ պարբերությի օրինակ. «Քանզի այն, որ արտը
զմարդն ի պատկեր բարերարութեան իւրոյ բարի (և ետես զնա
ի նախանձուէ բանսարկուին դաւաճանեալ և մեռեալ) ըստ
արդար իրաւանցն ոչ կամեցաւ զպատրանօք ըմբռնեալ թողուլ
ի ձեռս որսողին» (Լամբրոնացի):

Քառանդամ պարբերությի օրինակ. «Ծանիր զի եթէ ըստ
բնական կրիցն տկարանայ առ օրէնս իմ | անմեղադրելի է ի
պատուհասէն, զոր նա սահմանաւն ածէ ի վերայ նորին|,
իսկ եթէ օտար ի բնութենէ և եկամուտ ունի զայն արկածք,
զպարտողն յանդիմանեալ դատապարտեա և զնա ողորմու-
թեամբ և գթութեամբ նորոգեա» (Լամբրոնացի):

Ինչպես երևում է օրինակներից, Ազոնցի ըմբռնումով,
յուրաքանչյուր բարդ նախադասություն պարբերությ է: Սա-
կայն միայն Ազոնցը չէ այդպես կարծում. ինչպես տեսանք,
հին ուսումնասիրողները (ներառյալ Արիստոտել, Դեմետրիոս,
Կիկերոն և այլն) այդպես են մտածում, միայն պարբերությը
սովորական նախադասությունից տարբերակում են հնչերան-
գային, կշռությային և կառուցման որոշ առանձնահատկու-
թյուններով: Ազոնցը նույնիսկ բերում է միանդամ պարբե-
րությի օրինակ, որը Արիստոտելը կոչում է պարզ պարբե-
րությ: Նա բերելով միանդամ, հնգանդամ և այլ բաղմանդամ
կառուցվածքի բաղմաբարդ նախադասություններ, ավելաց-
նում է, որ կատարյալ պարբերությները երկանդամ, եռանդամ
և քառանդամներն են: Ըստ Ազոնցի այս է հին ճարտասան-
ների կարծիքը: Իսկ եթե պարբերությը բաղմանդամ է (հնգան-
դամ և այլն) և խոսքը գեղեցիկ է կառուցված, ամփոփ է ու
վայելուչ կկորացված, այդպիսի խոսքը նա կոչում է պարա-

առթյուն կամ պարբերական (պարբերութեան) խոսք՝ հեն-
վելով ճարտասանների տեսակետի վրա:

Ազոնցը գաղափար է տալիս նաև պարբերութի մասերի
վերաբերյալ. պարբերութի, ասում է նա, ունի երկու մաս՝
նախընթաց (առաջին) և հետևակ (հաջորդող): Նախընթաց
մասից կախված է հաջորդ մասը, իսկ հաջորդող մասը պար-
բերութի վերջն է, ուր նախընթաց մասը վերջանում է և կանգ
առնում: Նա կամենում է ասել, որ հաջորդող մասով փակ-
վում, եզրափակվում է նախորդ մասը: Իսկ ինչ վերաբերում
է պարբերութի թվին, որ նա նշել է մի քանի անգամ, ավե-
լացնում է, թե պարբերութի թիվը թվաբանական չէ, այլ բա-
ռերի ու հատվածների բարեհարմար համադրությունից է գո-
յանում. ավելի լավ է ասել, մի ներդաշնակություն է՝ հարմար
կապված ու միահյուսված երկար ու կարճ բառերից և ոչ թե
ձայնավորներից, որոնք երգերի և տաղերի համար են: Կարճ
և երկար բառերը այնպես պետք է դասավորվեն պարբերութի
մեջ, որ հաճելի լինի ականջների համար, և վայելուչ կերպով
աւարտվի մասն ու ամբողջ պարբերութի: Կարճ և երկար
բառերը պետք է շարադասել մեջընդմեջ և ոչ թե բեկոացնել
սկզբում կամ վերջում: Բառերը պետք է լինեն ընտիր ու վսեմ,
սեղմ ու մեղմ. հարթ ու հավասար լինելու համար պետք է
զգուշանալ ծանրալուր հնչյունների կուտակումից, անսովոր
բառերից, որոնք արատավորում են խոսքը:

1802 թվականին հրատարակվել է Եփրեմ Վ. Սեթյանի
«Ճարտասանութիւն վասն բարձրագոյն դասու» աշխատու-
թյունը: Մեր ձեռքի տակ են նույն գրքի 1832 և 1852 թվա-
կանների հրատարակությունները: Ազոնցից հետո, ուրիշների
համեմատութեամբ, պարբերութի մասին ավելի հանգամանո-
րեն խոսվել է այս գրքում: Ըստ Սեթյանի պարբերութի մի
այնպիսի խոսք է, որն ունի սկիզբ, վերջ և չափավոր ծավալ՝
զեղեցիկ հորինվածով ու բարեհնչունութեամբ՝ արտահայտելու
համար մեր խորհած միտքը: Պարբերութի (περίοδος, perio-
dus) ունի մաս (μέλος, membrum), անդամ (χόρυα, incisum):

Ըստ Սեթյանի այն պարբերութի, որ հատված չունի,

պարզ է. օրինակ՝ «Մենք չեմք բաւական մերձենալ յամենե-
ցունց պատճառն»։ Իսկ եթե անընդհատ չի ձգվում պարբե-
րույթը, այլ տեղ-տեղ դադար է տրվում միջակետով, կոչվում
է բաղադրյալ պարբերույթ։ Երկու միջակետերի մեջ ամփոփ-
վածը կոչվում է անդամ, իսկ եթե անդամները ստորակետով
մասնատվում են, դրանք կոչվում են հատված. օրինակ՝
«Գիտէք դուք ամենքին (հատված), յառաջ ժամանակաւ հա-
սեալ ձեր ի գործ պատերազմի (հատված), թէսկէտ և էր ձեր
սովորութիւն քահանայից հանապազորդել ի մէջ բանակին
(հատված), ի ժամ ձակատուցն յանձնեալ ձեզ նոցանէ աղօ-
թիւք (հատված), յամուր տեղւոջ ուրեք թողուիք զնոսա (վեր-
ջացավ անդամը)։ Իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և
սարկաւազունք և գրակարդացք իւրաքանչիւր կարգաւ կանո-
նաւն իբրեւ վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ
(հատված), կամին ընդ ձեզ յարձակել, հարկանել զթշնամիսն
ճշմարտութեան (պարբերույթ)»։

Բաղադրյալ պարբերույթը երկու տեսակ է. մի տեսակի
կառուցվածքը այնպես է, որ անդամները կախված են միմ-
յանցից և հնարավոր չէ հասկանալ ամբողջական իմաստը՝
մինչև պարբերույթը լրիվ չասվի. երկրորդ տեսակի մեջ ան-
դամները թեև շաղկապով կցված են միմյանց, բայց իրա-
րից անկախ են, և յուրաքանչյուր անդամ ունի ամբողջական
իմաստ։ Առաջինի համար իբրեւ օրինակ բերված է հետևյալ
նախադասութիւնը. «Եթե քաջն վարդան կասէր երբեք ի
մարտնչելոյ և յաղթելոյ, եթէ ոչ գեր ի վերոյ ամբարձնայր քան
զպայմանն մարդկեղէն բնութեան, եթէ քաջութիւն նորա և
իմաստութիւն ոչ խրախուսէր անպարտելի հաւատովք և սի-
րով, — յայնժամ զնա հաւասարէի ընդ Տիգրանայ և ընդ Վա-
հագնի»։ Իսկ երկրորդ տեսակի համար միևնույն օրինակը
փոփոխված է հետևյալ ձևով. «Քաջն վարդան ոչ ուրեք կա-
սեցաւ ի մարտնչելոյ և ի յաղթելոյ. գեր ի վերոյ ամբարձա-
նա քան զպայմանն մարդկեղէն բնութեան. քաջութիւն նորա և
իմաստութիւն խրախուսէր անպարտելի հաւատովքն և սի-
րով, — վասն այսր ամենայնի վեհագոյն դասեմ զնա քան

զՏիդրան և քան զՎահագն»¹։ Սեթյանը երկու անգամից պա-
կաս և շորսից ավել պարբերությք կանոնից դուրս է համա-
րում։

Պարբերությի մասին ընդարձակորեն խոսում է նաև Մ.
Սալլանթյանցը², սակայն նա նախադասությունն ու պարբե-
րությք բոլորովին նույնացնում է՝ հենց սկզբից պարբերությք
ձևակերպելով այսպես. Շարաբանությունը (բարդ նախադա-
սությունը բանավոր կամ գրավոր արտահայտված) կոչվում
է հարասություն, այսինքն (periodus)։ Սրանից հետո անմի-
ջապես ավելացնում է, թե հունարեն բառի համապատաս-
խան հառասուքյուն բառը կոչում ենք պարբերություն։ Այս-
քանից հետո սկսում է նկարագրել իբր թե պարբերությք և
նրա տեսակները, մինչդեռ ինչ որ ասվում է, վերաբերում է
զանազան տիպի բարդ նախադասություններին։

Շարաբանությունները, ասում է Սալլանթյանցը, բա-
ժանվում են տեսակների. ըստ նյութի քանակության դրանք
լինում են միանդամանի, երկանդամանի, եռանդամանի և
քառանդամանի։ Միանդամանին այն է, որի մեջ բաղմա-
պատկված են կամ ենթակաները, կամ ստորոգյալները և կամ
մակածականները. օրինակ՝ «Աշոտ և Վասակ գնացին ի Դաւ-
րժ։ Վասակ ընկալաւ և ուրացաւ զհաւատս Քրիստոսի։ Աշոտ
է ճարտասան և իմաստասէր և մեծատուն»։ Ինչպես երևում է
բացատրությունից և օրինակներից, միանդամանի պարբե-
րությք այստեղ համարվում է միավորյալ նախադասությունը։

Երկանդամանի է, ուր երկու ամբողջ իմաստներ, այսին-
քըն՝ նախադասություններ դրվում են առանձին-առանձին և
ինչ-որ ձևով հոդավորում են միմյանց. օրինակ՝

«Դատասպարտէ արդար հանդուցեալ զամսլարիշտս կեն-
դանի և մաքկութիւն վաղվաղակի վախճանեալ զբաղմամեալ
ծերութիւն անիրաւի»։

Եռանդամ է, երբ երեք իմաստներ (իմա՝ նախադասու-
թյուններ) հոդավորվում են. օրինակ՝

1 Տե՛ս հիշյալ գրքի (1832 թ. հրատարակության) էջ 62—64։

2 Տե՛ս Մ. Սալլանթեանց, Հրահանգ ճարտասանութեան կամ ճառա-
բանութեան, Մոսկվա, 1836։

«Մի ոմն ներքին խորհրդակցաց արքայի ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս, քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի և մեծապէս հոգ տանէր խնամոց կենաց վշտացելոցն»:

Քառանգամը բովանդակում է շորս ամբողջական նախադասութիւն, որոնք կապակցւում են շաղկապներ ընդհանուր օրինակ՝ «Ոչ եթէ չէր կարող աստուած բառնալ զաստանայ ի միջոյ, քանզի չիք ամենեկին տկարութիւն զաստուծով, յայլ զի չէր ինչ մեծ գործ աստուծոյ զաստանայ ինքնին զանձամբ սպանանել և զարարած մի զիւր փոքր՝ յոչինչ դարձուցանել, զի մի կարծիցի, թէ վասն յժուժալոյ շարութեանն նորա սպան զնա»:

Սալլանթյանը գտնում է, որ ուշիղ դատողութիւնը չի ներում շորս նախադասութիւնից ավել մի շարաբանութեան մեջ մտցնելը, որովհետեւ նապաղելով հոգնեցնում է հորինողի և ընթերցողի միտքը: Թեև կան այդպիսի շարաբանութիւններ, բայց այժմ եւրոպական պարզ լեզուներին հատուկ չեն:

Սրանից հետո նա շարաբանութիւն կոչված բարդ նախադասութիւնները բաժանում է 22 տեսակի՝ ըստ նրանց նշանակութիւնների. անկատարական (երբ բարդ ստորադասական նախադասութեան մասերից մեկը անկատար է առանց մյուսի). առավելական, բաղդատական, բաղհիտական, բացառողական, դասական, ժամանական, խնայողական և այլն: Սրանք իրականում պարբերութի հետ կապ չունեն:

Արսեն Այտընյանը նույնպէս խոսել է պարբերութի մասին: Նա էլ Սալլանթյանի նման պարբերութ համարում է մի քանի նախադասութիւնների կապակցված ամբողջութիւնը: «Քանի մը նախադասութիւն մեկտեղ առած կը կազմի պարբերութիւն»¹: զորօրինակ ընկերդ սիրե, որ դու ալ սիրելի ըլլաս»¹:

Նույն ձևով նարտասանութեան ավելի ուշ շրջանի հեղինակները պարբերութ են համարում երկու կամ ավելի նա-

¹ Հ. Արսեն Վ. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, էջ 138:

խաղասություններից կազմված խոսքը և շորս կամ առավել հինգ անգամ են ընդունում պարբերությի համար: Օրինակ՝ Ե. Մուրատյանը գրում է, որ պարբերությունը երկու կամ ավելի առաջարկություններից բաղկացած խոսք է¹: Ներությունն այն է, որ սա պարբերությունները բաժանում է երկու խմբի՝ ձևավոր կամ սովորական («բերիտախք») և կտրուկ կամ սահուն («քուփե»): Սովորական պարբերությունը այն է, որի նախադասությունները շաղկապով են միացած, կամ սկսվում են մակբայով. օրինակ՝

«Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել դամենայն շարիան, որ անցին անդէն ի կարաւանին ընդ գունդս Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք ծածկելով զվիշտս...»: Իսկ կտրուկ պարբերությունը այն է, որը շունի շաղկապ կամ մակբայ, կամ եթե ունի՝ խիստ սակավ. օրինակ՝

«Մոտեցավ վսեմ սե ահավոր վայրկյանը, արևը յուր վերջին ճառագայթները այս լերանց գագաթներեն ժողվելով նոր ասպարեզ մը կբանա աղատության»: Ըստ Մուրատյանի այս օրինակը ձևավոր կդառնա, եթե արևը բառից առաջ ահա դնենք (տե՛ս հիշյալ գրքի էջ 86):

Պարբերություն սովորական նախադասությունից որոշակի տարբերում է Ս. Գանթարյանը: Նա գրում է, թե երբ մտքերը դատ-դատ խոսքերով արտահայտելու փոխարեն մեկ ներդաշնակ ամբողջությամբ ենք ձևավորում, ստացվում է պարբերություն²:

Այլ ուսումնասիրողներ (Հյուրմյուզ, Մսերյան...) նույնպես գրել են պարբերության մասին, սակայն նոր բան չեն ասել:

Պարբերություն բառը առաջին անգամ կիրառել է Մ. Աբեղյանը և այդ հասկացությունը ինքնուրույն ձևով է մեկնաբանել ու բացատրել:

Աբեղյանը գրում է. «Բաղմաբարդ խոսքերի մի առանձին տեսակն է պարբերությունը. դա խոսքերի (իմա՝ նախադա-

¹ «Նոր ճաշակ դպրութեան կամ համառօտ ճարտասանութիւն», աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան, Երուսաղէմ, 1888:

² «Տարերք հետադարձական արտեւտի», Հ. Սամուել Վ. Կ. Գանթարեան, Վենետիկ, 1875:

սությունների — Վ. Ա.) մի ամբողջական գեղեցիկ միություն է, որի մասերը արվեստավոր կերպով այնպես են կապակցվում իրար հետ, որ մի հատ զխավոր միտքը, որ զարգանում է ամբողջի մեջ, մինչև վերջն առկախ է մնում»¹։ Այս բնութագրման էական կետը այն է, որ առանձնապես ընդգծվում է նախադասությունների արվեստավոր կապակցումը, որը պարբերությի էական գծերից մեկն է։

Շարունակության մեջ Աբեղյանը ճիշտ կերպով նշում է, որ պարբերությի պետք է կազմված լինի երկու զխավոր մասից, որոնք այնպես պետք է դասավորվեն, որ մեկմեկու համար անհրաժեշտ լինեն և իրար լրացնելով վերջում մի լիակատար միտք ու խոսքի ամբողջություն առաջ բերեն։ Պարբերությի համար երկու մասերից կազմված լինելը իբրև ամենաէական հատկանիշ հատուկ կերպով է նշվում և կարևորությունը տրվում է առաջին մասին։ Աբեղյանը գտնում է, որ մասերի միմյանց համար ունեցած անհրաժեշտությունն արտահայտված պետք է լինի առաջին մասի մեջ (ընդգծումը իրենն է), որ իր ձևով և դրությամբ պիտի ակնարկի երկրորդ մասին, իբրև իր էական լրացմանը։

Համադասական կապակցություններից պարբերությի կարող են կազմել միայն ներհակական և մակաբերական կապակցությունները, ասում է նա, եթե բաղկացած են երկու մասից, ինչպես և հավելական ոչ միայն... այլև շաղկապով կազմվածները, իսկ ստորադասական կապակցություններից նրանք, որոնց մեջ զխավոր նախադասությունը առաջադաս է։

Աբեղյանը նշում է, որ կան համադասական և ստորադասական պարբերությիներ։ Համադասական պարբերությիները լինում են մակաբերական, ժխտական և այլն, իսկ ստորադասականների մեջ առաջին մասը կարող է երկրորդ մասի համար լինել։ Ենթակա, խնդիր կամ որևէ պարագա. ուստի նայելով առաջին մասի հարաբերությանը երկրորդ մասի հետ՝

1 Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 348։

ստորագասական պարբերութիւնները կարող են լինել տեղի, ժամանակի, բաղդատութեան, հիմունքի և այլն:

Ճիշտ բնութագրելով պարբերութիւնը, Աբեղյանը շարունակութեան մեջ որոշ դիջում է անում, երբ ասում է, թե պարբերութիւն կարող է համարուիլ ամեն բարդ խոսք, որի մասերն ունեն պահանջած արվեստավոր կազմութիւնը: Նա օրինակ է բերում՝ «Այս տեղն, արդարեւ, բանաստեղծական գեղավայր էր. բայց զուրկ չէր նաեւ գլուխների թոցնելու հարմարութիւնից»: Այս օրինակից հետո շտապում է ավելացնել, թե այսպիսի փոքր ծավալի արտահայտութիւնները պարբերութիւն չեն, այլ պարբերութիւն են համարվում այն բարդ նախադասութիւնները, որոնց մասերը նույնպէս բարդ են: Աբեղյանը շեղվում է իր բնութագրութեան պահանջած սկզբունքից, երբ ամենափոքր պարբերութիւն է համարում հետեւյալ նախադասութիւնը. «Արդարեւ կան ցավեր, որ չպետք է մոռանալ. բայց որքան շատ են այն վշտերը, որ եթե չմոռանայինք, կյանքը մեզ համար կդառնար դժոխք»: Այս նախադասութիւնը չի կարող պարբերութիւն համարուիլ, որովհետեւ առաջին մասի համար պահանջված արվեստավոր կազմութիւնը չկա: Աբեղյանը նշում է, որ մասերը պետք է բարդ լինեն. նախ դա վերաբերում է միայն առաջին մասին, և երկրորդ՝ պարբերութիւնի համար ոչ թե այդպիսի բարդութիւն է հարկավոր, այլ առաջին մասի անդամները պետք է քերականորեն համասեւ լինեն և թվարկվեն միշտ բարձրացող հնչերանգով. մինչդեռ բերված նախադասութեան առաջին մասը սովորական որոշիչ երկրորդական նախադասութեամբ բարդ ստորագասական նախադասութիւն է: Ուրեմն՝ ամեն բարդ մաս չի կարող պարբերութիւն մաս կազմել: Բայց Աբեղյանը ճիշտ կերպով նշում է, որ մասերը պետք է ունենան համանման կազմութեամբ համադաս մասեր, որոնք կոչվում են անդամներ: Կրկնենք, որ այդ համադաս անդամները պետք է առաջին մասը ունենա, այլապէս, որքան էլ այդ մասը բարդ լինի, չի կարող պարբերութիւն կազմել:

Պարբերութիւնը անդամների բաժանելիս Աբեղյանը ճիշտ

է վարվում, երբ միանդամանի պարբերութ չի ընդունում, սակայն նա կարծում է, որ եթե երկրորդ մասը երկանդամանի լինի, իսկ առաջինը միանդամանի, պարբերութ կկազմվի: Հազվադեպ լինում է նաև իջնող պարբերութ, բայց Աբեղյանը դրա մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում: Ըստ Աբեղյանի կան երկանդամ, եռանդամ, քառանդամ, հինգանդամ և այլ պարբերութներ:

Պարբերութը երկանդամ է, ասում է Աբեղյանը, երբ մասերից յուրաքանչյուրը մի-մի զոգված են. եռանդամ է, երբ առաջին մասը մի զոգված է, իսկ երկրորդ մասը ունի երկու համադաս զոգվածներ, կամ առաջին մասը ունի երկու համադաս զոգված, իսկ երկրորդը՝ մեկ: Քառանդամ է, երբ գլխավոր մասերից յուրաքանչյուրն երկու անդամից է կազմված. կամ մեկն երեք անդամ ունի, մյուսը միայն մեկ և այլն:

Պետք է նշենք, որ բաժանման այս սկզբունքը ճկուն չէ: Երկանդամ, եռանդամ և այլն լինելը պայմանավորվում է ոչ թե երկու մասերով, այլ միայն մի մասով և հատկապես առաջին մասով: Եթե առաջին մասը կազմված է երկու անդամից, իսկ երկրորդ մասը՝ երեք կամ չորս, պարբերութը երկանդամ է: Իսկ եթե իջնող պարբերութ է, այն ժամանակ անդամների թվը հաշվվում է երկրորդ մասով. ուրեմն անդամահատման համար հիմք է վերցվում միայն մի մասը:

Այս ամենից հետո Աբեղյանը չի մոռանում նաև պարբերութի մեկ այլ հատկությունը՝ ներգաշնակ և կշռութավոր կառուցվածքը, որ հաճելի տպավորություն է գործում: Դրա համար, ասում է նա, անդամները որոշ համաչափություն պետք է ունենան իրենց ծավալով, իսկ մասերի ծավալը պետք է համեմատ լինի բովանդակությանը: Այսպիսի արվեստավորությամբ կազմված պարբերութի մեջ կարգալու ժամանակ ձայնն առաջին մասի սկզբում ցածրից սկսելով հետզհետե բարձրանում է և ապա դարձյալ հետզհետե իջնում, մինչև որ վերջում հանգստացնող ավարտի տպավորություն է թողնում:

Հիմնականում Աբեղյանը պարբերութի կարևոր բոլոր

հատկանիշները մատնացույց է անում. դրանք են՝ երկու մասից կազմված լինելը, բարձրացող և իջնող հնչերանգը և արվեստավոր կառուցվածքը: Չնայած դրան, այնուամենայնիվ, ինչպես տեսանք, օրինակների ցուցադրության մեջ նա շեղվում է այս ճիշտ սկզբունքներից:

Ի վերջո Աբեղյանը մատնանշում է, թե պարբերությի ինչպիսի խոսքի մեջ պետք է կիրառել: «Պարբերությի հատուկ է առավելապես վսեմ, հանդիսավոր խոսվածքին ու ճառերին: Սովորական գրվածքներին, լինին գիտական թե առօրյա կյանքի վերաբերող հոգվածներ ու նամակներ, պարբերական ոճը խորթ է. այսպիսի գրվածքների մեջ, որոնց համար պահանջվում է ամենից առաջ պարզություն ու ճշտություն, դործ են ածվում կարճ ասացվածքներ, պարզ ու բարդ խոսքեր, լինին վերջիններս իբրև պարբերությի կազմված, թե ոչ»¹:

Այս բոլորից հետո Աբեղյանը բերում է պարբերությի օրինակներ (հինգը Հովհաննիսյանից, իսկ մեկն էլ ինքն է կազմում), որոնք բոլորն էլ իրոք պարբերությիներ են:

ՊԱՐԲԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Պարբերությի տերմինը թարգմանված է հունարեն *περίοδος* բառից, որ նշանակում է շրջանադիծ, շրջան, այսինքն՝ դա այնպիսի մի խոսք է, որ շրջանագծի, օղակի նման կլորացված է: Եթե արտահայտության մեջ այդ վերջին մասը չի փակում ասվածը, չի ամբողջացնում ըստ կառուցվածքի և բովանդակության, ապա այդպիսի արտահայտությունը պարբերությի չի կարող կազմել: Օրինակ՝ թէ ով էր նրան այնտեղ կանգնեցրել. սա մի նախադասություն է, բայց պարբերությի չէ, որովհետև չի վերջացած, կլորացված չէ. եթե դրան ավելացնենք՝ այդ հայտնի չէր, ապա նախադասությունը կլրանա, կամբողջացվի և կդառնա պարբերությի: Ըստ հին ըմբռնման

¹ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 348—350:

պարբերութիւնն է նաեւ նախադասութեան հետեւյալ տիպը. օրինակ՝ Կղզիին հետու էր ցամաքից մեկ ժամվա ծովային նանապարհով:

Այս դեպքում էլ արտահայտութիւնը ձեռով և իմաստով ամբողջացած է, բայց այն պարբերութիւնն է: Հին ուսումնասիրողները շատ անգամ սովորական նախադասութիւնը շփոթում էին պարբերութիւնի հետ և մի հատկանիշով էին զանազանում պարբերութիւնը նախադասութիւնից: Պարբերութիւնը կազմված է ներդաշնակ ու համաչափ դասավորված անդամներից, իսկ նախադասութիւնը այդպիսի համաչափ ներդաշնակութիւն չի պահանջում: Իսկ այս զանազանութիւնը հանդես է գալիս այն դեպքում, երբ պարբերութիւնի մասերը ունեն առնվազն երկու անգամ: Նույնիսկ երկու անգամների ներդաշնակ շարադասումը անզգալի է մնում. մասերը երեք, չորս և ավելի անգամներ պիտի ունենան, որ համաչափ ու ներդաշնակ տեղաբաշխումը ցայտուն լինի:

Պարբերութիւնի ամենաէական հատկանիշը նրա երկմասնյա լինելն է: Այդ երկմասնութիւնը պայմանավորված է բերականական կառուցվածքի առանձին տարրերով, ինչպէս որ բնութանում են հին դիտումները: Պարբերութիւնի երկմասնութիւնը զուտ հնչերանգային հասկացողութիւնն է, որ պարբերութիւնի համար բնութագրական լինելով, իր հետ զուգակցում է նաեւ այլ առանձնահատկութիւններ, որոնք միասնաբար պարբերութիւնը առանձնացնում են սովորական նախադասութիւնից իբրեւ ուսումնասիրութեան հատուկ առարկա: Հենց սկզբից նշենք ուրեմն, որ մի պարզ նախադասութիւնը, եթե այն մի հնչերանգային լարումով է արտաբերվում, պարբերութիւն չի կարող լինել. օրինակ՝

«Փոթորկային գիշերին հաջորդեց դարնանային խաղաղ, հովասուն առավոտը» (ԲԵԺ, VII, 22): Սա մի պարզ նախադասութիւն է և արտաբերվում է մի ամբողջական հովասար հնչերանգով, ուստի պարբերութիւն չի կարող:

Բայց և կան այնպիսի նախադասութիւններ, որոնք երկու մասից են կազմվում և արտաբերվում են տարբեր հնչերանգ-

ներով. Հենց այդպիսիք են բոլոր կարգի բարդ նախադասութ-
յունները. օրինակ՝

Թեև ձորի երկու ծայրերը դեռ քողավորված էին մառա-
խուղով, սակայն հատակը պարզ էր, և պղտոր գետակը երե-
վում էր ցածրում (ՎՓԸԵ, 370): Այս բարդ նախադասութ-
յունը երկու հնչերանգային միավորներից է կազմված. մեկ հնչե-
րանգային միավորը վերջանում է մառախուղով, իսկ մյուսը
սկսվում է սակայն շաղկապով և ընդհատվում նախադասու-
թյան վերջում: Այսպիսի երկմասնյա նախադասութ-
յունը նույնպես պարբերույթ չէ: Ուրեմն՝ պարզ նախադասութ-
յունը պարբերույթ չէ, որովհետև միամասն է. իսկ բարդ նախադա-
սությունը ինչո՞ւ պարբերույթ չէ, չէ՞ որ պարբերույթի հիմ-
նական պայմանը երկմասնյա լինելն է: Պարբերույթը իր շա-
րահյուսական կառուցվածքով ավելի բարդ ամբողջություն է
և ավելի ծավալուն, քան պարզ ու բարդ նախադասութ-
յունը: Երբեմն այն կարող է մի ամբողջական բանաստեղծու-
թյուն լինել, մի հսկա պարբերություն կազմել: Այսպիսի ծա-
վալունությունը, լրիվությունը և կատարելությունը նույնպես
կարևոր են պարբերույթի համար, սակայն դա պարբերույթը
բնութագրող հիմնական պայմաններից չէ: Թումանյանը Տոլ-
ստոյին բնութագրում է հետևյալ ընդարձակ պարբերությամբ¹.

«Ընկալ ուսական վիթխարի հանձարը, ու մահվան բո-
թից թնդում է լայնածավալ Ռուսաստանը մի ծայրից մինչև
մյուսը: Թնդում է և ամբողջ լուսավոր աշխարհը, որովհետև,
ինչպես ճշմարիտ մեծ մարդ, կրելով կատարյալ իր ժողովրդի
հոգին ու պատկերը, հանդիսանում էր իր ժամանակի գեղար-
վեստական գրականության այն հոյակապ ուժը, որ կարող
էր մի հայացքով ու մի գրվածքով ամփոփել կյանքը ահագին
տարածության վրա՝ վերևից մինչև ներքև, արտաքին կեղևից
մինչև հոգու ամենածածուկ խորշերը, հանդիսանում է իր ժա-
մանակի հսկա փիլիսոփան, որ աշխատում էր լուծել կյան-
քի առեղծվածը, խորամուխ լինել, հասկանալ ու պատասխան

¹ Պարբերույթը չպիտի շփոթել պարբերության հետ, վերջինս օճառ
է նշանակում:

գտնել, թե ինչու է ապրում մարդը, և փիլիսոփայական խաղաղությամբ նայելով մահվան պաղ ու խորունկ աշքերին՝ ուղում էր հաշտություն ստեղծի նրա ու նրա առջև սարսափող հոգիների մեջ» (Թ, IV, 154): Այս ընդարձակածավալ բաղմաբարդ նախադասությունը նույնպես պարբերույթ չէ, որովհետև շունի մասերի որոշակի բաժանվածություն և ներդաշնակ, համաշափ ու կշռույթավոր (ոիթմիկ) կառուցվածք, որոնք պարբերույթի էական հատկանիշներից են, և առանց որոնց պարբերույթը չի կարող ձևավորվել ու ամբողջանալ: Ուրեմն պարբերույթի ձևավորման համար անհրաժեշտ է քերականական, հնչերանգային և լեզվական արվեստի երեք կարևոր գործոնների միասնություն: Լեզվական արվեստ արտահայտության մեջ պետք է հասկանալ մասերի ներդաշնակ ու համաշափ դասավորությունը, անդամների կառուցիկ շարադասությունը, ըստ այսմ նաև կշռույթի կարգավորումը, հարակրկնությունները և այլն:

Պարբերույթի մասերից ամենաէականը առաջին մասն է, որ երկու անդամից երբեք պակաս չպետք է լինի. օրինակ՝ «Արևաշյա և ծովաշյա փերիների հայացքների հուրն ու նետը ճառագայթում են ամեն կողմ, տարափի պես թափվում են խանի վրա, համբույրների ու հրապույրների ոստայն են հյուսում նրա շուրջը, բայց պողպատյա վահան է դարձել խանի սիրտը» (ԱԻԵԺ, III, 207): Այս պարբերույթի առաջին մասը վերջանում է բայց բառի մոտ և կաղմված է երեք անդամից. եթե այդ անդամներից երկուսը հանենք, ապա պարբերույթը կքայքայվի և կդառնա սովորական նախադասություն: Հենց այդ նույն էջում, որտեղից բերվեց վերոհիշյալ օրինակը, կա մի այսպիսի նախադասություն. «Եվ խմում է խանը, սակայն նրա հոգին սառույց սառնամանիք է...»: որովհետև առաջին մասը միայն մի նախադասություն է, ուստի սա պարբերույթ չէ:

Ուրեմն պարբերույթի համար առաջին մասի երկանդամությունն ու բաղմանդամությունը պարբերույթի էական պայմանն են: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել մի այլ կա-

րևոր հանգամանք ևս: Պետք է առաջին մասի այդ հիշյալ ան-
դամները միասեռ և միանման լինեն քերականորեն և կշռույ-
թով: Եթե դրանք տարբեր քերականական կառուցվածք ունե-
նան և ծավալով խիստ տարբեր լինեն, այդպիսի անդամներ
ունեցող առաջին մասը չի կարող պարբերությի մաս կազմել.
օրինակ՝

«Եթե Սամվելը գոնե մի անգամ նայելու լիներ խեղճ
սլատանու վրա, իսկույն կնկատեր նրա անհանգիստ դրու-
թյունը, բայց Սամվելը հափշտակված էր յուր քաղցր խոկում-
ներով» (ՐԵԺ, VII, 163): Բայց-ից առաջ ընկած մասը երկու
միավոր ունի, սակայն ինչպես ասվեց, դա պարբերությի
մաս չի կարող լինել, որովհետև դրանցից մեկը երկրորդական
նախադասություն է, իսկ մյուսը գլխավոր. դրանք քերականո-
րեն համասեռ չեն: Առաջին մասի անդամների քերականական
համասեռությունը պարտադիր պայման է պարբերությի հա-
մար. օրինակ՝

(Կենդանիների արքան) իր կյանքում երբեք կապեր չէր
տեսել, արգելքի առաջ գլուխ չէր ծռել, կտրել էր նա դաշտ,
ձոր, անտառ, անապատ անհուն, անցել էր անտառ, գետեր
սրընթաց, մաղլցել լեռներ, աշխարհն ամբողջ ոտնատակ
տվել, ազատ օդի մեջ ապրել անկաշկանդ, ազատ էր ծնվել,
ազատ էր սնվել, ~~և~~ և ահա այժմ կծկած, գալարած, ցանցով
խճճած, գետնին պինդ դամած, անհասկանալի կապերով սեղ-
մած, չէր էլ ըմբռնում, թե ինչ էր եղել» (ՎՓԸՆ, 264): Առաջին
մասը վերջանում է ազատ էր սնվել նախադասությամբ. այդ
մասի անդամները բոլորն էլ թվարկվող միավորյալ նախա-
դասություններ են, այսինքն՝ քերականորեն համասեռ են: Մի
այլ օրինակ՝

Ու դիակին վրա ծռած, շփելով երակները, օտըքոլոնյի
շիշը մոտեցուցած ունգերուն, արվեստական շնչառություն
մը ընել տալու ապարդյուն ջանքերով, թմրած սառած ան-
դամները ճգնելով տաքացնել իր շունչովն իսկ, ~~և~~ այս բժիշկը
գրաբարին գլխուն վերևը կհսկէ սիրելիի մը մահվան շհամող-
վող մարդու համառ պատրանքի մեջ» (ԳԶԵԺ, I, 422): Այս

պարբերութի առաջին մասն էլ կազմված է դերբայական դարձվածներից, որոնք նույնպես համասեռ են և պարբերութի մաս են կազմում: Այս մասին դեռևս խոսք կլինի հետագայում, սակայն նշենք, որ առաջին մասի անդամները այդ քերականական համասեռության հետևանքով ունենում են համաչափ ու ներդաշնակ կառույց, բառերի դուգահեռ շարադասություն, արտաբերական նույնանմանություն, իմաստային մոտիկություն և այս ամենի հետևանքով կանոնավոր կշռույթ: Իհարկե, եթե առաջին մասի անդամների համար քերականական համասեռությունը պարտադիր է, ապա վերջին հիշատակված հատկանիշները միաժամանակ և միասին պարտադիր պայման չեն. արդեն քերականական համասեռությունը իր հետ բերում է հիշյալ հատկանիշները ավել կամ պակաս չափով:

Պարբերութի առաջին մասի անդամների քերականական համասեռությունը հաճախ ուղեկցվում է հարակրկնություններով և վերջույթներով, որոնք կարգավորում են շարադասությունն ու կշռույթը, դառնում են ցայտուն անդամահատման ձևական միջոցներ. եթե նախադասությունն ամեն անգամ սկսվում է միևնույն բառով, ապա պարզորոշ ցույց է տալիս նոր անդամի սկիզբը, իսկ եթե վերջանում է միևնույն բառով, նշում է այդ անդամի վերջը: Երբ անդամը սկսվում կամ վերջանում է միևնույն բառով, այդ նշանակում է, որ նախադասությունների նույնանման անդամները շարադասվում են իրար համապատասխան տեղերում. ստացվում է համաչափ ու ներդաշնակ շարադասություն և դրա հետևանքով կշռույթը կանոնավորվում է նաև անդամների համահավասար արտաբերական ծավալով. այս նշանակում է, որ անդամներից յուրաքանչյուրի բոլոր բառերի վանկաքանակների մեջ թվական մեծ տարբերություն չկա. ոտանավորի մեջ դրանք հավասար են, իսկ արձակի մեջ պարտադիր չէ հիշատակասարաչափությունը, բայց մոտավոր ճշտությունը անհրաժեշտ է կշռույթը կանոնավորելու համար: Ահա հարակրկնությամբ պարբերութի մի օրինակ.

Նա, որ սպանեց իմ թագաւորին,
Նա, որ իմ մորս պոռնիկ դարձրեց,
Նա, որ ներս խոթիւեց իմ ընտրութեանս
և հուշսերիս մեջ,

Եւ կարթը ձգեց, որ կշանքս էլ որսա,
Այն էլ այնպիսի շարանենդութեամբ,—
Չէ՞ որ կատարյալ խղճմտութեան է,
Որ այս բաղուկով վարձը ձեռքը տամ

(ՎՇԸԵ, I, 103):

Այս օրինակի մեջ առաջին մասի երեք անդամը հարա-
կրկնւած են: Այսպիսի հարակրկնութեան հատուկ է նաև ար-
ձակ պարբերույթին. շափածո խոսքի մեջ տողերի սկիզբը
հաճախ առանց դրանց էլ որոշակի է, իսկ արձակի մեջ հա-
րակրկնութեանը անդամահատման միջոց է. օրինակ՝

«Եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Քսենե-
փոնի 24 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները, եթե
մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոդոտոսի 24 դար
առաջ նկարագրած մաշկապատ նաւակները Եփրատ գետի
վրա,— ինչու պետք է շմտածել, որ դեռ շատ բան չէ փոխվել
հայոց աշխարհում» (ՐՆԺ, VII, 8): «Ամեն անգամ, որ նայում
էի նրա դարմանալի պայծառ աչքերին, որոնց մեջ կարծես
արևն էր վառվում. ամեն անգամ, որ լսում էի նրա կենսա-
թրրթիռ ծիծաղը, որի մեջ կարծես գարնանային շարճճի
վտակ էր քշքշում. ամեն անգամ, որ առնում էի նրան գիրկս
և ականջիս մոտ լսում նրա կուսական կրծքի հեքը, այտերիս
վրա դդում նրա թավիշ-մազերի էլեկտրացնող շփումը,— ինձ
տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցության
տակ պատրաստ էի գործել և ամենամեծ առաքինութեանը, և
ամենամեծ ոճիրը՝ միայն թե նա հրամայեր» (ՆՆԺ, I, 114):
Այս պարբերույթի մեջ կրկնվող բառերը ավելի բաղմադան
են, որ նպաստում են և անդամահատման և կշռույթի կանո-
նավորման:

Ասացինք, որ պարբերույթը կազմվում է երկու մասերից:
Այդ երկու մասերը քերականական / հնչերանգային և իմաս-

տային կողմերով միմյանց հակադիր են: Քերականական ու
 իմաստային հակադրությունը երկու մասերի համար պարտու-
 դիր պայման չէ. հակադրության փոխարեն կարող է հանդես
 գալ զուգադրությունը, մասերը կարող են իրար հետ համա-
 դրվել բարդ ստորադասական, համադասական կապակցու-
 թյամբ և այլն, սակայն հնչերանգային սուր հակադրությունը
 միշտ ուղեկցում է պարբերությին և դառնում է նրա մասերի
 բաժանման էական պայմանը: Պարբերության առաջին մասը
 արտաբերվում է բարձրացող հնչերանգով, իսկ երկրորդ մասը
 դրան հակադիր ունի իջնող հնչերանգ: Այդ բարձրացող և իջ-
 նող հակադրամասերը ոչ թե ակիֆաձև բարձրանում և իջնում
 են, այլ մասնատվում են որոշակի դադարով: Պարբերության
 առաջին մասը բաղմանդամանի ու ծավալուն մի կառուցվածք
 է, որ ունի համասեռ տարրեր, սրանք բոլորն էլ արտաբեր-
 վում են բարձր հնչերանգով, ըստ որում միշտ հաջորդը նա-
 խորդի համեմատությունամբ ավելի բարձր է հնչվում, և որքան
 շատ են այդ տարրերը, այնքան յուրահանում է հնչերանգային
 լարվածությունը. առաջին մասի վերջին անդամը արտաբեր-
 վում է ամենաբարձր լարվածությամբ և վերջանում է ցայ-
 տուն մի դադարով: Այս դադարն էլ հենց դառնում է պարբե-
 րության մասնատման բնական սահմանը: Դադարից հետո
 երկրորդ մասը նախորդ մասի համեմատությամբ ցածր է
 սկսվում և որքան դնում է դեպի վերջը, այնքան ձայնը իջնում
 է, մինչև որ հասնում է ավարտին.

Սկեսպտիկ ժպտով մը դանդաղագին
 Երբ մարդ ըմպած է մրուրը կյանքին,
 Երբ ծառայած է կամքով կորովի՝
 Այն մեծ վարպետին, որ վիշտ կը կոշվի.
 Ճանչցած է դողդոջ դշխոյն Եր Սերն է.
 Ազգաց, անհատին Պատմության դժն է
 Նայած է անդամ մը մյուս երեսին,
 Արվեստն հավակնոտ, սիրտն ամբարտաւան,
 Սուգը Երեկին, երկյուղը վաղվան

Ու ճշմարտության հոգին ծարավի,

Զննած է երկնից պարապը ծավի՝

Հին աստվածներու վիհն այն մշտական,

Այդ մարդուն համար ուրիշ վայր չի կա

Ավելի քաղցրիկ հեշտանքով հղի,

Քան զերեղմաննոց աղքատիկ գյուղի (ՌՍԵ, 137):

Մինչև «հին աստվածներու վիհն այն մշտական» տողը՝ արտաբերվում է բարձր հնչերանդով, ապա դալիս է դադարը և հետո ցածր տոնով սկսվում է մյուս մասը, որ ավելի ցածրահալով վերջանում է:

Դադարը պարբերույթի էական հատկանիշներից մեկն է. ճիշտ է, այն սոսկ հնչերանդային նշանակություն ունի, բայց հենց դա է, որ պարբերույթը մասնատում և որոշում է նրա երկու մասերի սահմանը, և այդ մասերը հակադրում է միմյանց իր բարձրացող և իջնող հնչերանդներով և արտաբերական շրջադարձով այդ մասերը ամբողջացնում է իբրև տրտահայտության նոր որակ: Դադարը սկզբնական մասի անընդհատ բարձրացող լարվածությունը չի թուլացնում, ընդհակառակը, ավելի է սրում այն՝ ընթերցողին կամ լսողին դնելով սպասողական վիճակի մեջ. լարվածության լուծումը տեղի է ունենում երկրորդ մասի ավարտով, այսինքն՝ երկու մասերի ամբողջացումով: Ուրեմն՝ դադարը ոչ միայն մասնատման և երկու մասերը իրար հակադրելու հնչերանդային միջոց է, այլև պարբերույթի համար ունի կապակցման արժեք: Ճիշտ է, հաճախ պարբերույթի երկու մասերը կապակցվում են շաղկապներով, շաղկապային ու ընդհանրացնող բառերով, սակայն դրանց հետ և առանց դրանց դադարը միշտ առկա է իբրև ներքին հնչերանդային անհրաժեշտ կապակցող տարր:

Պարբերույթի առաջին մասը արտահայտվում է ամեն տեսակ բերականական միավորներով. դրանք կարող են լինել պարզ համասեռ թվարկվող նախադասություններ, միավորյալ նախադասություններ, գլխավոր և երկրորդական նախա-

դասություններ, դերբայական դարձվածներ, զանազան տիպի բառակապակցություններ, նույնիսկ առանձին բառեր, եթե դրանք հնչերանգով անկախանում են. ուրեմն առաջին մասի համար ձևավորված նախադասությունը պարտադիր պայման չէ. բավական է, որ դա ունենա որոշ բաղադրականություն ունեցող երկանդամ կամ բաղմանդամ համասեռ միավորներ, որոնք իրար հետ կազմեն անընդհատ բարձրացող հնչերանգային թվարկվող շարքեր, ունենան կապակցման նույնություն, միանման անդամահատություն, իմաստային մոտիկություն և ամանակային որոշ համաչափություն, որ պայմանավորում է պարբերույթի առաջին մասի անդամների կշռույթը և ավարտվի թվարկումը, ապա պարբերույթի առաջին մասը արդեն ձևավորված է:

Մասերի առանձին բաղադրիչները կոչվում են անդամ, որոնք կարող են բարդանալ լրացուցիչ միավորներով, այսինքն՝ նույնիսկ բառակապակցություն հանդիսացող պարբերույթի մի որևէ անդամ կարող է ունենալ բացահայտիչ, երկրորդական որևէ լրացուցիչ նախադասություն և այլն: Ճիշտ է, այս դեպքում հնչերանգային հաջորդականության որոշ բեկում է լինում, սակայն հնչերանգային բարձրացման ու լարվածության ընդհանուր դիժը վերականգնվում ու շարունակվում է հաջորդող անդամի թվարկումով:

Պարտադիր չէ, որ բոլոր անդամները լրացումներ ունենան, սակայն երբեմն համաչափությունն ու կշռույթը պահպանելու համար կատարվում է այդ: Այդպիսի կատարյալ պարբերույթի օրինակ է «Մատենան ողբերգութեան» ՄԱ. բանի ա հատվածը, որ բերում ենք ամբողջությամբ.

Եւ արդ՝ առ երկրածին՝ որ պաղատեցայց այրս մահացու ամենապատիր եթէ, ընդունայն է աղաղակելն. առ մահկանացո՛ւ բանական եթէ, սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն. առ մա՛րդ որ եղծական եթէ, ընդ տկարութիւն բանին և նանիւր է զօրութիւնն, առ իշխա՞նս երկրաւոր դահից եթէ, անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բախութիւն. առ եղբա՛յր որ հարադատ եթէ, կարօտ է կամելոյն առ ան-

ձինն անդորրութիւն. առ հաճյրն իմ երկրաւոր եթէ, պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուազութեանն. առ մաճյրն իմ որ երկնեաց եթէ, կասեցան զթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն. առ թաղաւորութիւնս աշխարհի արդեօք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն. քան զկենադործելն, — ալլ առ քեզ, բարերար, Աւատաւած օրհնեալ ի բարձունք, որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի, որ և յետ վախճանին զօրեա անեղծապէս նորոգել:

Պարբերույթի առաջին մասը նույնպէս պետք է ավարտուն լինի, այսինքն նրա անդամները պետք է թվարկված վերջացած լինեն, այլապէս պարբերույթ չի կազմվի և կստացվի սովորական բարդ նախադասութիւն. օրինակ՝

Սե շորացած մարմին տւներ, գլխի վրա կարճ և նոսրացած մազերով, աչքերը խավարակոռ գիշերվա նման խոր, մատները երկար, լղար ու ուռած երակներով, ճակատը ծուռ, կուրծքը ներս ընկած, փորը — բայց փոր շունի, կրծքի անմիջապէս տակից սկսում էին նրա սրունքները (ՎԹԵ, 33):

Այս օրինակի մեջ թվարկվող առաջին մասը չի վերջացած, ուստի անավարտ է և իմաստով և հնչերանգով:

Պարբերույթի առաջին մասը կազմվում է երկու և ավելի անդամներից, այդ անդամները կարող են դարձյալ մանր միավորներ ունենալ: Եթե առաջին մասը կազմված է բարդ նախադասութիւնների շարքից, ապա այդ բարդ նախադասութիւնների յուրաքանչյուր պարզ նախադասութիւնը առանձին տարր է, որ պայմանականորեն կոչում ենք հատած: Ուրեմն ամբողջ պարբերույթը ունի երկու մաս, մասերը ունեն անդամներ, անդամները՝ հատվածներ: Ըստ պարբերույթի առաջին մասի անդամների քանակի՝ պարբերույթը լինում է երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ:

Երկանդամ պարբերույթի օրինակներ.

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կհորինես թանկագին բաներ, —
Բայց թե ձեռքեդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրան (ՌՊԵ, 15)

1 Եթե մի օր, անուշ ընկեր,
 Գառ ալցելու իմ շիրմին,
 2 Ու նորաբույս վառ ծաղիկներ
 Տեսնես փռված շորս կողմին, ~~1~~
 Դու շկարծես թե հասարակ
 Ծաղիկներ են ոտքիդ տակ,
 Կամ թե գարունն է այն բերել,
 Իմ նոր տունը զարդարել (ՀԹԵԺ, I, 118):

1 Լուսնի մահիկն երբ
 Սանդուխներու վրա
 Մեղմով կը տեղա
 Լույծ, անձրևակերպ
 Սահանքն իր լույսին,
 2 Եվ երբ մանիշակ
 Գոլորշիներուն
 Մշուշն անապակ
 Կը ծաղկի թրթռուն
 Ծովերուն վրա, ~~1~~
 Խորն իմ սենյակիս
 Կը հանդշի հոգիս (ՄՄԵԺ, 64):

1 Թեև նա իսպառ վհատած չէր, 2 Թեև տակավին հույս ու-
 ներ, որ Շապուհը անպատճառ կկատարի յուր խոստմունք-
 ները 3 Բայց ինչ երջանկություն կնոջ բռնի ամուսին լինել,
 որ զզվում է նրանից, և՛ մի երկրի բռնի թագավոր լինել, որ
 անիծում էր նրան (ԲԵԺ, VII, 472)

Նուանդամ պարբերույքի օրինակներ.

1 Զի եթէ զլին մի ծովուց ի յորակաթիւն դեղոյ յեղեղեցից,
 և զդաշտս ասպարիւոք բաղմօք սահմանեալ ի տարածումն
 լայնութեան քարտենի շափեցից, և զպուրակս յոքունց անտա-
 ոաց, շամբից եղեգանց ի հատուածս գոյութեան գրչաց
 կաղմեցից, 4 և ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց զօ-
 բեցից ընդ գրով սահմանի գրաւել (ԳՆ, Թ):

1 Քնարի, սրնգի և ծնծղայի ներդաշնակությունը հյուսվե-
լով և ոլորվելով մարմարյա սյուների հետ բարձրանում է վեր,
2 փովում է ժսկի առաստաղին, թռչում է դուրս՝ երկինք, 3 բայց
չի հասնում խանի ականջին, բայց չի փոթորկում քարացած
հոգին նրա (ԱԻԵԺ, III, 207):

Քառանդամ պարբերույթի օրինակներ.

1 Զի թէպէտ և հմք ածու փոքր, 2 թուով յոյժ ընդ փոքու
սահմանեալ, և 3 խորութեամբ տկար, և 4 քնդ ալով յոլով անգամ
նուաճեալ թագավորութեամբ, 5 սակայն բազում դործք արու-
թեան գտանին դործեալ և ի մերում աշխարհիս և արժանի
գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կա-
լաւ մատենագրել (ՄԽՊՀ, Գ):

1 Մեկ մտածում եմ, որ կինս անմեղ է, 2 մեկ որ անմեղ չէ.
3 Մեկ մտածում եմ, որ դու պարկեշտ ես, 4 մեկ, որ պարկեշտ
չես, — ապացույց պետք է (ՎՇԸԵ, I, 168):

Բազմանդամ պարբերույթի օրինակներ.

1 Ուր սուր ծերպերով ահեղ ցիր ու ցան
լեռներ են բազմած բնության արձան,
2 Ուր մութ ամպեր են գունդագունդ զինվում,
3 Փայլակ կայծակով իրար հետ կովում՝
Զարնելով միմյանց երկիր ու եթեր,
4 Թռչկոտում են հուր կայծակի շանթեր,
5 Խաղում են, գոռում ճայթյուն որոտով,
6 Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով, —
Այնտեղ գիշերվա խավարի միջին
Մի խարույկ վառվեց կալվարի լանջին (ՎՄԼՈ, 38):

1 Զի ոչ ոք է առաջին քան զնա, 2 ոչ ոք է յետոյ նման նմա,
3 և ոչ ընկեր հաւասար նորին, 4 ոչ գոյութիւն ընդդիմակաց, և
5 ոչ բնութիւն հիւթաբեր ի պէտս նորա, և 6 ոչ նիւթ ինչ, յորմէ
առնիցէ, զոր առնելոց իցէ, 7 այլ ինքն է պատճառ ամենայ-

նի, որ լինելն և ի հոյանալ եկին ի շոյէ և ի գոյէ (Եղ-
նիկ, Ա.):

Վերը բերված մյուս և այս վերջին օրինակներից պարզ
երևում է, որ պարբերությի առանձին մասի միասեռ անդամ-
ները ավել կամ պակաս չափով իրենց քերականական, հնչե-
րանգային և նույնիսկ իմաստային կողմերով մոտ են իրար
և երբեմն իսկ նման են: Այդ մոտիկությունը արտահայտվում
է անդամների լեզվական տարրերի ներդաշնակ դասավորու-
թյամբ. համեմատիր Եղնիկից բերված վերջին օրինակը. գրե-
թե բոլոր անդամները սկսում են ոչ ոք կապակցությամբ, հա-
մենայն դեպս ոչ-ը պահպանվում է մինչև մասի վերջը, առա-
ջին և երկրորդ անդամների (առաջին և յետոյ) քերականա-
կան միևնույն արժեքի բառերը շարադասված են անդամների
ճիշտ համապատասխան տեղերում. անդամների վերջն են
քաշված նաև զնա, նմա, նորին, նորա դերանվանական ձևերը,
որոնք միևնույն քերականական դորժառնությունն ունեն. ճիշտ
համապատասխան տեղերում են նաև ընկեր, գոյություն,
բնութին, նիւթ ենթակաները և սրանց՝ հաւասար, ընդդիմա-
կաց, նիւթաբեր, ինչ որոշիչները: Այսպիսի ներդաշնակ ու չա-
փակից շարադասությունը իր հետ ունենում է նաև կանոնա-
վոր կշռությի, որ պայմանավորված է անշեշտ և շեշտված վան-
կերի համաչափ հաջորդությամբ, այսինքն՝ անդամների հա-
տաժները գրեթե վանկաքանակով միմյանց հավասար են և
շեշտված ու անշեշտ վանկերի տեղերը հատաժների մեջ հա-
մապատասխանում են և ըստ այդմ ունեն միևնույն ժամա-
նակը:

Բոլոր պարբերութիւնների առաջին մասերը այսպիսի ճշ-
տությամբ չեն անդամահատվում և չեն կարող ունենալ այդ-
պիսի համաչափ կշռութային տարրեր: Նույնիսկ չափածո
խոսքի մեջ. այդ իր բոլոր մանրամասներով հաճախ չի պահ-
պանվում:

Անհրաժեշտություն չկա, որ պարբերութի առաջին մա-
սի անդամները այդքան ստույգ համամասնություն ունենան,

նույն ներդաշնակ համաշափությամբ և ստույգ կառուցիկ դասավորությամբ թվարկվեն, բավական է, որ այդ անդամները քերականական համասեռությամբ միասնանան, կդառնան պարբերության մաս: Նկատի ունենալով պարբերության առաջին մասի անդամների հարակրկնությունները, վերջույթները, շարահասական միավորների զուգահեռ ու համապատասխան դասավորությունը, ամանակների ու կշռության կանոնավորությունը, — այս տեսակ մաս ունեցող պարբերությունը կոչում ենք շափակից պարբերություն, իսկ մյուսը, որի առաջին մասի անդամները այդպիսի ստույգ ու խիստ շափակցություն չունեն, դրան հակադիր, կոչում ենք անշափակից պարբերություն:

Այժմ տեսնենք, թե պարբերության առաջին մասը քերականական ինչ կառուցվածքներ է ունենում և ինչպես են արտահայտվում դրանք:

Ա. Պարբերության առաջին մասը կարող է կազմված լինել տարբեր բնույթի երկրորդական նախադասություններից, որոնք թվարկվում են իբրև միասեռ անդամներ, իսկ երկրորդ մասը իբրև գլխավոր նախադասություն ամբողջացնում և փակում է այդ շարքը:

Օրինակ՝

- 1 Թեկուզ գովե հայրենիքդ, 2 Թեկուզ հայհոյե
նորան,
- 3 Թեկուզ դրախտ ասա և կամ դժոխք կոչէ
Հայաստան
- 4 Թեկուզ դու նենդ կոչե հային կամ հրեշտակ
սուրբ ու անկեղծ,
- 5 Թեկուզ գլուխդ պատին խփե, — դու չես ասվիլ
բանաստեղծ (ՌՊԵ, 205):

1 Եթե հորեղբայրն բան մը գրած չըլլար իրեն, 2 Եթե ներելի ըլլար հարազատ եղբայրներուն մեջ տարբեր մականուններ գործածել, — անշուշտ ինքն ալ չպիտի ստիպվեր փոխել յուր մականունը, օրինավորությունն է, որ կստիպե խեղճը Լուսինյան հորջորջվելու (ՀՊԸՆ, I, 196):

- 1 Երբոր բացվին դռներն հուսո,
- 2 Երբ մեր երկրեն փախ տա ձմեռ,
- 3 Չքնաղ երկիրն մեր արմենիո,
- Երբ փայլեն յուր քաղցրիկ օրեր,
- 4 Երբոր ծիծառն իր բույն դառնա,
- 5 Երբոր ծառերն հագնին տերև,—
- Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
- Աշխարհ, որ ինձ ետուր արև (Ռուսինյան):

Երկրորդական նախադասությունները կարող են լրացվել երկրորդական կարգի երկրորդական նախադասություններով, որոնք բարդացնում են պարբերույթի առաջին մասը, սակայն նրա բնույթը չեն փոխում:

Բ. Պարբերույթի առաջին մասի բոլոր անդամները կարող են լինել բարդ ստորադասական նախադասություններ. օրինակ՝

- 1 Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,
- 2 Թե ջավայիր ասիմ՝ քարեմեն կոսին,
- 3 Թե որ լուսին ասիմ՝ տարեմեն կոսին,
- Արեգակի նման փարա իս, գողալ (Սն, 31):

Գ. Պարբերույթի առաջին մասը կարող է կազմվել գլխավոր նախադասությունների շարքից, որոնք փակվում են մի երկրորդական նախադասությամբ: Այս երկրորդական նախադասությունը, ոչ թե առաջին մասի որևէ անդամի լրացում է, այլ ամբողջ մասի համար է, եզրափակում է այն և ամբողջացնում. օրինակ՝

1 Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենեն կը դողար, 2 քարոզիչն ու թաղական խորհուրդը կ'ակնածեին իրմե կ'զյուղացին կը մեծարեի այս հավատացյալ աղան, 3 իր իր բոլոր հարստության հակառակ աղքատի մը պես խոնարհ ու աստվածավախ կը թվեր (ԳԶԵԺ, 1, 268):

Դ. Առաջին մասը պարզ նախադասությունների թվարկվող շարք է, իսկ երկրորդ մասը այդ թվարկվող շարքը փակում է համադասական կապակցությամբ. օրինակ՝

1 Փշում էր քամին, 2 աչրում էր արևը, 3 անձրևն ու հեղեղ-
ները թրջում էին նրան, 4 ամպերը գլխին որոտում, 5 փոթորի-
կը նրան ժայռեժայռ խփում, 6 կայծակը նրա շուրջը շանթիչ
դժեր պարզում, 7 և սակայն ծառը համառ անդրդվելի ելնում
էր ելնում և մշուշոտ բարձր կատարների ձգտում (ՎՓԸԵ,
288):

6. Առաջին մասը կազմվում է նաև միավորյալ նախա-
դասություններից, իսկ երկրորդ մասը դրանց հետ կարող է
կապվել կամ համադասական, կամ ստորադասական կա-
պակցությամբ. օրինակ՝

1 Եւ արդ՝ զի՛նչ դորժեսցես անձն իմ կորուսեալ, 2 կամ ո՛ւր
թաքիցես, 3 կամ զիարդ ապրեսցիս, 4 կամ ո՛րպէս ելցես ի մե-
ղաց բանտէ, 5 քանզի բազում են պարտիքդ, և անթիւ հա-
տուցմունք (ԳՆՄՈ, 8):

1 Իրիկունը մետաքսներու պես փափուկ,

2 Իրիկունը շարբաթներու պես քաղցր է,

3 Իրիկունը բաժակն է՝ շուրթը տամուկ,

4 Զոր նայադ մը հրամցընել կը բերես (ՄՄԵԺ,
106):

1 Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ՝ իմ կյանքի հետ լինելի,

2 Հազար Էրնեկ՝ դաշտում մենակ՝ երկնքի հետ լինելի. 3

Բայց ով կտա էն վայելքը՝ ինքս ինձ էլ չղգայի,

Ու հալվի ծավալվելի, ամենքի հետ լինելի (ՀԹԵԺ, I,

212):

2. Պարբերույթի առաջին մասը կազմվում է գերբայա-
վոր կապակցություններով, որոնք ընդհանրացվում են երկ-
րորդ մասով. այդ գեպքում երկրորդ մասը ունենում է ընդ-
հանրացնող հատուկ բառեր ու կապակցություններ, որոնք
հենց որոշում են պարբերույթի երկու մասերի սահմանները.
օրինակ՝

1 Հետին միջատին կյանքը ճանչնալ ու 2 կարող ըլլալ միան-
գամայն ամեն աչքերու անտես լուսավոր գունտի մը համակ

շավիղը ճշտել երկնից մեջ՝ անհունապես փոքրը ու անհու-
նապես մեծը ըմբռնել, ճիմիկուց գիտնալ անցյալը, որ խա-
վարն էր, ներկան, որ ստվերն է և ապագան, որ լույսը պիտի
ըլլա, — ոչ, այս ամենը մեկանց պիտի շուղեր տեսնել միակ
մտքի մը մեջ (ԳՁԵԺ, I, 437):

Դերբայալոր կապակցություններն իբրև առաջին մասի
անդամներ երբեմն հանդես են գալիս բառակապակցություն-
ների հետ միասին. այս դեպքում անդամների համասեռու-
թյան իբրև պայման առկա են լինում հարակրկնությունները
(ամեն անդամի սկզբում նույն բառը կրկնվում է), անդամ-
ների համամասնությունը, շարադասական ղուգադրություն-
ները, կշռույթը և այլն. օրինակ՝

Ոչ բարձրաձայն խոսակցությունս, թրուն ակամա ուն-
կընդիրն էր, ոչ վրդովյալ շարժուձևերս, ոչ իրեն ուղղած հա-
մառ ու բոցավառ նայվածքս, — ասոնց և ոչ մեկը կրցավ իր
գեղեցիկ մարմարե արձանի վայելուչ անտարբերությանը
հաղթել (ԳՁԵԺ, I, 157):

է. Դերբայական դարձվածներին հար և նման պարբե-
րույթի առաջին մասի համար անդամներ են դառնում բառա-
կապակցությունները, որոնք դարձյալ երկրորդ մասի որևէ
ընդհանրացնող բառով եզրափակվում, ընդհանրացվում են
իբրև մի ամբողջական պարբերույթ: Փաստորեն դերբայա-
կան դարձվածներով կամ բառակապակցություններով կազմ-
ված պարբերույթները իրենց ընդհանրացնող մասի հետ
միասին մի պարզ նախադասություն են կազմում, սակայն
այդ երկու մասերը տարբեր հնչերանգներով ու ուժգին դա-
դարով այնպես են տրոհվում միմյանցից, որ առաջին մասը
իբրև երկրորդ մասի լրացում չի գիտվում, ընդհակառակը,
երկրորդ մասը գիտվում է իբրև ընդհանրացում ու եզրակա-
ցություն առաջին մասի համար: Այստեղ պարբերույթ կազ-
մելու համար մեծ դեր են կատարում ընդհանրացնող բառե-
րը, որոնք երկրորդ մասը առանձնացնում են առաջին մա-
սից և երկուսի համար ապահովում են պարբերույթի հավա-

սարազոր մասեր լինելու պարագան: Իսկ եթե ընդհանրացող բառերը պակասում են, առաջին մասի հավասարազորությունը թուլանում է և արդեն այն երկրորդ մասի համար լրացման տպավորություն է թողնում, շնայած որ երկու մասերի համար տարբեր հնչերանգային արտաբերումն ու դադար որոշ չափով առկա են. օրինակ՝

1 Փոխանակ զղջալու, 2 փոխանակ դարձի գալու, 3 փոխանակ բարությամբ կրկին գրավելու նրանց սերն ու հարգանքը, — դու սկսեցիր բռնություն գործ դնել (ԲՆԺ, VII, 524): Եթե առաջին մասի թվարկվող անդամներից հետո երկրորդ մասը սկսվեր այսպես՝ այդ բոլորի փոխարեն դու... ահա այս դեպքում այդ բոլորի փոխարեն ընդհանրացնող կապակցությունը դառնում է երկրորդ մասի համար մի տեսակ փոխարինող լրացում, իսկ առաջին մասի թվարկվող անդամները դառնում են լիիրավ մաս պարբերույթը ձևավորելու համար: Ահա բառակապակցություններով առաջին մասի օրինակ՝

1 Ոչ հողիի և ոչ մտքի պատշաճություն երկուքին մեջ 2 ոչ կրթության և ոչ զգացումի ներդաշնակություն. 3 ոչ տարիքի և ոչ մարմնի հարմարություն, — այլ բիրտ հպումը, անմեկնելի ու հավիտենական մերձեցումը, ավելի բիրտ քան այն զույգ մը եղինը, որ արորի մը կը լծվի և ուր գոնե գոյնի, տարիքի, ույժի ներդաշնակություն կը փնտրվի (ԳԶԺ, I, 147):

Ը. Պարբերույթի առաջին մասի անդամներ կարող են դառնալ նաև մի եղանակավոր բայից կախված թվարկվող անորոշ դերբայները՝ իրենց դարձվածային ձևավորվածությամբ, ուր առաջին անդամի հետ եղանակավոր բայը հիշատակվում է, իսկ մնացածները թվարկվում են առանց դրա. օրինակ՝

1 Փորձեցի փոքր ինչ մնալ անշարժ, 2 աչքերս փակել, նորից ծովի շշուկին ականջ դնել, 3 նրանով օրորվել, 4 մոռացություն մեջ ընկղմվել, — բայց անկարելի եղավ (ՎՓԸՆ, 386):

Այս նույն ձևով մի զլխավոր նախադասությունից կախված համասեռ խնդիր նախադասությունները նույնպես պար-

բերուցի առաջին մաս են կազմում, եթե երկրորդ մասը
ձևավորվում է իբրև այդ միավորյալ անդամները ամբողջա-
նող, ընդհանրացնող մաս կամ իբրև հակադրություն. օրի-
նակ՝

Նրանք ասում են, որ դու անցել,
2. Աւ հնացել ես, 3. ու հեռացել,
4. Ու լքել են քեզ ու մոռացել
Օրերում այս խենթ ու դարձդարձիկ, +
Բայց տես՝ կանչում է ահա մի ձեռ-
եվ մի սիրտ, որ քեզ սիրում է դեռ (ԵԶԸԵ, 192):

Թ. Պարբերուցի առաջին մասի համար իբրև անդամ-
ներ կարող են հանդես գալ անորոշ դերբայով կառուցվածք-
ներ, որոնք ընդհանրացվում են երկրորդ մասով իբրև ենթա-
կաներ, խնդիրներ կամ նախադասության այլ անդամներ.
օրինակ՝

1. Երկյուղ տալ երեխային դեի, շար սատանայի, ալքերի,
խլվիկի, մարդագայլի, դերվիշի և այլ սարսափելի անուն-
ներով, և 2. միևնույն ժամանակ հրապուրել նրան աստուծո,
հրեշտակների և սրբերի խոստումներով, — այդ բոլորն ավե-
լի նուրբ միջոցներ են երեխայի կրթելու համար (ԲԵԺ, IX,
390—391):

Այս դեպքում անդամների թվարկվող միավորները նույն-
պես նպաստում են պարբերուցի առաջին մասի ձևավոր-
ման:

Ժ. Պարբերուցի առաջին մասի համար իբրև անդամներ
հանդես կարող են գալ միավորյալ ենթականեր. այս դեպքում
դրանք բաղմանդամ պետք է լինեն և հետո վերջում պետք է
ունենան ընդհանրացնող բառ կամ բառակապակցություն:
Երբ այս վերջինները չկան, ապա երկմասնության հնչերան-
գը թուլանում է և ամբողջը թողնում է պարզ նախադասու-
թյան տպավորություն. օրինակ՝

1. Հայրենիքիդ ծառ ու ծաղկունք,
2. Քար ու քարափ խոր ձորեր,

3 Անմահական անուշ ահունք,
4 Արագածի քաղցր հովեր,

5 Շինականի շարն ու բարին,

6 Ուրախություն, դարդն ու ցավ,—

Թե տվեցին քո հանճարին,

Կարող վրձինդ շարժվեցավ (ՀՀՀ, 100):

Եթե երկրորդ քառատան երրորդ տողը սկսվեր և այդ ամենը՝ կամ դրանք, բոլորը և այլն բառերով, ապա այդ կլիներ իսկական պարբերությ. շնայած Հովհաննիսյանը մի շարք ենթակաները կուտակել է մի քառատողում, այսինքն՝ փաստորեն անդամահատել է և երկրորդ քառատողում էլ նշած ենթակաները դժով բաժանել է ստորոգյալից, այնուամենայնիվ լրիվ պարբերությ չի ստացվել: Համեմատիր վերևի հետ հետևյալ օրինակը.

Պապը հիմա որ կողմը դառնում էր՝ ամեն ինչ, յուրաքանչյուր մի իր, յուրաքանչյուր առարկա, թե կարասի, դենք, թե գորգ, — բոլորը, բոլորը հիշեցնում էին հորը կամ մորը և իր պատանեկության օրերը (ՍԶՊԹ, 88):

ԺԱ. Այդպես էլ նախադասության այլ անդամներ կարող են դառնալ պարբերության առաջին մաս, երբ նրանք մասնատվում և հակադրվում են երկրորդ մասին. օրինակ՝

1 Ոչ շղթաների դաժան բեռի տակ, 2 ոչ փուշ պսակով

3 Եվ ոչ ծանր խաչ կորացած ուսին,— (Այս բաժանումը հեղինակինն է):

Նա աշխարհ կգտ մի նոր զորությանմբ և մի նոր փառքով,
Բախտի պայծառ ջահն անհողդողդ ձեռին (ՀՀՀ, 158):

Առաջին մասը ձևի պարագաներից է կազմված, որոնք մասնատված են իրենց լրացյալից ոչ միայն հնչերանդով, այլև երկրորդ մասի հակադիր ձևի պարագաներով:

ԺԲ. Պարբերության առաջին մասի հիմնական անդամ կարող է լինել միևնույն կրկնվող ենթական, որն ունի լրացուցիչ երկրորդական նախադասություններ. փաստորեն այդ ենթա-

կայի հետ միասին երկրորդական նախադասությունները դառնում են առաջին մասի անդամներ, իսկ երկրորդ մասը հիշյալ թվարկվող ենթակաների ստորոգյալն է, որ փակում է ամբողջ թվարկվող շարքը: Այսպիսի պարբերությամբ բարդ նախադասություն է՝ մի շարք միջադաս երկրորդական նախադասություններով, բայց երկրորդական նախադասությունները պարբերության մաս են կազմում, մեկ որ բաղմադան են և ունեն միևնույն անդամահատությունը և երկրորդ՝ միշտ գլխավոր նախադասության ենթակայի հետ են հիշատակվում իբրև միասնական մի անդամ. օրինակ՝

- 1 Դու որ մատղաշ տարիքիս
Հարսանեկան քողս արշունով ներկեցիր
Եվ թույլ տվիր՝ որ թևերուս վրա ջարդեն
Լուրթ քողեքներս բնիկ հողով թրծված,
- 2 Դու որ այս ծեր տարիքիս մեջ տակավին
Երկամունքս լոկ քաղցով լեցուցիր
Եվ սրբազան ցուպը մեկնող հասակիս
Թաթախեցիր արյան մեջ,
- 3 Դու որ որդվույդ խաշն ողբալեն բլշակնած
Իմ աչքերս այս սահմանեցիր դեռ լալու
Մորթված յոթը զավակ,—
- 4 Դու՝ զերդ վիշապ երկնածին
Երկու թաթերդ երկու ամպի վրա դրած,
Ծոհ և տես ողորմությանդ ստությունն
Հոն վարը, տես (ԴՎԲ, 132—133):

Այսպիսի կազմությունները կատարյալ պարբերությամբ են մանավանդ այն դեպքում, երբ առաջին մասի կրկնվող ենթական հիշատակվում է նաև երկրորդ մասում, որով հենց երկրորդ մասը լրիվ հանդես է գալիս իբրև առանձին հնչերանդային իջնող մաս. համեմատիր հետևյալ օրինակը՝

Ամեն ինչ, բնության տեսարանը, մարդկային զգացումը, քաղաքի սիլուետը, նոճիներու սլացումները, մուկինին

աղոթքը, — ամեն ինչ միայն իրենց բարձրագույն գերազըրգության կհասնին, այլև կխառնվին իրարու հետ (ԶԵԵ, 137):

ԺԳ. Պարբերույթի առաջին մաս կարող են կազմել այնպիսի համասեռ երկրորդական նախադասությունները, որոնք կախված են մի գլխավոր նախադասությունից, որը, սակայն, երկրորդ մասի սկզբում կրկնվում է և կարծես սկսում է մի նոր գլխավոր նախադասություն իր հնչերանգային ամբողջությամբ. օրինակ՝

Դժվար է, երբ կիրքերը այսքան բորբոքված են, երբ քաղաքական բնույթ ունեցող հարցերը անմիջական և վճռական նշանակություն են ստացել, երբ մարդիկ օրը-օրին կապրին առանց ետ նայելու և առանց իրենց միտքը սեւեւելու ապագայի հորիզոններուն, — դժվար է ոչ միայն մարդիկ զբաղեցնել արվեստով, այլ նույնիսկ ամփոփվիլ և անխառն հաճույքով անձնատուր ըլլալ մեր կրաղին (նույն տեղում, 142):

ԺԴ. Այդպես էլ նախադասության այլ անդամների նկատմամբ կախյալ հարաբերության մեջ գտնվող երկրորդական նախադասությունները կազմում են պարբերույթի առաջին մաս, եթե այդ անդամը երկրորդ մասում կրկնվում է իբրև սկիզբ հիշյալ մասի՝ օրինակ.

Այս քաղաքում, ¹ ուր ցոփ արքաներ են ապրել,

2 Ուր շաշել է մտրակը ստրուկների վզին,

Որպես վերին պարզև, ուր հյուսիսի

Մառախուղի նման այս անտարբեր

Իշխաններն են դարեր առևանգել, հարբել,

Կախաղաններ կանգնել հարյուրներով, —

Այս քաղաքում հիմա եռում է կյանք մի նոր,

Զարմանալի մի կյանք (ԵԶԸԵ, 183):

Այս նախադասությունները կամ բառերն ու բառակապակցությունները, որոնցից կախված են առաջին մասի անդամները, հենվում են պարբերույթի երկրորդ մասի վրա. ճիշտ է, դրանք առաջին մասի անդամների հետ փաստորեն

միասնաբար են հանդես գալիս, բայց անդամ չեն համար-
վում: Պարբերութի հնչերանդային սկիզբը թվարկվող ան-
դամից է սկսվում: Փաստորեն այդպիսի նախադասություն-
ները, բառերն ու բառակապակցությունները երկու մասերի
ամբողջացման համար կապակցող, միջնորդավորող դեր են
կատարում:

ԺԵ. Պարբերութի առաջին մասի համար իբրև անդամ-
ներ են հանդես գալիս նաև թվարկվող բաղմադան այնպիսի
կոշականներ, որոնք կիրառվում են ոչ թե նրա համար, որ ան-
ձանց դիմենք ինչ-որ գործնական նպատակով մի խոսք ասե-
լու, այլ բերվում են իբրև թեմային տարրեր՝ նրանց վերաբե-
րող խոսքը առաջ տանելու համար: Այդպիսի կոշականները
սովորաբար ուղեկցվում են զանազան լրացուցիչ բառերով
ու բառակապակցություններով և հաճախ նույնիսկ որոշիչ երկ-
րորդական նախադասություններով: Այդպիսի կոշականները
կամ դառնում են ենթակա թվարկվող այդ շարքից հետո եկող
երկրորդ մասի համար և կամ էլ երկրորդ մասը դրանց ուղղո-
ված որևէ խոսք է:

ված որևէ խոսք է. օրինակ՝

1 Դուք՝ պալատական, 2 դուք՝ արդարև
Դժնի դպրության կոթողներ սին,
3 Թշնամի կյանքին, սրտին, լույսին,
Հանուն սրբության անեղծ կույսի՝
Քերթողներ կրքի ու տոփության,—
Դո՛ւք չեք այսօրվա մեր դպրության
Դարերից հորդող գետն այն փարթամ,
Որ գեռ հավիտյան պիտի երթա (ԵԶԸԵ, 242):

1 Օ, դուք, հեռավոր եղբայրների իմ,
2 Քերթողներ գեղջուկ հայրենիների,
3 Երգասան ճորտեր՝ մտքով գերի
Ձեր ժամանակվա օրենքների,—
Ահա բարբառը ձեր երգերի
Հասած մինչև ինձ՝ իմ ձեռքերից

Անցած նորանոր երգիչների՝

Հորդում է արգեն իր ամերից (նույն տեղում,
244):

Ինչպես տեսնում ենք, այս բաղմազան օրինակներից, պարբերության ձևավորման համար կարևոր է առաջին մասը. մինչև որ այն շկաղմակերպվի իբրև համասեռ անդամներից կազմված որոշ շափակցություն ու կշռույթ արտահայտող և հնչերանդորեն բարձրացող շարք, պարբերության մաս չի կարող կազմել:

Բայց պետք է ասել, որ ինչքան էլ առաջին մասը իր բոլոր հատկանիշներով կաղմակերպված ու ձևավորված լինի պարբերության պահանջների համապատասխան, առանց երկրորդ մասի ներկայացնում է թվարկվող անդամների անավարտ շարք, որ մնում է բաց, իսկ պարբերության հատկանիշներից մեկը փակ լինելն է, մի բան, որ կատարվում է երկրորդ մասով. սա է, որ փակում, հղրափակում և իմաստային ու կառուցվածքային առնչություններով ավարտուն է դարձնում արտահայտությունը և թվարկվող շարքը կլորացնում, շրջանակում, նրա հետ միասնաբար կազմում է պարբերություն:

Կառուցվածքի կողմից երկրորդ մասը ձևավորվում է ըստ առաջին մասի. եթե առաջին մասում թվարկված են այս կամ այն տիպի երկրորդական նախադասություններ, ուրեմն երկրորդ մասը դրանց համապատասխան մի գլխավոր նախադասություն է. օրինակ՝

1 Երբ բլուրն ի վար
աղբյուրեն դարձին
իր վարսքի խուրձին
մեջը սողոսկի
նուրբ մատիկն ոսկի
արևի լույսին,

2 Հին սափորն ուսին
երբ բլուրն ի վար
աղբյուրեն դարձին

մեղմով ծածանի
լաշակն հողմավար՝
թևով թռչունի.

3 ու ծիածանի
թույրով սլապղա
աչքն իր գեղանի.

4 և երբոր ցնծա
հնչյունը՝ ծնծղա
զարդոսկիներուն,—
տենչանքով անհուն
հոգիս պիտ ըղձա
դանձեր, զոր շունի (ՄՄԵԺ, 82):

Այս օրինակի մեջ ժամանակի պարադա շորս նախադասություններ փակվում են «տենչանքով անհուն հոգիս պիտ ըղձա դանձեր» գլխավոր նախադասությամբ:

Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակ-տարածությունը, իմ հոգու դրսևորումն է նա և իմ կամքի ու մտքի առարկայացումը,— ապա ուրեմն ես հզոր եմ մահից ու անմահ է իմ եսը (ԱԻԵԺ, III, 218):

Առաջին հրեք նախադասությունները պատճառի պարադա երկրորդական նախադասություններն են, իսկ վերջինը գլխավոր է, որ արտահայտում է եզրահանգում:

Եթե առաջին մասի անդամները գլխավոր նախադասություններ են, ապա երկրորդ մասը այդ բոլորը լրացնող տրեփ տիպի երկրորդական նախադասություն է. օրինակ՝

Հիմա ելնում ենք մենք մեր կաշվից,
Հիմա հոգնում ենք, տնքում անքուն,—
Որ մեր զնգուն այն հիմար Զանգուն
Քիլովատներ ու վոյլտեր հաշվի (ԵԶԸԵ, 107):

Կուլին, բանվորը, գյուղացին այս հնամենի դրոշակի տակ է գրոհ տալիս ու մրրկում ընդդեմ դարավոր կեղեքիչ

մանդարինների, ընդդեմ ճապոնի արյունառուշտ աշխարհա-
կալության, ընդդեմ Եվրոպայի ընչաքաղց դրամատիկների,—
որոնք հաշիշով և շահագործման նենգ ձեռնարկներով ծծում
են չին աշխատավորների ուղն ու ծուծը (ԱԻԾԺ, 253)։

Պարբերությունների երկրորդ մասը կարող է լինել համադա-
սական բարդ նախադասության մաս, եթե առաջին մասի ան-
դամները միավորյալ կամ թվարկվող համադասական նա-
խադասությունների շարք են կազմում. օրինակ՝

Մենդարեությունից միայն կես ժամ առաջ նա հրա-
ժարվում էր աշխատելուց, դեմքի վրա հազիվ նշմարվում էր
ցավագին ինչ-որ ծամածռություն, ապա ժպտում էր ջինջ,
գնում առանձնանում, բռնում կողերը,— և ահա ծնված էր
լինում մեղանից մեկնումեկը (ՎԹԵ, 26)։

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն,
Ուղեցի սիրել շշուկն իմաստուն
Արևանման, արնավառ խոսքի,—
Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար,
Խոսքեր չկային ու արև չկար (ԵԶԸԵ, 137)։

Երկրորդ մասը կարող է լինել բարդ ստորադասական
նախադասություն, որ նախորդ մասի հետ առնչվում է համա-
դասական կապակցությամբ. օրինակ՝

Բակին և պարտեզին դռները կբացվեին, վարագույրները
կուռեին և կշաշեին առադաստներու պես, դրացիները համար-
ձակություն առած՝ կմտնեին կելլեին, մորաքույրերս կհազ-
վեին, կքսվեին և տեսակ մը անկախության ձգտում կստա-
նային,— բայց ինչ որ ամենևին դարմանալին ու հրաշալին
էր, այն էր, որ մեծ մայրիկիս տխուր կնճռոտ դեմքին վրա
ժպիտ կերևեր (ԶԵԵ, 450)։

Հաճախ պարբերությունի առաջին մասի թվարկվող ան-
դամները արտահայտում են առանձին մտքեր, որոնք միա-
վորվում են քերականական համասեռությամբ, իսկ երկրորդ

մասը այդ առանձին մտքերի ու արտահայտությունների ընդհանրացումն է իբրև մի ամբողջություն. օրինակ՝

- 1 Դուք տեսած եք հայրենի լեռները մեր խրոխտապանծ Պսակված՝ ամպի մեջ բուսնող անտառներով անթափանց. Զոր կը հոտեն լոկ շանթերն, ու լոկ հեղեղը դեղին Հոտված ծառերը մինչև կը բերե մոտը գյուղին.
- 2 Դուք տեսած եք կիրճերու խորն անձավներ, որոնց մեջ Կապրին (կրսեն) ջատուկներ կթելով էդ գայլ մ' անվերջ Եվ որոնք մերթ լուսնին տակ երգելով երգ մ' հրապուրիչ Վար կը կանչեն սարին վրա նստող կովարծը կտրիճ.
- 3 Դուք տեսած եք մարգագեղ անծայրածիր արոտներ, Ուր գառնուկներ կարածին թիթեռներու առնթեր, Ուր կը սահի արևուն միահեծան փառքին տակ Գետակ մը ջինջ՝ կաթի պես և եղկ անոր հանգունակ..., —
- Դուք տեսած եք փոթորկեն վերջ (երբ փայլակը հեռուն) Դեռ կը խաղա՝ ցույց տալով մերթ արևն ծոցն ամպերուն նստած հովիվն իրիկվան դեմ փարախին քով անհող՝ Կը շորցնե շանթահար կաղնիին դեմ հրաբորբոք Իր թաղիքն տառատուկն անձրևին տակ ծանրացած, Կամ կը հյուսե տրեխներ մացառներեն քճքճած.
- 5 Դուք տեսած եք կամ ինչպես ան կը մորթե այծ մը հույր (Որուն արյունը կ'հոսի ձար մորուքեն մամռաբույր) Եվ շամփրելով դայն կրակին վրա կը դարձնե, իբրև ճաշ, Թողլով որ քաղցր հոտն ընե շուրջի գայլերն հալումաշ.
- 6 Կամ տեսած եք կեռակտուց անդղ մ' ահեղ, որ խլած Մորթը քերված նույն այծին՝ կելլե երկինք վերասլաց, Ահավասիկ այս բոլորն, այս պատկերները խուժողով Իր հեքիաթներն էին նախ՝ երգված սրտին մեջ անուշ (ԴՎԲ, 190):

Այս հատվածը, մի պարբերությ է: Անդամների մեծ ծանրաբեռնվածությունը որոշ չափով դանդաղեցնում է հնչերանգային հաջորդական լարվածությունը, ուստի թվում է թե

անդամներն անջատ միավորներ են, բայց որովհետև միշտ առկա է հարակրկնությունը (դուք, կամ) և մանավանդ այդ ամենը ընդհանրացնող («ահավասիկ այս բոլորն...») եզրափակիչ մասը, այս ընդարձակ հատվածը դառնում է իսկական պարբերությի:

Երկրորդ մասը կարող են կազմել նաև երկրորդական նախադասություններից առաջացած դերբայական դարձվածներ, եթե վերջում դրանք հնչերանդով անջատվում են առաջին մասից և կազմում են հակադիր կամ զուգահիշ մաս. օրինակ՝

Գրոհ է տալիս ու մրրկում բյուրավոր զոհեր տալով՝
1 խորտակելու բոլոր պարիսպներն ու բանտերը բռնության,
2 խորտակելու բոլոր բուրգերն ու բերդերը դրամապետության,
3 խորտակելու համար բոլոր լուծերն ու շղթաները աղքատության և ստրկության, — ստեղծելու համար ազատության իրավունքի, մարդավայել աշխատանքի և արդար վայելքի լուսակերտ աշխարհը դարավոր Շանգ-Շենգի փլատակների վրա (ԱԽԵԺ, III, 253):

Այս պարբերությի առաջին մասի միավորյալ անդամներն սկսվում են խորտակելու ձևի հարակրկնությամբ, որոնք կախված են «գրոհ է տալիս ու մրրկում» նախադասություներից. իսկ երկրորդ մասը սկսվում է «ստեղծելու համար...», որ հակադրվում է նախորդին իմաստով և հնչերանգային անկախությամբ: Եթե առաջին մասի միավորյալ անդամները արտահայտվեին ամբողջական նախադասություններով, ապա երկրորդ մասը կդառնար լոկ նպատակի պարագա և ոչ թե պարբերությի մաս: Բայց քանի որ քերականական ձևավորվածությամբ նրանք միևնույն աստիճանի վրա են գտնվում, իսկ իմաստով ու հնչերանգով հակադիր ու անկախ են, ապա միասին կազմում են մի պարբերությի:

Պարբերությի երկրորդ մասը երբեմն ձևավորվում է առաջին մասի սկզբի որևէ նախադասությամբ կամ բառակապակցությամբ, որը տվյալ դեպքում կարևոր է առաջին մասի համար. սա առաջին մասի իմաստային կենտրոն է

կազմում: Այդպիսի նախադասութեամբ կամ բառակապակցութեամբ սկսվող երկրորդ մասը ավելի սերտ է կապվում առաջին մասի հետ, և ամբողջացման ըմբռնումը առավել որոշակի է: Կրկնվող այդ նախադասութեանը կամ բառակապակցութեանը առաջին մասը օղակաձև շրջանակում է և սկսում է երկրորդ մասը. օրինակ՝

Այն ավերում, տւր դու, օ, տարիներ առաջ,
Թափառելով՝ սիրո երգեր էիր գրում
Եվ գուրգուրում, իբրև սերունդների երազ,
Այն, որ թաղված մնաց քո գրքերում,—

Այն ավերում հիմա մի բարբարոս հովիվ,
Երազելով քեզ պես կնոջ գգվանք ու սեր,
Ունկնդրում է միայն շշուկներին հովի
Եվ, երգերի տեղ քո, երգում անբառ մի շեր)
(ԵԶԸԵ, 252):

Հոս կը ննջես, քեզ կը պատե լռութեանն.
Օվկիան մ' ես՝ զոր կը ծածկե այդ պատանք.
Կարմիր հրդեհ մ'որ մոխրի տակ կ' առնե քուն.
Դու կը ննջես, ինչպես հրատն ամպի տակ
(ԴՎԲ, 115):

Պարբերութի երկրորդ մասը կարող է բարդանալ տարբեր լրացուցիչ նախադասութեաններով, նույնիսկ ինքն իր հերթին կարող է դառնալ պարբերութեային մի կազմութեան, ըստ կառուցվածքի նմանվել պարբերութի, սակայն քանի որ այն ինքնուրույն սկիզբ չունի (կառուցվածքով և հնչերանդով կապված է առաջին մասի հետ), ապա այն անկախ պարբերութ չի կարող համարվել: Դա պարբերութի երկրորդ մաս է, միայն արտահայտվում է բաղմաբարդ ձևով. օրինակ՝

Ես կարծում եմ ոչ հոր եղևոնական մահը, ոչ մոր շուտփութեամբ ամուսնութեանը, ոչ հորեղբոր աղգապիղծ վարմունքը, ոչ Օֆելիայի թեթևամտութեանը, (ոչ Պոլոնիոսի պալատական նենգավորութեանը,— ոչինչ, ոչինչ էնքան վիրավորական

շպետք է լինեն դժբախտ Համլետի՝ էն առաջին ինտելիգենտի հոգու ազնվության, արքայազնի վեհության, փիլիսոփայի խորության, հանճարեղ նրբամտության ու վշտի ծանրության համար, որքան հայ դերասանի անճաշակ լավիանությունը, վախկոտ հայացքները դեռ ու դեն, անմիտ վազվզելը պատից պատ, անտեղի աղաղակներն ու լաց ու կոծը կամ ուրիշ դերասանի հիստերիկ հեկեկոցներն ու հռհռոցները, հիվանդագին գալարումները, անդադար ծամածռությունները ու գոռում գոշումները (ՀԹԵԺ, IV, 114):

Ուր սուր ծերպերով ահեղ ցիր ու ցան,
 Լեռներն են բազմած բնության արձան,
 Ուր մութ ամպեր են գունդագունդ զինվում,
 Փայլակ կայծակով իրար հետ կռվում՝
 Զարնելով միմյանց երկիր ու եթեր,
 Թռչկոտում են հուր կայծակի շանթեր,
 Խաղում են, գոռում ճայթյուն որոտով,
 Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով,—
 Այնտեղ գիշերվա խավարի միջին
 Մի խարույկ վառվեց կալվարի լանջին.
 Զորերի քաջեր որսի են հկել,
 Կրակի շուրջը կարգով նստոտել.
 Ոմանք շտկում են շողշողուն զենքեր,
 Կարմիր բոցերից փայլում են դեմքեր,
 Ոմանք խորովում հղնիկ կամ վարազ
 Երկար ձողերը շեղջերին շարած,—
 Եվ լուռ նստոտած յափնջի տակին
 Շարունակ լարված լսում են մեկին (ՎՄԼՈ, 38):

Պարբերության երկրորդ մասը առաջինի հետ կապակցվում է շաղկապներով, շաղկապալին ու ընդհանրացնող բառերով և կամ առանց դրանց: Շաղկապներով կապակցվող մասերը տրամաբանապես հեշտությամբ զատվում են միմյանցից. օրինակ՝

Հրաշք սիրում էր եղբորը, եղբայրը նրա օրորոցն էր օրորել, տարել էր պարտեզները ման էր ածել, պատանեկության իր պատասխանատվությամբ նրան այգիներ էր տարել, դասն էր սովորեցրել, փողոցի թշնամի տղաներից պաշտպանել, ինչ որ տնից թոցրել էր, նրան էր տվել, նրա համար թոուցիկ էր շինել, լողալ էր սովորեցրել,— բայց Վերոնիկայի մազի մի թելը մոռացրեց այդ բոլորը և հանկարծ մի օր Հրաշք դադարեց Վահրամի հետ խոսելուց (ՎԹԵ, 79):

Ես լուռ կթաղեմ իմ ցավը միակ,
 Զվարթ կժպտամ բախտավորի պես,
 Երբեք չեմ բանա սրտիս մութը փակ,
 Երբեք չեմ հայտնի իմ տանջանքը քեզ,—
 Որ պայծառ ժպտաւ կյանքի երեսին,
 Որ ոչ մի տրտունջ սիրտդ չհուղե,
 Որ չմտորես իմ ցավի մասին,
 Որ քո թունավոր խոսքը չկասե (ՎՏԵԺ, I, 22):

Երկրորդ մասը կարող է առաջին մասի հետ կապակցվել առանց շաղկապի. այս դեպքում մասերի տարբերման համար հիմք են ծառայում քերականական կառուցվածքի դանադանությունը, բարձրացող և իջնող հնչերանգները, իմաստային հակադրությունը, զուգադրությունը, փոփոխությունը. օրինակ՝

Աստղ ու նկար շորեր հագած՝ դեմս ելար երազի պես,
 էշխդ կրակ սիրտս էրեց անհասնելի մուրազի պես,
 Անուշ հոտով սիրտս լցրիր վարդաստանի, Շիրազի պես,¹
 Ինչ էլ ըլի էշխդ, գյողալ, երգս ուրախ պիտի ասեմ
 (ԵԶԸԵ, 159):

Էրած խորված ման իմ գալի, մե տիղ չը կա մար ունենամ
 Լեզվով չիմ կանացի ասի, թեզուղ խոսկըս փաբ ունենամ.
 Ափսոսալու հաղար ափսոս, յիս էս դադա դար ունենամ,—
 էշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիտենար
 (ՄՆ, 75):

Երկրորդ մասը առաջինի հետ կապակցվում է նաև միջ-
նորդական կապերով, այսինքն՝ առաջին մասի որևէ անդամ
կամ հատած կրկնվում է երկրորդ մասի սկզբում և դառնում
է երկու մասերի կապակցման միջնորդ։ Սա տարբերվում է
օղակաձև կառուցվածքից նրանով, որ վերցվում է ոչ թե
սկզբի անդամը, այլ առաջին մասի որևէ անդամ կամ հա-
տած, որ տվյալ դեպքում էական է առաջին մասի և թե մա-
սերի ամբողջացման տեսանկյունից. օրինակ՝

— Իրիկնալույսին ծիրանի ծովուն մեջ կղզիացած արտաս-
վող ուռիներու շուքին տակ, հովիտիին խորը, ահավասիկ իմ
երգս, արոտներուն շունչովը լեցուն, ահավասիկ իմ երգս, առ-
վելերքի անուխին ու ռեհանին խունկովը օծուն. ահավասիկ
իմ երգս, հնձված արտերուն ու հերկված հողերուն բույրովը,
արևեփ խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշուշքովը
ակաղձուն, — իմ երգս՝ իղձի մը, արցունքի մը պես պարզ ու
վճիտ, որ իրիկվան ոսկի հրեշտակին հետ թե առած կը թռչի
սարերն ի վեր, կապույտն ի վեր (ՍՄԵԺ 211)։

Մինչև այստեղ մենք խոսեցինք բարձրացող հնչերանդ-
ունեցող պարբերույթի մասին, այսինքն՝ այն պարբերույթի
մասին, որի թվարկվող անդամները իրենց բարձրացող հնչե-
րանգով գտնվում են առաջին մասում, իսկ երկրորդ մասը
միայն իջնող հնչերանդ ունի։

Սակայն լինում են նաև այնպիսի պարբերույթներ, որոնց
թվարկվող անդամները իրենց բարձրացող հնչերանգով տե-
ղադրվում են երկրորդ մասում։ Այս դեպքում առաջին մա-
սում կարող է լինել մի զլխավոր նախադասություն, իսկ երկ-
րորդ մասը երկրորդական նույնասեռ նախադասությունների
շարք, որոնք թվարկվում են բարձրացող հնչերանգով. օրի-
նակ՝

Եվ այդ պիտի անե ոչ թե նրա համար, որ հանդիսավոր
խոստացել է ընկեր ուսանողներին, իշ, այլ (պիտի անե)
որովհետև ինքն այդ կամենում է սրտանց, որովհետև ամեն
անգամ երբ խոսք է եղել այդ ազգակիցների մասին, յուր սիր-
տը թունդ է առել և թռել դեպի նրանց, որովհետև ինքը միշտ

մի առանձին սեր, մի թաքուն գորով է տաժել դեպի այդ հե-
ռավոր եղբայրները: Կամ հետևյալ օրինակները. Եվ թեպետ
անձամբ չէ տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է,
թե բարի մարդիկ են, աղնիվ և աշխատասեր, թե սեփական
շահի համար ոչ ոքի չեն վնասում, այլ ապրում են իրենց ճա-
կատի արդար քրտինքով: Ոչ ոք այլևս չէր մտածում, թե շահը
դեռևս հյուր է Ազուխսում, թե ամեն ոք պարտավոր է լուսա-
վորել յուր տունը, կտուրն ու սարավույթը, թե պետք է բա-
կերում խարույկներ բորբոքել և ընկեր, հարևան դրանց շուր-
ջը ժողոված մինչև կես գիշեր խրախուժյուններ անել, թե ժո-
ղովուրդը խմբերով փողոցները պիտի պատեր և փողերով,
թմբուկներով օդը թնդացներ, թե միով բանիվ ամեն ոք պար-
տավոր էր մասնակցել որևէ հրապարակական զվարճության
(տե՛ս Մուրացան, V, էջ 13, 303):

Բերված օրինակներից առաջինը ունի պատճառի թվարկ-
վող երկրորդական նախադասություններ, իսկ երկրորդը և
երրորդը ունեն խնդիր նախադասություններ: Վերջին օրինակը
լիովին բավարարում է պարբերության պահանջները, որով-
հետև թվարկվող շարքի վերջին անդամը ընդհանրացնում և
փակում է թվարկվող շարքը:

Համեմատիր նաև հետևյալ օրինակը, որ գլխավոր նա-
խադասությանը հաջորդում է ժամանակի երկրորդական նա-
խադասության շարքը.

Ինձ թաղեք, երբ տխուր մթնաշաղն է իջնում,
Երբ լուում են օրվա աղմուկները զվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները՝ ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ (ՎՏԵԺ, I, 18):

Առաջին մասում կարող է լինել մի համադասական նա-
խադասություն, իսկ երկրորդ մասը նույնպիսի նախադասու-
թյունների թվարկվող շարք. օրինակ՝

Համաշխարհային աղետալի պատերազմի ընթացքում
շատ տոներ եկան ու անցան շտոնված, — բայց էս մի տոնը
պետք է տոնի ամբողջ կուլտուրական աշխարհքի պետք է տո-

նեն և պատերազմից հետու կանգնած ժողովուրդներն իրենց խաղաղ քաղաքներում, և կովոդ ազգերը իրենց խրամատներում, և անգլիացին, որ Շեքսպիր է ծնել, և գերմանացին, որ Շեքսպիր է սիրել ու որդեգրել, և ռուսը, և ֆրանսիացին և իտալացին, և ավստրոհունգարացին, ամենքը, ամենքը մինչև ուր հասել է Դոնքիշոտի աղնիվ խելառության համբավը, մինչև ուր հասնում է Շեքսպիրի աստվածային բռնակալությունը, որ մարդկային հոգին աղատագրելով ամեն տեսակ բռնակալություններից՝ միայն ստեղծագործական յոգու իշխանությանն է ենթարկում (ՀԹԵԺ, IV, 333—334):

Եվ չէ՞ որ գրական հոբելյաններին շեն գալիս ունհաջող գործերն ու սխալները թմկահարելու,— այլ հանդես դնելու այն, ինչ որ թանկ է մի ժողովրդի համար, այն, ինչ որ մի հեղինակ ավելացրել է իր մայրենի գրականությանը, այն ընչի համար որ գալիս են նրան պսակելու (նույն տեղում, 172):

Որ բաժանվեցավ ու աղոթարանը բաց էլավ,— քանաքըուցիք քնից վեր կացան, տան երթիկները բաց արին, երեսները լվացին, մեկ երկու խաշ հանեցին, բարի լիս ասացին իրար, երեխեքը ծածկեցին ու ամեն մարդ սկսեց գնալ իր բանը (ԽՆՎՀ, 10):

Այս կարգի պարբերությունները, որ սակավ են և առանձնապես շեն նշվում, ունեն այլ տիպի հնչերանգ. առաջին մասը եթե բաղմանդամ չէ, արտաբերվում է իջնող հնչերանգով, իսկ երկրորդ մասը թվարկվում է մինչև վերջին եզրափակող անդամը բարձրացումով. եզրափակող անդամը արտաբերվում է թեթև իջնող և փակող հնչերանգով: Պետք է շեշտել նաև, որ եթե թվարկումը չի ընդհանրացվում կամ փակվում որևէ ձևով, այդպիսի կառուցվածքները պարբերությ շեն, որովհետև պարբերության հիմնական պայմաններից մեկն է փակվածությունը՝ ավարտունությունն է: Երբ թվարկումը վերջում առկախ և բաց է մնում, այսինքն՝ որևէ ձևով չի մատնանշվում թվարկվող շարքի ավարտը, բարձրացող հնչերանգը կարվում է առանց իջեցման և արտահայտությունը մնում է անավարտ, չի կլորացվում, ուստի և պարբերությ չի

կազմում: Թվարկվող շարքի ավարտուն լինելը նշվում է ոչ միայն ընդհանրացնող, եղրափակող բառերով, այլև շաղկապներով ու բովանդակությամբ: Վերևում բերված Մուրացանի օրինակը ընդհանրացվում է միով բանիվ կապակցությամբ, Թումանյանինը ամենքը, ամենքը ընդհանրացնող կրկնությամբ, իսկ Աբովյանի օրինակի մեջ վերջին անդամը հարակցվում է ու շաղկապով:

Շատ ուսումնասիրողներ այս կարգի պարբերությունները համարում են պարբերության կառուցվածք. ընդ որում եթե վերջին մասի թվարկվող անդամները այս կամ այն ձևով չեն մատնանշում ավարտը, կոչվում են բաց պարբերության կառուցվածք: Նշելով նաև այս կարգի կառուցվածքներից շատերի պարբերության կազմությունը, մենք նույնպես հակված ենք կարծելու, որ պարբերության բաղմանդամության ծանրության կենտրոնը վերջ ի վերջո ընկնում է առաջին մասի վրա և բուն պարբերությունները բնութագրվում ու պայմանավորվում են այդ առաջին մասի բաղադրականությամբ: Երկրորդ մասի միավորականությունը, կառուցիկ համաչափությունը, անդամների ներդաշնակ ու կշռության վրա թվարկումը էական չեն պարբերության համար: Երկրորդ մասը կույտն է այնքանով, որքանով այն ընդհանրացնում, եղրափակում ու փակում է առաջին մասի թվարկվող շարքը միանգամայն այլ քերականական կառուցվածքով ու հնչերանգով: Առաջին մասը հարում է երկրորդ մասին իմաստով, քերականորեն և հնչերանգով, այդպիսով ստացվում է մի ավարտուն ամբողջականություն: Երբեմն այնպես է պատահում, որ առաջին մասի թվարկվող շարքը ամբողջացվում է երկրորդ մասի թվարկվող շարքով, որով առաջանում է մասերի հակադիր համամասնություն. այսպիսի կառուցվածքը ուշքի է ընկնում իր շափակցությամբ, կշռության ղուգահեռականությամբ, տևտի զուտ հնչերանգային ու ոճաբանական տրեք ունի. քերականական տեսանկյունով դա պարբերության մեջ է: Այն փոփոխություն չի առաջացնում: Համեմատիր հետևյալ օրինակները.

Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին՝ էնպես էր մեյդան բաց արել՝ փռում, փշում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, — որ ճամփորթի քիթ ու պոռնգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հաղար անդամ խփում, աչք ու բերանը լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ճամփից խոկում, սար ու շուղ գցում, խեղդում կամ քարեքար տալիս (ԽԱՎՀ, 10):

Այս օրինակի մեջ առաջին մասը լրիվ բավարարում է պարբերության պահանջները. հինգանդամանի է և կազմված միավորյալ նախադասություններից, սրունք գլխավոր են. իսկ երկրորդ մասը հետևանքի երկրորդական միավորյալ բաղմանդամ նախադասությունների մի մեծ շարք է: Համամասնությունը լրիվ չի պահպանված, որովհետև երկրորդ մասը քանակով գերազանցում է: Հետևյալ օրինակի մեջ մասերը լրիվ չափակից են և կապված են բայց շաղկապով:

Ծառի ճիւղն որ շոր լինի, ո՞վ մնայ թէ իսկի ծաղկի,
Սպիտակ մազն որ սև ներկեն, ո՞վ ասէ թէ իսկի թուփի,—
Բայց մարդ մեղավոր ու սև դիտեմ, որ կու սպիտակի,
Աստուած մեկ բանիկ կուզէ, որ «մեղայ» ասէ ու քաւի
(Հ. Երզնկացի, 150):

Համեմատիր այս քառատողի հետ Ռ. Պատկանյանի «Հայերու թուքը» բանաստեղծությունը, որի յուրաքանչյուր տունը գրեթե երկանդամանի պարբերությ է՝ չափակից մասերով. օրինակ՝

Դուն խելոք, հաշվով վաճառական ես,
Մյուլք, փող ու ապրանք, կասեն, շատ թանկս,—
Բայց թե փողեդ շահ շունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան:
Քաջ ես, լսել ենք, ինքդ մեծավոր,
Անուն հաղթողի ունիս փառավոր,—

Բայց թե թրեդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, թրիդ ալ վրան (ՌՊԵ, 151):

Ութ ամբողջ տներ այսպիսի հակադրական ու շահակից պարբերություններով են դրված: Համեմատիր վերը բերված բանաստեղծության հետ նաև նույն հեղինակի «Օրորոցի երգ» բանաստեղծությունը.

Արի, իմ սոխակ, թող պարտեզ մերին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին,—
Բայց նա լալիս է. դու սոխակ, մի գալ,
Իմ որդին չուղէ տիրացու դառնալ
(նույն տեղում, 184):

Ուրեմն՝ պարբերությամբ շարահյուսական այնպիսի ամբողջական միավոր է, որը կազմված է երկու հակադիր մասերից, իսկ այս մասերը քերականորեն, տրամաբանորեն և հնչերանգով սերտորեն կապակցվում են միմյանց և կազմում են մի միասնություն: Շնորհիվ քերականական, տրամաբանական և հնչերանգային միասնական կապերի պարբերությամբ հնչությունամբ ընկալվում է ընթերցողի կողմից իր առանձին մասերով, անդամներով ու հատածներով իբրև շարահյուսական վերջացած ու փակված ամբողջություն: Այս ամբողջությունը ունի այն բոլոր հատկանիշները, որոնք հատուկ են սովորական նախադասություններին, սակայն պարբերությամբ նախադասությանը հատուկ այդ հատկանիշներից բացի ունի իր սեփական յուրահատկությունները, որոնք ոչ մի նախադասություն չունի: Այդ հատկանիշներն են՝ անդամահատման միանմանությունը, քերականական կառուցվածքի սերտ միասնությունը, շարահյուսական փակ կառուցվածքը, հնչերանգային ձևավորվածությունը, հատկապես առաջին մասի բաղադրականությունը և այդ բաղադրիչների քերականական համասեռությունը, դրանց հնչերանգային աստիճանական բարձրացումը, շարահասման որոշ կայունությունը, ապա առաջին մասին հաջորդող դադարը և երկրորդ մասի եզրափակումն ու իջնող հնչերանգը:

Այս հատկանիշները պարբերությամբ դարձնում են բովանդակութեամբ մի վերջացած, ավարտուն արտահայտություն, ուր տրվում են փաստարկները և դրանց հիմնավորումը, որով ստացվում է նշված իմաստային միասնությունը: Մասնակի առանձին մտքերը թվարկվում են իբրև համասեռ, միմյանց հետ կապված մտքեր համապատասխան ու ներդաշնակ ձևավորումներով, որոնք ներքին կապերով շղթայվում են գլխավոր մտքին և ենթարկվելով նրան՝ միասնաբար կազմում են բազմազան մտքերի մի ամբողջություն, մինչդեռ սրան հակադիր կտրտված խոսքը բազմազան մտքերը հաղորդում է միմյանցից անկախ, առանձին-առանձին, առանց ներքին տրամաբանական կապերի, միասնական հնչերանգի:

Արդ՝ այս ամենից հետո եթե սահմանենք, դուրս կգա, որ պարբերությամբ է կոչվում այն բարդ կամ բարդացված ու ծավալուն ամբողջական արտահայտությունը, որ բնութագրվում է հնչերանգային երկու հակադիր մասերով, մասերից մեկի (հատկապես առաջին) համասեռ անդամների բազմազանությամբ, սրանց շարադասման որոշ կայունությամբ, կշռույթային կանոնավորությամբ, ներդաշնակ թվարկումով, արտաբերման անընդհատ լարված ու բարձրացող հնչերանգով և լայա դադարով, որի հաջորդող երկրորդ մասը անկախ իր անդամների ֆանակից իջնող հնչերանգով եզրավակում և փրականական, տրամաբանական ու հնչերանգային մի միասնության է վերածում հաղորդումը:

ՊԱՐԲԵՐՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Կան պարբերույթի դասակարգման մի քանի եղանակներ: Զանազան ուսումնասիրողներ տարբեր մոտեցում են հանդես բերել պարբերույթի դասակարգման հարցը քննելիս. այդ մոտեցումների տարբերութունները արդյունք են մի կողմից առանձին ուսումնասիրողների այլևայլ ըմբռնումների, մյուս կողմից ուսումնասիրվող նյութի բաղադրվածության ու բարդության: Ոմանք պարբերույթը դիտում են իբրև զուտ տրամաբանական համակարգ և ըստ այդմ դասակարգում են՝ հաշվի առնելով նրա բովանդակությունը. իսկ ոմանք ուշադրություն են դարձնում նրա կառուցվածքի ձևական առանձնահատկությունների վրա և դասակարգում են ըստ այդ ձևական դասադասակերպությունների: Ըստ իմաստային հարաբերությունների դրսևորման պարբերույթները դասակարգվել են երկու խմբի.

1. Ընդհանրացվող պարբերույթներ և պարբերութային կազմություններ.

2. Ոչ-ընդհանրացվող պարբերութային և այդպիսի պարբերութային կազմություններ:

Ընդհանրացվող պարբերութայինների հրկո՛ւ մասերի միջև առաջանում են ընդհանրացման հարաբերություններ. ըստ այդմ պարբերութի առաջին մասում տրվում են թվարկվող փաստարկներ, առարկաներ, երևութներ, իսկ երկրորդ մասը դասնում է այդ առանձին թվարկվող երևութների ընդհանրացում. օրինակ՝

Առավոտից լսվող առանձին ձայներ, մի անհանգիստ
 շան հաշոց, քաղաք մտնող նախիրի բառաշը, քարավանների
 ղողանշը, փերսես բեյի հազը՝ խանութների բացվող դռների
 աղմուկը։ Վերջապես այն ձայները, որ հետզհետե բարձրա-
 նում են դարբնոցներից և թիթեղագործների արհեստանոցնե-
 րից, Այդ ամենը դեռևս անախորժ աղմուկ են, նման այն
 աղմուկին, որ արձակում է նվագախումբը վարագույրից առաջ
 (ԱՔԵ, 328)։ Այս տիպի պարբերությամբ կոչվում է խակական
ընդհանրացվող պարբերությամբ։ Իսկ այն պարբերություները,
 որոնց հրկու մասերի միջև առաջանում են ժամանակային,
 հակադրական, որոշիչային, դիջական, բաղդատություն և այս
 կարգի այլ հարաբերություններ, կոչվում են ոչ-ընդհանրաց-
 վող կամ ավելի ճիշտ անխակական ընդհանրացվող պարբե-
րություներ, որովհետև վերջ ի վերջո անուղղակի կերպով այստեղ
 ևս ընդհանրացումը առկա է իբրև ավարտվածության, ամ-
 փոփման արտահայտություն։

Այսպիսի ընդհանուր դասակարգումով չի կարելի բավա-
 րարվել, որովհետև եթե առաջին տիպը այս կամ այն չափով
 կարելի է ընդունել իբրև մի համակարգի արտահայտություն,
 երկրորդը արդեն այդպես չէ. այնտեղ գործում են բազմազան
 հարաբերություններ և դրանք բոլորը մի ցուցանիշի տակ չի
 կարելի դնել։ Ելնելով հենց այդ անպատեհությունից՝ այդ-
 պիսի դասակարգման հեղինակները առաջարկում են վերջին
 տիպի համար նոր դասակարգում, այսինքն՝ ժամանակի,
 պատճառի, զուգադրության, հակադրության և այլ պարբե-
 րություներ։ Ծիշտ է, ըստ իմաստների այդպիսի դասակարգումը
 որևէ ելք նշում է, սակայն չպետք է մոռանանք, որ պարբե-
 րությամբ միայն բովանդակություն չէ, այն նաև ձև է, որը
 տվյալ դեպքում ուսումնասիրության համար նույնքան նշանա-
 կություն ունի, որքան բովանդակությունը։ Ելակետ ունենալով
 հենց այս հանգամանքը՝ պետք է այս վերջին տիպի դասա-
 կարգման մեջ նշենք նաև ձևական սահմանանիշներ, որոնք
 անխուսափելիորեն կանգնում են ուսումնասիրողի առջև։

Նկատի առնելով հենց այս ձևական կարևոր հանգաման-

քը կատարված է դասակարգման նաև հետևյալ հինգ տիպը:
Առաջին տիպի մեջ մտնում են այն պարբերությունները, որոնց
առաջին մասը կազմված է միասեռ երկրորդական նախադա-
սություններից, իսկ երկրորդ եղրափակող մասը գլխավոր
նախադասություն է. այս տիպը իր կառուցվածքով նմանվում
է բարդ ստորադասական նախադասության, միայն այն տար-
բերությամբ, որ պարբերության պահանջով երկրորդական նա-
խադասությունները մեկից ավելի են. օրինակ՝

1) Չնայած նիհար, ոսկրոտ ու տկար մարմինը հենել էր դա-
հի թիկնալիին՝ շնայած մաշված մազադաթյա դիմքն արտա-
հայտում էր մեծ հոգնածություն, բայց նրա սև ու տակավին
խոշոր աչքերը վառվում էին առանձին հրով. միշտ հետա-
քըրքիր ու լարված (ՍԶՊԹ, 315):

Այս ընդհանուր տիպի տակ իբրև ենթատեսակ նկատի են
առնվում տեղի, ժամանակի, պայմանի, վիճական, բաղդա-
տական և այլ պարբերություններ:

Երկրորդ տիպի տակ դրվում են այնպիսի պարբերությ-
նները, որոնց առաջին մասը կազմված է գլխավոր նախադա-
սությունների շարքից, իսկ երկրորդ եղրափակող մասը երկ-
րորդական նախադասություն է. օրինակ՝

1) Նւ արդ դի՛նչ գործեսցես, անձն իմ կորուսեսալ, կամ ո՛ւր
թափեցես, կամ դիարդ ապրեսցիս, կամ որպէս հլցես ի մեղաց
բանտէ, քանզի բազում են պարտիքդ և անթիւ հատուց-
մունքն (ՔՆՄՈ, 8):

Այս ընդհանուր տեսակի մեջ առնվում են որոշիչ, հետե-
վանքի, պատճառի, նպատակի և այնպիսի՝ պարբերությունները,
որոնց գլխավոր նախադասությունների շարքը առաջադաս է:

Ինչպես տեսնում ենք, փաստորեն դասակարգման հիմ-
քում ընկած է շարադասության տարբերությունը, մի հանգա-
մանք, որ շատ խախտւո է, որովհետև թե առաջին տիպի
մեջ կիրառվող երկրորդական նախադասությունները և թե երկ-
րորդ տիպի գլխավորները նույնպես կարող են ետադաս կի-
րառվել:

Այս նույն դասակարգման երրորդ խմբի մեջ մտնում են համադասական պարբերութենքը, որոնք լինում են հակադրական, զուգահրեական, տրոհական և այլն. օրինակ՝

Անցան մի քանի ժամեր՝ օրհասական կռիվն ու հուսահատ ընդդիմությունը վերջացավ, ամբողջ ամբողջապես ողողվեցավ արյունով, փողոցներն ու տները լցվեցան դիակներով, որքան զորք ու ժողովուրդ կար ամբողջում, ամենքը գրթե նահատակվեցան, քայքայեց կրկին շափով հազարացիներ ջնջվեցան, սրով հետև ամեն մի հայ ղինվոր մեռնելուց առաջ սատակում էր մի քանիսին (ՄԳՄ, 245):

Զորորդ տիպը կազմում են այնպիսի պարբերութենք, որոնց առաջին մասը միասեռ սնդամներից է բաղկացած, իսկ երկրորդ եզրափակող մասը սկսվում է ընդհանրացնող մի բառով կամ արտահայտությամբ և այսպիսով ավարտվում և ամբողջանում է պարբերութեք։ Այդպիսի պարբերութեք կոչվում է ընդհանրացվող և նույնպես ըստ առաջին մասի անդամների բնութի բազմազան է. օրինակ՝

Ճրվորների,
Սարվորների ուրախ կանչը,
Զ Առվի հիմար բլբլոցը,
Ճրագների պլպլոցը,
Հովի հունչը,
Թռնրի շունչը,
Մերժված սրտի խուլ մրմունջը,
Ճնրաղների ու ծաղկունքի փսփսուկը,
Ողբասացի կոծն ու սուգը, Արտասուքը,

Որ ծնվելով վառ ցավի մեջ՝
Դուրս չի պոռթկում,
Այլ կաթում է սրտի խորքում,
Ինչպես մթին անձավի մեջ,
Եվ այդ ահեղ կաթկթոցը
Մինչև անգամ քար է ծակում,

9 Կեսշոր ու թաց փայտի նման
Վառվող հույսի ճթճթոցը,
Որ վառ ցրտի դեմ-հանդիման
Ինչքան շինի դուռ է փակում.

10 Զարաճճի քամու առաջ
Տերկների սրսփումը՝
Աշնան վառած անհուր բոցում.

11 Նոր մայրացած ստինքների
Միմյանց հետ լուռ շփումը՝
Այգու նման բուրող ծոցում.

12 Զրի ճամփին, աղջիկների քշփշոցը,

13 Մինուճարին հեռու ճամփող
Մոր խելագար պաշպշոցը,

14 Տաք հնձանի կպշուն դռան
Զիւ ճոխնչը,

15 Անգղ տեսած թուխսի սարսափն ու կռինչը,

16 Նորածինի աղդարարիչ—հրամայող բարոյի
ճիւղը,—

Ամեն, ամեն, ամեն ինչը

Ալիք տալիս,

Գալիս-գալիս

Մովանում էր այդ ականջում (ՊՄԱԶ, 61—62):

Հինգերորդ խմբի մեջ են դրվում այնպիսի պարբերույթ-
ները, որոնց առաջին մասը բարդ կամ բարդացված նախա-
դասություն է, որ զուգահեռ կամ համասեռ անդամներից չի
կազմված. այսպիսի կազմությունը շատերը իսկական պար-
բերույթ չեն համարում, այլ կոչում են պարբերույթային կա-
ռուցվածք. օրինակ՝

Եվ ահա ուրախության, խրախճանքի, ճակատամարտնե-
րու և հաղթանակներու հպարտ հիշողության ժամուն, այն
պահուն, երբ ժողովրդական խաղերու և նվագածություն աղ-
մուկը կբարձրանար արքային պալատին առջև, շուր անհամար
և այլազան մանկավիճիկներ կցատկտեին, ջրմբիշներ կգոտե-

մարտեին, զինվորականներ մարդանքներ կրնեին սպանելու ճարտարության մեջ իրարու հետ մրցելով, / Թիմուրի մարդոց խելահեղ ցնծության այդ ժամուն հանկարծ աղմուկին ու ժխորին մեջեն ճիշ մը լսվեցաւ. սուլթան Պայազիտի հաղթականին ականջին հասաւ կնոջ ճիշ մը, ձայն մը ծանոթ ու մտերիմ իր վշտահար հոգիին, որ դառնացած էր մահեն և այդ իսկ պատճառով խիստ էր մարդոց ու կյանքին հանդեպ (ՌԶՅ, 372):

Ոմանք էլ այս բոլոր պարբերութիւնները բաժանում են երեք մեծ խմբի. առաջին խմբի մեջ դնում են այն պարբերութիւնները, որոնց առաջին մասը կազմված է միասեռ բառակապակցութիւններից, դերբայական դարձվածներից, իսկ երկրորդ մասը եզրափակող, ընդհանրացնող, ամփոփոխ մի նախադասութիւն է. օրինակ՝

Անձրևի անընդհատ տեղալը, սառն ու խոնավ ցուրտը, մառախլապատ եղանակի երկարելը, օրերի ձանձրալի միօրինակութիւնը, այս ամենը առանձին-առանձին ազդում են մարդու տրամադրության վրա և դրկում նրան աշխատունակութիւնից:

Երկրորդ խումբը կազմվում է միասեռ համադասական նախադասութիւններից՝ տարբեր բնույթի կապակցութիւններով ու հարաբերութիւններով, իսկ երրորդ խումբը երկրորդական ու գլխավոր նախադասութիւններից է բաղկանում, ըստ որում թե երկրորդականների շարքը կարող է պարբերութի առաջին մասը կազմել, թե գլխավորների:

Հստ ձևական առանձնահատկության պարբերութիւնների մի այլ դասակարգում ելակետ է ընդունում նրա ծավալը: Առհասարակ պարբերութիւնը չի կարող համառոտ լինել, բայց ըստ իրենց ծավալի պարբերութիւնները զանազանվում են. պատահում են պարզ բաղկացուցիչ անդամներով և կամ խիստ բարդ: Հստ այսմ նկատվում է պարբերութիւնների երկու խումբ՝ բարդացված և ոչ բարդացված:

Բարդացված պարբերութի մասերը կամ առաջին մասի անդամները ունենում են լրացուցիչ բեռնվածութիւն, որ կա-

քող են լինել լրացուցիչ երկրորդական նախադասություններ, դերբայական դարձվածային լրացումներ, կամ ամբողջ մասը լինում է բարդ նախադասություն և այլն: Երբեմն այդպիսի պարբերութիւնների հենց այդ լրացուցիչ անդամներն իրենց ղուգահեռներով թվարկվում են և ստվերի մեջ թողնելով լրացվող անդամները, կարծեք հենց իրենք են դառնում պարբերութի հենարանը՝ ընթերցողի ուշադրությունը հրավիրելով իրենց վրա, և այնպես են ծավալվում, որ բռնում են ամբողջ պարբերություններ. օրինակ՝

Դուք կարող եք ազնիվ ու գեղեցիկ անվանել ձեր մեջքի շափազանց բարակությունը և էդ գեղեցկության համար միշտ տառապել ձեր շոր կորսեալների մեջ սեղմված, գեղեցիկ ու ազնիվ համարել ձեր բարձր կրօնականներն ու դողդողալ նրա վրա, գեղեցիկ ու ազնիվ համարել ձեր խեղդուկ ու փակ սալոնները, ձեր դեմքի դալկությունն ու արենապակասությունը, ձեր շինծու լեզուն, որ լեզու է կոչվում միայն էն պատճառով, որ բառեր տնի իր մեջ, այսինքն՝ ամենաքիչը ինչ որ կարող է ունենալ լեզուն, և բառերի մի շարան է, մի տեր ողորմյա, ու էն էլ հաճախ սուտ ու սխալ բառերի, բայց ազնիվն ու գեղեցիկը ընդարձակ տարածությունն է, ազնիվն ու գեղեցիկը ազատ, մաքուր օդն է, ազնիվն ու գեղեցիկը առողջությունն է, կայտառ, էլաստիկ ու պլաստիկ ձևերն են, ազատ դարգացած մարմինն է, ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, որ հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր դանձարաններից ու պահել, դարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր ու (տրամադրություն), շունչ է ու զգացմունք (ՀԹԵԺ, 6-րդ, 167):

Իսկ ոչ-բարդացված պարբերութիւնը դերժ է այդպիսի ծավալումից և լրացուցիչ անդամների խճողումից. օրինակ՝

Միտում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր էջմիածնի վանքը, և թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ գեղեցկությունը (ԲԵԺ, 7-րդ, 439):

Դասակարգման իմաստային և ձևական վերոհիշյալ մոտեցումները չի կարելի հաշվի չառնել, ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, դրանք այս կամ այն չափով ամուր հենարան ունեն պարբերության բաղմաձևության ու նրա բովանդակության մեջ: Վերջ ի վերջո ինչ էլ տր լինի պարբերության, քերականական համակարգ է և իր կառուցվածքով մոտենում է նախադասության: Միս մոտեցումը դասակարգման հարցում ելակետ պետք է ունենա նախադասության դասակարգումը, մի բան, որ իր մեջ ներառնում է-թե՛ ձևական և թե՛ իմաստային առնչություններն ու կապերը: Մենք չենք կարող բավարարվել միայն մի մոտեցումով, մի մոտեցումը չի կարող սպառել պարբերության բարդ ու բաղմազան ձևական, իմաստային կապակցություններն ու դրսևորված հարաբերությունները: Պետք է ընդունենք դասակարգման տարբեր ելակետներ և ըստ այդմ ուսումնասիրենք նյութը, որպեսզի դասակարգման մեջ լրիվ դրսևորվեն պարբերության բոլոր տեսակներն ու կապակցման ձևերը, իմաստային առնչություններն ու հարաբերությունները:

Պարբերության դասակարգումը կատարում ենք ըստ եղանակավորման, ըստ կառուցվածքի, ըստ քերականական կապակցության, ըստ ոճավորման և փմաստի:

Ըստ եղանակավորման պարբերությունները լինում են՝ պատմողական, հարցական, բացականչական:

Պարբերությունները հիմնականում պատմողական բնույթի արտահայտություններ են, որովհետև պարբերությունները մեզ շրջապատող իրականության որեէ երևույթի, առարկայի մասին հաղորդում են քերականորեն և իմաստով միմյանց հետ շատ սերտ առնչվող մտքերի ամբողջություն, ուր հաստատվում կամ ժխտվում են խոսողին ու դրողին հայտնի փաստերն ու փաստարկումները. օրինակ՝

Գեր ձիերը, նրանց նոր սարքը, արծաթ կոճակները, որ շարված էին սարքի կաշիների վրա, ձիերի վզից կախած գունավոր փնջերն ու զանգուլակները, որ ավելի զորեղ էին հնչում, երբ ձիերը ուժ էին անում ֆուրգոնը քաշելու, չվերջա-

պես ֆուրգոնների տեսքը, նրանց վրա դարսած իրերը, որոնք
ֆուրգոնի նման նոր էին, առաջից գնացող ձիավորները,—
այս ամենը մայիսյան արևի տակ փայլփլում էին, շլացնում
և հաղթական երթի նմանություն տալիս (ԱԲՆ, 516)։

Պարբերության ծավալունությունը, երկմասնյա բնույթը,
հնչերանգային յուրահատուկ ձևավորվածությունը սլետք է
բացառել հարցական պարբերության գոյությունը, և իսկա-
պես էլ հենց այդպես է։ Հարցականությունը պարբերության
համար իրական հարց ու պատասխանի բնույթ չունի, այն
դուրս ձևական է և ըստ էության ճարտասանական արժեք ունի։
Խոսքը ասվում է ոչ թե պատասխան ստանալու համար, այլ
պարզապես դա մի հաղորդում է իբրև իրողության հաստա-
տում, կամ ժխտում, որ խոսողը կամ գրողը օժտում է հար-
ցական հնչերանգով, որպեսզի իր խոսքը ոճաբանորին աշ-
խույժ, կենդանի բնավորություն ստանա և ըստ էության հու-
ղիչ ու արտահայտիչ դառնա։ Սովորական հարց ու պատաս-
խանը կտրատված, մասնատված խոսք է, որ հակադիր է
պարբերության էության, նրա ամբողջականության և հնչե-
րանգային ընդհանուր լարվածության։ Իսկ ճարտասանական
հարցական խոսքը իսկապես հաղորդում է. եթե այն կազմված
է համասեռ անդամներից և ունի ամփոփոխ, եղրափակող
ավարտուն մաս, ապա այդպիսի կազմությունը իսկական
պարբերությ է. օրինակ՝

- 1 Ինչո՞ւ տակավին
- 2 Զես պատժում չարին,
- 3 Ո՞ւյժդ է պակասում,
- 4 Թե՞ չենք աղերսում.
- 5 Ինչո՞ւ չես գալիս,
- 6 Ո՞ւր ես, եթե կաս,
- 7 Թե՞ դու չես տալիս
- 8 Խեղճին պատուհաս.
- 9 Թե՞ չարագործին
- 10 Դու չես տվել սուր,

Որ խաղաղ հոգին
 Սարսափի իզուր.
 Յ թե՞ դու չգիտես,
 Որ այստեղ երկրում
 Մարդը ժպտերես
 Մարդ է գիշատում
 Դե արի ու տես,
 Զարկիր ու շանթիր,
 Եթե աստված ես
 Դու վրեժխնդիր (ՀԹԵԺ, 1-ին, 63):

Ճարտասանական հարցական բնույթ ունի նաև այնպիսի պարբերույթը, ուր խոսողը կամ գրողը ինքն է դնում հարցերը և ինքը պատասխանում. օրինակ՝

Ի՞նչ էր հայ կինը որպես ամուսին, Ի՞նչ էր նա որպես մայր, Ի՞նչ դեր է խաղում որպես ընտանիքի և հասարակության անդամ, — այդ մենք չգիտենք (ԲԵԺ, 7-րդ, 6):

Ճարտասանական հարցական պարբերույթ է կազմում, այսպես կոչված, ժխտական համեմատությունը, հարցականով առաջ են բերվում մի շարք իրար հետ կապված մտքեր միևնույն քերականական ձևակերպումով, ապա դրանք ժխվում են զուգահեռ հակադիր մտքերով և դարձյալ համասեռ նախադասություններով. օրինակ՝

- 1 Էն բարձր ժեռուտ սարի դագաթին բազա՞ է նստած,
- 2 Թե՞ էծը վայրի ջղոտ ոտներով է էնտեղ հասած.
- 3 Ամպի կտո՞ր է կպել երկնամերձ էդ սարի ծայրին,
- 4 Թե՞ ծառ կամ մացառ բսնում, աճում են անբնուկ վայրին, —

Ոչ ծառ և ոչ բույս, ոչ հավ թևավոր և ոչ անասուն կարող են հասնել ոտով կամ թևով էդ սարի գլխուն. էդ սարի օդեն մենակ մեկ մարդու դոշն է ծծել, էդ սարի գլխուն մենակ մեկ մարդու ոտն է կոխել, — Սրբնթաց Ռաշտի ոտքն էդ սարում ճամփա է բացել, Ու Ռաշտի նալը նրա կշտերից կրակ է հանել (ՌՊԵ, 80):

Հաճախ այս տիպի հարցական պարբերութիւնների ներքոյ
մասը ժխտականով չի տրվում, այլ հարցականով հաղորդում-
ները անուղղակիորեն ժխտվում են դրական այլ կտրգի հա-
ղորդումով, կամ հաղորդումներով, որոնք՝ զուգահեռաբար
հակադրվում են նախորդ մասին. օրինակ՝

Արդյոք նորից երազնե՞րն են թափառում,
Սիրո անուշ նվազնե՞րն են ինձ կանչում, —
Դալուկ աշնան տխուր շողերն են մարում:
Սարից իջնող աղբյուրներն են կարկաշում (ՎՏԵԺ,
1-ին, 26):

Փաստորեն առաջին մասի այսպիսի հարցումները ժխտա-
կան նշանակութիւն ունեն, ինչպես որ տեսանք Պատկանյա-
նից բերված օրինակում: Համեմատիւր Տերյանի օրինակը
հետևյալի հետ, որի առաջին մասը ժխտական է, իսկ բովան-
դակութեամբ բոլորովին չի տարբերվում նախորդ հարցակա-
նից:

Դա ոչ թե քամին էր փողոցում շաշում,
Եվ ոչ էլ հրթիռը հրդեհում խավարը, —
Իր խմբի տղերանց հետ դա հյուրանոցում
Խմում, աղմկում է խմբապետ Շաւարշը (ԵԶԸԵ,
127):

Կարող է լինել նաև հորդորական պարբերութիւն, որ գրեթե
նույնն է, ինչ որ հրամայականը: Այսպիսի պարբերութիւն մեջ
խոսողը դիմում է խոսակցին՝ հորդորելով նրան մի բան անել
կամ չանել, տալիս է խորհուրդներ, ցուցմունք, հանձնարարու-
թիւն և այլն. օրինակ՝

Արի, իմ սոխակ, թող պարտեղ մերին,
Տաղերով քուն բեր տղիս աչքերին, —
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին շուգե տիրացու դառնալ:
Եկ, արեղածագ, թող արտ ու արոտ,

Չօրորե տղիս քնի է կարոտ, —
Բայց նա լալիս է. դու, ձագունի, մի գալ,
Իմ որդին շուղե տքեղա դառնալ (ՌՊԵ (184):

Ըստ անդամների համամասնության պարբերությամբ երկու խմբավորման ենք բաժանում՝ չափակից և անչափակից: Չափակից պարբերությունների մեջ առաջին մասի անդամները կառուցվում են հավասարաչափության սկզբունքով, ունենում են կայուն շարադասություն, այսինքն՝ անդամների համապատասխան խոսքի մասերը միևնույն դիրքավորման մեջ են քաշվում, որի սլառճառով առաջին մասի անդամները կառուցվում են կանոնավոր կշռությամբ շարքեր և հավասար ամանակ: Պետք է նկատել սակայն, որ անդամների այդպիսի համամասնության ճշտագույն հաշվառում չի պահանջվում: Այդ կարող է լինել չափաժող պարբերությունների մեջ՝ այն էլ ոչ միշտ: Համեմատիր.

էյ, ջան-հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մեջ
Ջրերդ անուշ, հովերդ անուշ,—
Մենակ բալեքդ արուն ծովի մեջ (Իսահակյան):

Այս պարբերության առաջին մասի անդամների այդպիսի ճշտագույն հաշվառում չի կատարված, մինչդեռ Ջարենցի հետևյալ քառատող պարբերության մեջ առավել զգալի է առաջին մասի անդամների ներդաշնակ կառուցումը.

Աշխարհը մե բաղ է, դողալ, նստել ես դու բաղի մեջը,
Վարդ ես բացված առավոտվա դրախտային շաղի մեջը,
Ժամ ես դարձել տեսքով քո սուրբ՝ Հավլաբարի թաղի
մեջը,—

Սրտիս անուշ արտասուքին երկնային շաղ պիտի ասեմ
(ԵԶԸԵ, 159):

Կամ՝

Սիրտըս փորումըս թուլացավ անգալներու զախ անելեն,
Ուշկ ու միտկըս խառնըվեցավ խուռըն-խուռըն խաղ
հանելեն,

Յ Աշկեմես ջուհարըն դնաց յարեն կարոտ ախ անելեն,—
էլ ապրելու ումիկ շունիմ, իմ օրըս կերած գիտենաք
(Սն, 75):

Չափակցությունը ավելի կատարյալ է, երբ պարբերութի
երկու մասերը միմյանց հավասար են ու ներդաշնակ կառուց-
ված, և երբեմն նույնիսկ այդ տարբեր մասերի անդամները
դուգադրվում են. օրինակ՝

Ա Սյունյաց բարձր լեռներում այդ շանթե՞րն են բոցկլտում,
Լ Հանդ ու ձորեր թնդում են տրոտալից շաշունով,—
Դավիթ Բեկի քաջերի վառ թրերն են կայծակում,
Ամեն մի սիրտ թնդում է նժույգների դոփյունով (ԱԻԵ,
1-ին, 372):

1 Արդեն կտրել ես, արդեն անցել
Դու երկար, երկար մի ճանապարհ,
2 Եվ բարձունքներ ես դու ունեցել
3 Եվ անկումներ ես ունեցել հար,—
Բայց դու սրբել ես հոգիդ միշտ էլ
Ճամփեքի մաքուր, վսեմ հրով,
— Եվ միշտ պայծառ է հոգիդ եղել
— Եվ սիրադ լիքն է եղել սիրով (ԵԶԸԿ, 176):

Իսկ եթե առաջին մասի անդամների դույզ մասերի միջև
չկան այդպիսի հավասար համամասնություն ու շափակցու-
թյուն, և անդամների համասեռությունը պայմանավորված է
քերականական գործոններով, այսինքն՝ նույնատիպ նախա-
դասություններ են, սկսվում են միևնույն կապակցական բա-
ռերով, կամ հարակրկնություններով, ապա այդպիսի պարբե-
րությւնը անշափակից է. այս դեպքում կշռությւնը և ամանակը
լրիվ չեն հաշվառված, երբեմն մի անդամը բարդացված է այլ
լրացուցիչ հատածներով, իսկ մյուսը շունի այդպիսի լրացում-
ներ և այլն. օրինակ՝

1 Եվ որտեղ էլ լիներ՝ կնունքի նստած, թե հսրսանքատանը,
եկեղեցու գավթում՝ պատի տակ շար ընկած, թե բոլոր—քարի

մոտ, որ գյուղի հրապարակն էր համարվում և ուր այժմ էլ հավաքվում են գյուղացիք, — Որտեղ էլ լինեիր, Տիր-Նորընծան աշքերը պիտի խոժոռեր, ունքերն իրար տար և երեսը դարձնիր Ավան ամու կողմը (ԱՔԵ, 446):

Պարբերույթը բառ կառուցվածքի լինում է պարզ և բարդ: Պարզ կոչվում է այնպիսի պարբերույթը, որ կազմված է մի նախադասությունից: Այսպիսի պարբերույթը կառուցվում է հետևյալ ձևով. սկզբում թվարկվում են նախադասության միևնույն միավորյալ անդամները, իսկ հետո որևէ ընդհանրացնող բառով կամ կապակցությամբ այդ թվարկվող միավորյալ անդամները միացվում են նախադասության մյուս անդամների հետ, որոնք թվարկումից դուրս են մնացած, օրինակ՝

Վրացու անմիջական և սրտաբաց բնավորությունը, նրա սրտի ազնվությունը, շքեական մաքրությունն ու անարատությունը, աղատության ու գեղեցկության սերը — այս բոլորը ամեն կողմից լուսավորված կյանքի սիրով և նուրբ վշտով առհավատշյա են՝ վրաց բանաստեղծության մեծ ապագայի (ՀԹԵԺ, 424):

Բերված օրինակը բաղմալի ենթականերով միավորված մի պարզ նախադասություն է, սակայն կառուցված է իբրև պարբերույթ, այսինքն՝ հնչերանգային երկու մասի է բաժանված՝ բարձրացող և իջնող, որոնք հակադրվում են միմյանց: Եթե հանենք «այս բոլորը... վշտով», ապա կվերանա հնչերանգային երկմասնությունը, և պարբերույթը կդառնա սովորական նախադասություն:

Վերահիշյալ պարզ պարբերույթը կարող է բարդացվել լրացուցիչ նախադասություններով, որոնք սակայն պարզ պարբերույթի բնույթը չեն փոխում. այդպիսիք դարձյալ մնում են իբրև պարզ պարբերույթ, բայց բարդացվում են դանադան լրացուցիչներով. օրինակ՝

Գործիչների մեջ գուցե ամենակարևորն ու ազնիվը, և ընտանիքի համար, որ զավակներ է կրթում, և հասարակու-

1 Այս վերջին մասը տալիս ենք որոշ փոփոխությամբ:

Ի՞նչան համար, յոր դիտակից անդամներ է պատրաստում, և պետութեան համար, որ ազնիւ քաղաքացիներ է հասցնում և աշխարհի համար, որ լուսավոր մարդիկ է տալի, նա՞ ուսուցիչը ունեցել է գրեթե ամենավատթար վիճակը մեզ (նույն տեղում, 130):

Այստեղ էլ առաջին մասը իբրև պարբերութի մաս հենվում է կողմնակի պարագայական լրացումների թվարկման վրա, որոնցից յուրաքանչյուրի հետ կապակցվում է մի երկրորդական լրացուցիչ նախադասություն, որոնք սակայն, ինչպես ասացինք, պարզ պարբերութի բարդ շեն դարձնում, այդտեղ բարդացումը ձևական է և ոչ թե բնութագրական: Բարդ պարբերութի նույնպես կարող է այդ եղանակով բարդանալ: Եթե նույնիսկ այդ թվարկվող անդամների շարքում նրանց համահավասար թվարկվող նախադասություն իսկ լինի, դարձյալ պարբերութի պարզ է մնում. օրինակ՝

1 Երիտասարդ օրերի բուռն ցանկությունը՝ իմանալու, թե որտեղ է վերջանում աշխարհը, նրա հետ պատահած դժբախտությունը, ջաղացը, և այն բաղմաթիւ մարդիկ, որոնք գալիս էին, գնում, որպեսզի մի օր էլ նրանցից մեկնումեկը շգա և մյուս եկողները ջաղացպանին պատմեն, թե ինչից նա մեռավ, Ժեր ընկուղենիները, որ ամեն գարնան տերևակալում էին, պտղակալում և ուշ աշնանը դողալով տերևաթափ լինում, 6 Մարցա ջուրը, որ գարնանը ուռչում էր, ափերից դուրս գալի, իսկ ամառը բարակում այնքան, որ հորթերն էլ էին անցնում— Եյս ամենը մի խորհուրդ ունեին, մի ներքին իմաստ, որ ոչ միայն վաղուց ծանոթ էր նրան, այլև ինքը մերվել էր այդ իմաստի հետ (ԱԲԵ, 455—456):

Այստեղ պարբերութի համար հենարան են՝ քե որտեղ է վերջանում աշխարհը, նրա հետ պատահած դժբախտությունը, ջաղացը, և այն բաղմաթիւ մարդիկ, ծեր ընկուղենիները, Մարցա ջուրը, որոնցից առաջինը նախադասություն է, իսկ մնացածը բառեր և կապակցություններ են, բայց իբրև թվարկվող անդամներ միմյանց հավասար են և գրեթե բոլորն էլ բարդացած են երկրորդական նախադասություններով,

բայց շեն փոխում պարբերույթի բնույթը, այսինքն՝ այդ պարբերույթը նույնպես պարզ է:

Բարդ պարբերույթի երկու մասերն էլ կազմվում են նախադասություններից, որոնք պարբերույթի մեջ կապակցվում են կամ ստորադասական և կամ համադասական հարաբերությամբ. օրինակ՝

Ծտեիցդ որ սար կբղավի՝ տարան, ձոր կբղավի՝ տարան, քար կբղավի՝ տարան, + համա դու իսկի ետ թամաշ շանես (ՀԺՀ, 1, 311):

Ով Հայաստանու սուրբ աշխարի մեծությունը, նրա դրախտանման դաշտերի հոտն ու համը, էն ծաղկափթիթ ձորերը, էն անմահական աղբյուրների ջուրը, ու հայոց անմեղ ազգի հագուստը, ուրախությունը, խաղը, բարեպաշտությունն ու աստվածասիրությունը կամենում էր տեսնի, նրա գառը որդոց աղիզ երեսին նայի, մուրազն առնի, + էստեղ պետք է գար (ԽԱՆԼԺ, 4-րդ, 4):

Առաջինը պայմանա-դիջական հարաբերությամբ բարդ ստորադասական կապակցություն է, իսկ երկրորդը նույնպես ստորադասական կապակցություն է, բայց առաջին մասը երկրորդի համար ենթակա է:

Ահա պարբերույթի մի այլ օրինակ, որը բարդ է և կառուցված է համադասական հարաբերությամբ, որտեղ երկու մասերը իսկ շաղկապով զուգադրված են. օրինակ՝

Բուսականությունը ավելի առատ էր դարձել և ճոխացել. վայրենի շուշանները ծաղկել էին իրանց լայն ու լեղվածև տերևների մեջ. վարդենին սպիտակ վարդերով պճնվել, դեղին ծաղիկների փնջերը երկարացել՝ դեպի մեղ էին կռանում, երիցուկները անհամար քանակությամբ, խոշոր և պարարտ, դրավել էին խորշեր ու ծերպեր, + իսկ երեք-չորս նոր ջրվեժների ժայռներով դահավիժում էին ժայռերն ի վտր, պայթում քարերի վրա, ջրի փոշի ցանում ամեն ուղղությամբ (ՎՓԸԵ, 192):

Ինչպես արդեն նշեցինք, բարդ պարբերույթը նույնպես

կարող է բարդացվել. այդ բարդացումը կատարվում է երկրորդական նախադասությունների լրացումներով, որոնք այս կամ այն ստորադասական հարաբերությամբ կապակցվում են պարբերության թվարկվող անդամների հետ: Եթե այդպիսի լրացուցիչ նախադասությունները կուտակվում են անդամների վրա, ապա պարբերությանը խճողվում է, որը ոճաբանորեն անընդունելի է. օրինակ՝

1 Նա մերթ հիշում էր Դոմբերգը, տւր եղել էր ցերեկը և առանձնության մեջ արտասվել էր մի անառիթ տխրությամբ, որ երբեմն պատում էր նրան և նրան մղում էր դեպի բլուրները և անտառը և էմբախի լուռ գետեզրը, 2 մերթ ականջին հնչում էր ձայնը այն հիվանդ լեռնցու, որին ցերեկով այցելել էր մերթ զգում էր մի քաղցր ջերմություն, 3 և ուռչում էր կուրծքը, 4 թվում էր իրենն է ամբողջ աշխարհը, և ինքն աշխարհի ամենաերջանիկ մարդն է, 5 բայց մի ուրիշ հույզ, ինչպես մշուշ, ծածկում էր գարնան պարզ երկինքը, և ոչինչ չէր երևում և միայն ծնոտի վրա զգում էր նույն ձեռքի ջերմությունը (ԱՔԵ, 608):

Այստեղ, ինչպես նկատելի է, բարդացումը այնպես է խճողված, որ պարբերության առաջին մասի թվարկվող անդամները աղոտ կերպով են նշմարվում: Եթե բարդացումը շափավոր է և մանավանդ հաշվի է առնված նաև մասերի համամասնությունը թվարկվող անդամների վրա բաժանելիս, ոճաբանորեն գեղեցիկ է բացի ընդհանուր պարբերության ընթացքից լսողի կամ կարդացողի ուշադրությունը հրավիրվում է նաև կողմնակի մանրամասնությունների վրա, և բովանդակության կողմից պարբերությանը ավելի լրիվ ու կատարյալ է լինում, իսկ շափաղանց բարդացումը մթազնում է հիմնական միտքը և ընկալումը դժվարանում է լսողի կամ ընթերցողի համար: Բակունցից բերված վերջին պարբերության առաջին մասի առաջին անդամը ծանրաբեռնված է հրկու որոշիչ երկրորդական նախադասությամբ, սրանցից վերջինը լրացված է երկու այլ բավական ընդարձակ որոշիչ երկրորդական նախադասություններով, որոնք խիստ ընդհատում են պար-

բերույթի ընդհանուր շղթան թե ըստ մտքի և թե ըստ հնչե-
րանդային ընդհանուր գծի:

Բարդ սլարբերույթը ըստ կապակցման բնույթի և ար-
տահայտած հարաբերությունների բաժանվում է երեք խմբի՝
համադասական, ստորադասական և շարահարական:

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒՅԹ

Համադասական պարբերություններ կազմվում են այն բոլոր շաղկապներով, որոնցով կապակցվում են բարդ համադասական նախադասությունները: Այստեղ մեր նպատակը չէ քննել, թե ինչ շաղկապներ են դրանք. բարդ համադասական նախադասությունը ուսումնասիրելիս մենք դրանք մանրամասն քննել ենք¹:

Այս պարագայում մեզ հետաքրքրում են այն կապակցական հարաբերություններն ու դրսևորման ձևերը, որոնք էությունն են կազմում համադասական պարբերության և բնութագրական են նրա համար:

Համադասական պարբերության արտահայտում է հակադրական, զուգադրական, հարակցական հարաբերություններ: Այս հարաբերություններից պարբերության համար ամենից հաճախ օգտագործվում է հակադրական հարաբերությունը, այդ է պատճառը, որ պարբերության հին ուսումնասիրողները պարբերության էին համարում լեզվական այն հրկմասնյա վերջացած արտահայտությունը, որ կառուցվում էր հակադրության սկզբունքով: Հակադրական հարաբերությունը աչքի է ընկնում իր շեշտված հնչերանգով, արտաբերական մեծ լարվածությամբ, որ արտահայտվում է պարբերության առաջին մասի ուժգին բարձրացումով, երկրորդ մասի սուր անկումով, խոր դադարով և հակադրվող մասի բառերի շեշտվածությամբ:

1 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. 2, էջ 291—292:

Առհասարակ սրանք պարբերութի բնորոշ հատկանիշներն են, բայց հակադրական պարբերութի մեջ առավել ցայտուն են դրսևորվում:

Հակադրական պարբերութի երկու մասերը արտահայտում են տարբեր երևութների, դեպքերի, առարկաների հակադրություն, ընդ որում առաջին մասում թվարկվում են դրանք, իսկ երկրորդ մասը առաջ է քաշում դրանց հակադիր դեպքեր, դատողություններ, առարկաներ՝ ստեղծելով երկու մասերի մեջ սուր ընդհարումներ և հենց սրանով էլ երկու մասերի բարձրացման ու իջեցման լարվածությունը հասցնում է ամենաբարձր աստիճանին: Հակադրական պարբերութիները կապակցվում են բայց, սակայն, իսկ, և շաղկապներով. օրինակ՝

1 Երաժշտում և դեռ պիտի
Հորդաբխուն երաժշտեր,
2 Վիշտ երգելով՝ ցրեր վշտեր,
3 Հույս երգելով հավատ շեշտեր,
4 Սուտը հերքած՝ ճիշտը ճշտեր, }
Բայց մի ահեղ գիշերվա մեջ
Արյուն հագան կանաչ դաշտեր,
Եվ հույս, հավատ, կյանք ու անուրջ,
Օր ցերեկով ողջը դարձավ մի վատ երազ,
Սկիզբ առավ աշխարհակուլ մի պատերազմ
(ՊՍԱԶ, 183):

Հաճախ հակադրականությունը արտահայտում է անհամապատասխանություն, այսինքն պարբերութի առաջին և երկրորդ մասերն իրենց բովանդակությամբ չեն համապատասխանում. երկրորդ մասի բովանդակությունը հակադրվում է ոչ թե առաջին մասի բովանդակությանը, այլ այնպիսի երևութների, որոնք կլինեին բնական, օրինաչափական ու անհրաժեշտ առաջին մասում հաղորդվածի պայմաններում. օրինակ՝

Մեկ ձեր շուրջը նայեք. ծաղիկ, արև, ծով. արտույտները ահա վերևում ճախրում են և երգում, անտառում հանկուցիչ ստվերներ են մեղ կանչում, մեր շորս կողմը լի է դալալայնե-
րով, ձեզ մոտ նստել է խաղ, ծիծաղ. երգ և միմիայն սեր, միայն սեր որոնող երիտասարդություն, — և դուք հնադար-
յան մղձավանջներ եք պատկերացնում մեր առաջ (ՎՓԸԵ, 391):

Երբ շրջապատում ուրախություն, ծաղիկ, սեր, բնության գեղեցկությունն է թաղավորում, ապա երկրորդ եզրում պետք է դրանց համապատասխան արտահայտվեր իբրև հակադրու-
թյան անապատ, ատելություն, ախուր ու մռայլ երիտասար-
դություն և այլն, որպեսզի ստացվեր իսկական հակադրու-
թյուն, մինչդեռ հակադրությունը այս վերջինների հետ կապ-
ված կամ ավելի ճիշտ նրանցից բխող կամ նրանց հետ անուղղակի առնչվող բոլորովին այլ բովանդակություն ունի:
Մի այլ օրինակ՝

Դու բարձրացել ես մաքառումով

Դեպի ահռելի բարձրություններ,

Եղել ես հաճախ արևին մոտ

Տեսել զազաթներ լուսաձյունե

Եվ ճանապարհին ինչքան ես դու

Քո բոբիկ ոտներն արշունոտել, —

Բայց քայլել ես միշտ, քայլել անդու,

Տքնել անդադար ու կարոտել (ԵԶԸԵ, 176):

Այստեղ էլ առաջին մասում հաղորդվածի օրինաչափա-
կան հակադրությունը կլինեք, երբ ասվեր. թե դու արդեն հոգ-
նել ես, իջել ես բարձրություններից և հանգստացել, ոտկայն
երկրորդ մասը հենց հակադրություն է սրանց համար:

Հակադրությունը երբեմն ուղեկցվում է զիջական հարա-
բերությամբ, այսինքն՝ պարբերությի երկրորդ մասը ունե-
նում է այնպիսի բովանդակություն, որ չէր կարող սուլառվել
առաջին մասի բովանդակությունից. օրինակ՝

Եվ ունեք նա սիրտ սիրելու համար,
 Մի սիրտ գերվելով տիրելու համար,
 Մի սիրտ՝ սեր համակ,
 Մի սիրտ՝ սիրո ծով,—
 Իսկ ինքը սիրուց հավիտյան ցամաք,
 Ինքը սիրուց սով (ՊՍԱԶ, 159):

Եղիբ վերջին դու, եղիբ հետին,
 Թող լինի ուղիդ օրհասական,—
 Քո ճանապարհը երբեք սակայն
 Չխառնես նրանց արահետին (ԵԶԸԵ, 177):

Հակադրական պարբերությքը երբեմն արտահայտում է
 բացառում, ժխտում, այսինքն՝ ինչ որ ասվում է առաջին մա-
 սում, երկրորդ մասով բացառվում կամ ժխտվում է. օրինակ՝

Եվ սիրտդ լիքն է եղել հաճախ
 Ցասման թույնով ու ատելությամբ,
 Եվ կասկածը սև, կասկածը շար
 Քեզ հնշել է մերթ իր ծանրությամբ,—
 Բայց դու սրբել ես հոգիդ միշտ էլ
 Ճամփեքի մաքուր, վսեմ հրով,
 Եվ միշտ պայծառ է հոգիդ եղել,
 Եվ սիրտդ լիքն է եղել սիրով (նույն տեղում,
 176):

Համադասական պարբերության երկու մասերը միևնույն
 հակադրական շաղկապների միջոցով կապակցվում են նաև
 իրեն զուգահիշ մասեր, այստեղ արդեն ուշադրությունը բեկո-
 վում է ոչ թե պարբերության երկու բեկոների հակադրության
 վրա, այլ նշվում է նրանց տարբերությունը, որն արտահայտ-
 վում է հասկապես զործողությունների միջոցով: Զուգահիշու-
 թյան մեջ արտաբերական լարվածությունը, հնչերանգը, դա-
 դարը համեմատաբար թույլ են արտահայտվում. օրինակ՝
 Բուսականությունը ավելի առատ էր դարձել և հոխացել,

վայրենի շուշանները ծաղկել էին իրենց լայն ու լեզվաձև տերևների մեջ՝ վարդենին սպիտակ վարդերով պծնվել, դեղին ծաղիկների փնջերը երկարացել դեպի մեղ էին կռանում, հրիցուկները անհամար քանակությամբ, խոշոր և պարարտ՝ գրավել էին խորշեր ու ծերայեր, իսկ երեք-չորս նոր ջրվեժներ ուսույուններով դահավիժում էին ժայռերն ի վար պայթում քարերի վրա, ջրի փոշի ցանում ամեն ուղղությամբ (ՎՓԸԵ, 192):

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դարերում հին (ԵԶԸԵ, 250):

Համադասական պարբերությը արտահայտում է նաև հարակցական հարաբերություն: Առաջին մասում հաղորդվում են այլևայլ երևույթներ, գործողություններ, իսկ երկրորդ մասը դրանց համար լրացուցիչ հաղորդում է, որ բխում է նրանցից կամ հաղորդվում է նրանց սուբյեկտ: Այդպիսի հարաբերություն արտահայտող պարբերությունները կապակցվում են և, ու, բայց, սակայն, իսկ շաղկապներով՝ այս կամ այն լրացուցիչ նրբերանգներով, որոնք ուղեկցում են գրեթե բոլոր համադասական կապակցություններին. օրինակ՝

Այն ժամանակ լուրեր էին պատվում, թե Զորեկից կորել է մի հրինջ, կորել է Բաղիրենց կովը, դիշերով մարդ է մտել Տեր դի բազումի մեղվանոցը, — և ձմեռն ինչպիսի լուրեր չէին տարածում. Գորիս քաղաքում (ԱԲԵ, 346):

«Տեր» են կանչում մի-մի բերան,
Մի-մի ծանր աղոթք անում,
Մատաղացուի ոտ ու վզից
Արձակում են կապ ու օրարան, —
Ուր գավիթի սալարկը պաղ
Զոհի արյամբ է տաքանում (ՊՍԱԶ, 104):

Խեղճը էսպես լեզուն ածաւ,
 Շատ հուշս սւլաւ, շատ խոստացաւ,
 Շատ սուտ ասաւ պարտքատերին,
 Շատ սպասեց իր ընկերին,—
 Բայց ընկերը չկա, չկա (ՀԹԵԺ, 1-ին 270):

Հսկադրական հարաբերություն տրտահայտող համադրա-
 սական պարբերութիւն իմաստով մոտ է հավելական հարա-
 բերություն դրսևորող պարբերութիւն, ուր առաջին մասի
 թվարկվող անդամներին նաև, այլև շաղկապներով ավելաց-
 վում է նոր անդամ, որ կարծեք նախորդ թվարկումների շա-
 րունակությունը լինի, որը, սակայն, առանձնանում է իբրև
 պարբերութի երկրորդ մաս, ըստ որում առաջին մասում ոչ
 միայն շաղկապը և երկրորդ մասի նաև, այլև շաղկապները
 ձևավորում են այդ երկմասնությունը իբրև հնչերանգային և
 քերականական տարբեր միավորներ, որոնք միասնանում են
 մի ամբողջի մեջ. օրինակ՝

Վրեժի զգացումով էր լցված ոչ միայն ծեր իշխանը, որի
 թագուհի դստերը Շապուհը տարել էր դերի, վրեժի զգացում-
 ներով էր տոգորված ոչ միայն Պապը, որի թագաւոր հո-
 րը բանտարկել էր Շապուհը Անհուշ բերդում, իսկ թագու-
 հի մորը մատնել գերության անարդանքին, վրեժով լցված էր
 ոչ միայն Մուշեղ սպարապետը, որի մորթաղերծ հոր ուրվա-
 կանը ստիպում էր նրան մորթաղերծ անել իր ձեռքն ընկած
 յուրաքանչյուր պարսիկ զորավարի և, խոտ լղենելով ցուցա-
 դրել, ~~+~~ վրեժով էին լցված նաև Պապի ուսման և օտարության
 ընկերները՝ Երեմիա Ամատունին և Բաթ Սահառունին ոչ մի-
 այն իրենց հայրերի համար, որ ընկել էին Արտագերսի
 պաշտպանության ժամանակ, այլև ավերված քաղաքների ու
 գյուղերի և անարգված, սրատված հայրենակիցների համար
 (ՍԶՊԹ, 75):

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒՅԹ

Ստորադասական կապակցությամբ պարբերությունները ավելի շատ են և կապակցության ձևերը բազմազան. դրանք խմբավորվում են իբրև որոշիչային, ժամանակի, տեղի, պայմանի, զիջական, պատճառի, նպատակի, բաղդատության և այլն:

Որոշիչային պարբերությւթը երկու տեսակ է լինում. մեկը այն է, որի բարձրացող մասը ունենում է մի գոյական կամ գոյականաբար գործածվող որևէ բառ՝ որոշիչ երկրորդական նախադասությունների թվարկությամբ հանդերձ. որոշիչ նախադասությունների այս թվարկվող շարքն էլ հենց ձևավորում է պարբերության առաջին մասը: Երկրորդ իջնող մասը նախադասություն է, որ որևէ առնչությամբ կապվում է առաջին մասում հանդես եկող գոյականի կամ գոյականաբար գործածվող բառի հետ. օրինակ՝

- Նա, որ քիչ առաջ
- 1 Ամենից սիրելի ձեր աշարկան էր,
- 2 Եվ գովեստների ձեր բնաբանը,
- 3 Եվ բալասանը ձեր զառամության,
- 4 Ամենից լավը, ամենից սիրելին,—
- Ինչպիսի հրեշավոր մի հանցանք գործեց
- Մի ականթարթում, որ այդպես զրկվեց
- Այնքան ծալեծալ ձեր շնորհներից (Շեքս., 1-ին, 292):

Նա, որ դեռ երեկ
 Իբրեւ մի ձայնեղ երգիչ-տիրացու,
 Երգչախմբի մեջ վսեմ մեներգ էր միայն տարածում
 Ու լսարանում հեղ պատասխանում սերտումի դասը,—
 Հիմա դարձել էր խմբավար վանքի,
 Դարձել էր հիմա երգի դասատու (ՊՄԱԶ, 49):

Երբեմն առաջին մասում հանդես եկող լրացյալ բառը
 կարող է ամեն մի որոշիչ նախադասության սկզբում կրկնվել.
 այս դեպքում թվարկվող երկրորդական նախադասություն-
 ները առավել ներդաշնակ ու շափակից շարք են կազմում.
 օրինակ՝

Նա, որ սպանեց իմ թագավորիս,
 Նա, որ իմ մորս պոռնիկ դարձրեց,
 Նա, որ ներս խոթվեց իմ ընտրությանս և հույսերիս
 մեջ

Եվ կարթը ձգեց, որ կյանքս էլ որսա,
 Այն էլ այնպիսի շարանենգությամբ,—
 Ձէ որ կատարյալ խելամտություն է,
 Որ այս բաղուկով վարձը ձեռքը տամ (Շեքս.,
 1-ին, 103):

Սերտ միասնություն է ստեղծվում այն պարագայում,
 երբ լրացյալ բառը կրկնվում է երկրորդ մասի սկզբում. այս
 դեպքում պարբերության օղակ է կազմվում, և մասերը թե՛
 ձևականորեն և թե՛ բովանդակությամբ կուռ ամբողջություն
 են դառնում. օրինակ՝

1 Այս քաղաքում, ուր ցոփ արքաներ են ապրել,
 2 Ուր շաշել է մտրակը ստրուկների վզին
 Որպես վերին պարգև՝ ուր հյուսիսի
 Մառախուղի նման այս անտարբեր
 Իշխաններն են դարեր առևանգել, հարբել,
 Կախաղաններ կանգնել հարյուրներով,—

Այս քաղաքում հիմա եռում է կյանք մի նոր,
Զարմանալի մի կյանք (ԵԶԸԵ, 183):

Որոշիչային պարբերությի մյուս տեսակը այն է, որի առաջին մասում թվարկվում են համասեռ նախադասություններ, իսկ դրանք լրացվում են մի որոշիչ երկրորդական նախադասությամբ, որ լրացում է ոչ թե շարքի որևէ նախադասության, այլ ամբողջ շարքի համար. հենց այս երկրորդական որոշիչ նախադասությունը կազմում է պարբերությի երկրորդ իջնող մասը. օրինակ՝

Եվ իրոք այնքան ձգողական մի ղորություն ունեւ նա որպէս կին և բանաստեղծուհի, այնքան կանացի հրապույրներով էր պարուրված նրա թեև կարճ, բայց փարթամ անձը, նրա թեև անբարբառ, սակայն ամեն ինչ խոսող աչքերը այնքան լեզվանի էին և գաղտնախորհուրդ կանացիությամբ լի, որին, ինչպէս բարձրագույն իմացականության մի կծիկի, քանդել փորձողն անմիջապէս կխճճվեր այդ կապանքների մեջ առաջին իսկ փորձին (ՎՓՄՊ, 66):

Երբեմն առաջին մասի թվարկվող նախադասությունների շարքը ամփոփվում, ընդհանրացվում է մի բառով և ապա երկրորդ մասը իբրև որոշիչ նախադասություն հաջորդում է դրան և այդ ամբողջի լրացում դառնում. օրինակ՝

Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար շրսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խուռն բաղմություն մը հետաքրքրությամբ դեպի Ղալաթիո հրապարակը կը վազեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, որովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը (ՀՊ, 1-ին, 377):

Ժամանակի պարբերությը արտահայտում է երկու մասերում նշվող գործողությունների, դեպքերի, երևույթների փոխհարաբերությունն ժամանակի մեջ: Հիմնականում պարբերությի առաջին մասը կազմում է ժամանակի երկրորդական նախադասությունների շարքը, իսկ երկրորդ մասը ղլխավոր

նախադասութիւնն է, որ ամբողջացնում և փակում է հիշյալ
շարքը. օրինակ՝

Եվ երբ հուշ դառնա այսօրվա ներկան,
Ու դարը այս մեծ փոխվի երազի,
Եվ դու, իմ հեռու, գալիք բարեկամ,
Կարդալու լինես իմ կյանքի մասին,
Իմացիր, որ մեր օրերի խորքում
Ես էլ եմ եղել կրքերին գերի (ԵԶԸԵ, 187):

Հաճախ յուրաքանչյուր նախադասութեան սկզբում կրր-
կընվում է ժամանակի շաղկապը իբրև հարակրկնութիւն, որ
դառնում է պարբերութի համար ոչ միայն կապակցման,
այլև անդամահատման միջոց և կարգավորում է շարադասու-
թիւնն ու կշռութիւնը. օրինակ՝

Ի Երբոր բացվին դռներն հուսո,
Ե Երբ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Տ Զքնաղ երկիր մեր Արմենիո,
Երբ փայլեն յուր քաղցրիկ օրեր,
Ս Երբոր ծիծառն իր բույն դառնա,
Տ Երբոր ծառերն հագնին տերև, =
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա
Աշխարհն, որ ինձ հտուր արև (Ռուսինյան):

Պարտադիր չէ, որ կրկնութեան դեպքում բոլոր նախադա-
սութիւնները սկսվեն շաղկապով. երբեմն բանաստեղծութեան
մի քառատողն է միայն սկսվում շաղկապով և կրկնվում է
միայն հաջորդ քառատողում. օրինակ՝

Երբ խոր գիշերով ցուրտ անկողնիս մեջ
Քռնը իմ աչքից հեռու է փախչում,
Եվ հոգուս վերա սև հյուղերն անվերջ
Երկանի նման ծանրանում տրտում,
Երբ մեկամաղձոտ աշնան երկնքի
Պղտոր լուսնյակն էլ մարում է իսպառ,

Ու պատերը մութ իմ խեղճ սենեկին
Գրկում ինձ ինչպես մի շիրիմ խավար,—
Թվում է ինձ թե հեռու, մենավոր
Գերեզմանի մեջ դիակ էմ անշունչ (Զ. Հովհաննիս-
յան):

Կրկնվող շաղկապը կարող է իր տեղը փոխել, թեև օրի-
նաչափականը այն է, որ նախադասությունը սկսվի նրանով.
օրինակ՝

Դաշնակահար ոլոհուն երբ որ
էւ շորի դաշնակներ,
Սիրտը մեռնի վշտակոտոր,
Պատեն գլուխն ալիքներ,

Երբ մոռանա հիշել պեսպես
Անուն ու սերն ամենքի,—
Գիտցեք, որ դեռ հիշում է ձեզ
Եվ այս օրերն իր կյանքի (ՀԹԵԺ, 1-ին, 466):

Երբեմն այնպես է լինում, որ երկրորդ մաս հանդիսա-
ցող գլխավոր նախադասության որեէ հարարերյալ բառ կի-
րառվում է առաջին մասի սկզբում. դա չի վնասում պարբե-
րույթի ամբողջականությանը, — հնչերանդաշին երկմասնու-
թյանն ու լարվածությանը, ընդհակառակն, ամրացնում է պար-
բերույթի սերտությունը, մանավանդ այն դեպքում, երբ դա
կրկնվում է երկրորդ մասում. օրինակ՝

Հիմա, երբ ողջը անցած է թվում,
Երբ առաջվա պես դու ինձ չես թուլում,
Երբ երևալդ, քայլվածքդ խոսուն
Բնձնից չեն խլում իմ հարտար լիզուն,
Երբ ես կարող եմ քեզ հանգիստ նայել,
Սրամտելով ժպիտդ շահել,
Կատակով ասել այն, ինչ որ անցավ,
Այն, ինչ ես ասել չկարողացա

Ոչ խոսքով, ոչ էլ մի հատիկ երգով,—

Հիմա կքել եմ տողերիս ներքո (ՊՍՍՃ, 130):

Այս օրինակը օղակային պարբերությ է, որ հաստուկ է ընդհանրական պարբերության. առաջին մասը երկրորդ մասի ողևէ բառով սկսվում է և նույնի կրկնությամբ օղակվում է բոլորովին նոր հնչերանգային լիցքով: Համեմատիր նաև հետևյալ օրինակը.

Ամեն անգամ քո տվածից երբ մի բան ես դու տանում,

Ամեն անգամ երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում,

Ջարմանում եմ, թե ով շռայլ, ինչքան շատ ես տվել ինձ,

Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից
(ՀԹԵԺ, 1-ին, 214):

Ասացինք, որ ժամանակի պարբերությունների առաջին մասը հիմնականում կաղմվում է ժամանակի երկրորդական նախադասությունների շարքից. այդ էլ ապացուցում են վերևում բերված օրինակները. սակայն չի բացառվում նաև այն, որ ժամանակային պարբերության առաջին մասը կաղմված լինի գլխավոր նախադասությունների շարքից, իսկ երկրորդ մաս դառնա ժամանակի երկրորդական նախադասությունը. օրինակ՝

Նոր էր պրծել հայ ջարդը նոր՝

Ադանայի,

Ու երեսուն հազար դիակ հող էր մտել,

Բայց չէր փտել.

Ելդըղ-քյոշքի տերն արնախում ու սևանում

Սալոնիկում իր ձեռքերն էր դեռ լվանում՝

Գահը զիջած զավակներին իր արժանի,

Որ նորածն եվրոպական տարազի տակ

Առժամանակ ծածկում էին ճանկ ու ժանիք.

Գրավաճառ խանութների ցուցափեղկում

Բուրում էին դեռ հեթանոս արքշիռ բույրեր՝

Կախարդ ձեռքով ամենազոր Վարուժանի

Խառնվելով Գողգոթայի ծաղիկների հոտին անթույլ.
 Դեռ հրահան իր մատներով Սիամանթոն
 Շանթագրեւ էր կամենում Կարմիր լուրեր,
 Ու թեքեյանն էր հղանում
 Մի հարություն հրաշալի,—
 Երբ Կոմիտասն այստեղ եկավ (ՊՍԱԶ, 170):

Ժամանակի պարբերության երկու մասերի միջև արտա-
 հայտվում են միաժամանակության և ժամանակների հաջոր-
 դության հարաբերություններ: Այն բոլոր շաղկապները, որոն-
 ցով կապակցվում են ժամանակի երկրորդական նախադասու-
 թյունները գլխավորների հետ, կարող են ծառայել նաև պար-
 բերության համար իբրև կապակցման միջոց*: Նշենք նաև, որ
 պարբերության երկրորդ մասը (գլխավոր նախադասությունը)
 կարող է ռենհնալ այն ժամանակ, ապա շաղկապական բա-
 ռերը:

Պայմանի պարբերության առաջին մասը կազմվում է պայ-
 մանի երկրորդական նախադասություններից, իսկ գլխավորը
 հաջորդում է դրանց իբրև երկրորդ մաս, որի գործողության
 կատարումը պայմանավորվում է առաջին մասի թվարկվող
 շարքով: Սովորաբար պայմանի նախադասությունների շաղ-
 կապը կրկնվում է ամեն նախադասության սկզբում, եթե նա-
 խադասությունները չեն կապակցված միավորիչ շաղկապնե-
 րով. օրինակ՝

Եթե կործանվեցան քաղաքներ և հողահվեցան մեծաշեն
 ավաններ, եթե գերի առնվեցան բողմաթիվ բնակիչներ և
 արյունով ներկվեցան հայրենի երկրի դուշտերն ու անդա-
 տանները,— չէ որ այդ բոլոր շարիքները չգործվեցան լոկ շա-
 րագործության համար (ԲՆԺ, 7-րդ, 448):

Եթե պայմանի պարբերության մեջ առաջին մասը կազմ-
 վում է գլխավոր նախադասությունների շարքից, իսկ դրանք
 փակվում են մի պայմանի երկրորդական նախադասությամբ,
 ապա նույնպես պարբերության և ստացվում. օրինակ՝

* Վ. Առաքելյան. Հայերենի շարահյուսություն, հատ. 2, էջ 175—201:

Թող կործանե ինձ աստված, Թող քրիստոնյան ինձ Հու-
դա և հայը վասակ անվանե, — հիթե ես երբեք դրժեմ իմ ուխ-
տին ու երդմանը (ՄԳՄ, 254): Այսպիսի պարբերույթները
մնում են բաց, այսինքն՝ չեն համբողջացվում ու կկորացվում.
Իսկ երբ երկրորդական նախադասությունների շարքը թվարկ-
վում է երկրորդ մասում, իսկ գլխավորը նախադաս է, ասյա
այդպիսի կառուցվածքը չի համբողջանում ու ավարտվում,
ուստի և պարբերույթ չի կազմում: Այսպիսի կառուցվածքնե-
րը՝ ներառյալ նաև մյուս տեսակի երկրորդական նախադասու-
թյունները, կոչվում են բաց պարբերույթային կառուցվածք-
ներ. օրինակ՝

Ես ի՞նչ կանեի, հիթե չլինեիր հողն այս մի պատառ,
Թե համփիս վրա շխշշար բարդին այս բարձրակատար,
Թե շշնշեի բույրը այս հողի, ուրցի, փշատի,
Թե աշնան քամին թոնրի հոտն առած դեմս շվազեր,
Թե ավերակն այս քարե լուծյամբ
Ինձ նախնիներիս պատգամը շասեր (Վ. Դավթյան):

Երբեմն պայմանի պարբերույթը համատեղում է նաև
ժամանակային հարաբերություն. օրինակ՝

1 Եթե հայ խաղի ու տաղի հանդես
 Խլացել էին մեղնից շատերը,
2 Եթե մերային խեղճ ու վատերը,
 Մեր արդար հացն ու պանիրը թողած
 Աչք էին տնկում օտար փախլավին, —
 Ապա օտարը ամենայն սիրով,
 Ապա օտարը
 Խոսքերով, գրով
 Թաքուն, բացահայտ
 Մեղ էր բանսարկում (ՊՍԱԶ, 70):

ԶԻՋԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒՅԹ

Զիջական պարբերույթի առաջին մասը կազմվում է ղիջա-
կան համասեռ երկրորդական նախադասություններից. որոնք

էլ թվարկվում են կամ ղիջական շաղկապներով և կամ ղիջական շաղկապը առաջին նախադասութեան հետ է կիցառվում, իսկ մյուսները ենթարկվում են այդ միևնույն շաղկապին. օրինակ՝

Թեկուզ հողմերը սանձարձակ անեք,
Եւ մարտնչել տաք տաճարների դեմ,
Թեկուզ կոհակը կործանե կույ տա նավարկութեանը,
Թեկուզ ցորենը ցրիվ դա հասկից և ծառերն ընկնեն,
Թեկուզ բուրգերը և պալատները
Գլուխները ծռեն մինչև հիմքերը,
Թեկուզ բնութեան սերմերի դանձը թափալդիոր թափվի
Մինչև այն աստիճան, որ կործանումն էլ ուժաստատ
դառնա, —

Պատասխան տվեք իմ հարցումներին (Շեքս., 1-ին,
257):

Այս օրինակի մեջ պարբերութի առաջին մասի բոլոր անդամները գրեթե սկսվում են թեկուզ շաղկապով. առանց շաղկապի են մնում միայն այնպիսիները, որոնք միավորիչ շաղկապով կապված են նախորդի հետ:

Հետևյալ օրինակում ղիջական շաղկապը կիրառված է միայն թվարկվող շարքի սկզբում:

Չնայած որ Թեոդորոս սարկավազն ու Սուրմոն ճգնավորքը սրերը ձեռքներին զորքի առաջն անցան, ահավոր ձայնով խրախույս կարդացին և սկսան կռվել ներս խուժողների դեմ, — այսուամենայնիվ նրանց ընդդիմութեանը չկարողացավ ընկճել թշնամու զորութեանը, որ դնալով աճում և ամեն տեղ գրավում էր (ՄԳՄ, 245):

Զուգաժող խոսքերի մեջ շաղկապի կիրառութեանը կարող է ենթարկվել տնտաման կամ տողատման օրենքներին՝ այս դեպքում շաղկապը ենթարկվում է բանաստեղծական կշռութիւն և ոչ թե քերականական օրենքներին. օրինակ՝

↓ Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց
Երկար դարերով, ահեղ հարվածով,

Քեպետե էսպէս ցրվեց, տարածեց,
 Զոյեց հողահող, փռեց ծովեծով, —
 Վկա է սակայն բովանդակ երկիր,
 Որ մենք կարեւր ապրում ենք կրկին,
 Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր,
 Կենդանի է դեռ հայութեան ոգին (ՀԹԵԺ, 1-ին,
 170):

Ղիջական պարբերությունները ըստ իրենց նշանակության,
 բաժանվում են երկու խմբի. առաջին խումբը արտահայտում
 է սովորական սկզբում, թե շնայած արգելքների այն շարանին,
 որ թվարկվում է պարբերության առաջին մասում, այնուամեն-
 նայնիվ դրանք չեն խանգարում պարբերության երկրորդ մասի
 գործողության կատարմանը. օրինակ՝

Քեռ առաջին անգամ աղքատ կնիկը մի փոքր վախեցավ
 գողությունը բացվելուց, ի փոքր էլ դժոխքի արհավիրքը հեռ-
 վից սպառնացավ նրան՝ մի փոքր էլ խղճմտանքի ձայնը կա-
 մացուկ ծվաց նրա մեջ, — փարատվեցավ նրա սրտին (ՌՊԵ,
 498):

Երկրորդ խմբի Ղիջական պարբերությունների մեջ Ղիջական
 երկրորդական նախադասությունները արտահայտում են ընդ-
 հանրացում, այսինքն՝ արգելքների այն ծայրագույն սահմանն
 ու ամփոփումը, որ պետք է խանգարեր պարբերության երկրորդ
 մասի գործողության կատարմանը, և սակայն այդ ևս արգելք
 չի դառնում. օրինակ՝

Քող փշե քամին պաղ-պաղ երեսիս,
 Վերեն, ամպերեն սաստիկ ձյուն թող գա,
 ՅՈրքան որ կուզե թող փշե հյուսիս, —
 Հուսով ևմ վաղ-ուշ դարունը պիտ գա (ՌՊԵ, 178):

Որտեղ էլ մահը քեզ հասնի մի օր,
 Որ լուսնի տակ էլ հանձնեն քեզ հողին,
 Հայրենի դաշտում, թե մի հեռավոր
 Անհայտ հողի տակ քեզ ծածկեն լոին, —

Քո գերեզմանը չի կորչի խռով,

Առանց շիրմաքար չի մնա երկրում (Շիրադ):

Համեմատիր՝ եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի, մաղթանաց գոչման, աղօթից հայցման, ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի և քիչ աղախնաց ոք պաղատեսցի աստուածսիրաբար, — հաւասարապէս անաշառութեամբ ընկալցին ի քէն մասն երանութեան, պարտուց աղատութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան (Գն, Ղ, 5):

Զիջական պարբերութեան առաջին մասը բաղկանում է թվարկվող երկրորդական նախադասութիւնների շարքից, իսկ նպատակի պարբերութեան, սրան հակառակ, առաջին մասը կազմում են գլխավոր նախադասութիւններից, որոնք փակվում են նպատակի երկրորդական նախադասութեամբ, ընդ որում, երբ այս երկրորդական նախադասութիւնը վերաբերի ամբողջ առաջին մասի շարքին, ապա պարբերութեւն ավելի ամբողջական ու լրիւ է լինում, քան այն դեպքում, երբ նպատակի երկրորդական նախադասութիւնը առնչվում է թվարկվող նախադասութիւններից մեկին (վերջինին): Համեմատիր.

Ոչ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս և ոչ ընդ ամենայն յունականսն անցանել ատակեալ սակս կարճութեան ժամանակին. նա և ոչ մատենագրութիւնք Դիողորի ի հուպ առ մեզ են, — զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնան, զի մի՛ ի մէնջ մնասցէ ի գլխատրացն և ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոց շարագրութեանց (Մեդ, 3-րդ, Ա.):

Բան մը չէր պահանջէր իր սիրոյն փոխարեն, ոչ իսկ իմ սերս. իր բոլոր ուղածը թույլտվութիւն մըն էր հավիտյան դիս շրջապատելու իր անհուն խանդաղատանքովը, հսկելու վրաս, թող շտալով որ հիվանդանամ, իր խնամքներեն շինված տեսակ մը խանձարուրի մեջ ամփոփելով իմ բոլոր կյանքս ու շարժումներս, որպեսզի ցավ մը կամ վիշտ մը չունենամ երբեք (ԳԶԵԺ, 1-ին, 36):

Առաջին օրինակում նպատակի նախադասությունը առնչվում է պարբերության առաջին մասի վերջին նախադասության հետ, իսկ երկրորդ օրինակում առաջին մասը ձևավորվում է լրացուցիչ համասեռ անդամների թվարկությամբ, իսկ երկրորդ մասը կապվում է հենց այդ թվարկվող բոլոր անդամների հետ:

Ավելի կատարյալ նպատակի ~~պարբերություն~~ հին կաղմվում, երբ գլխավոր նախադասությունները համասեռ են և չեն միջնորդված հնչերանգային ընդհանուր գիծը բեկող կողմնակի անդամներով. օրինակ՝

1 Ու դաշտ են ելնում հարս ու աղջիկներ,
Որը՝ սիրելիս, որը դանդուրի.

2 Մերթ ցվրվում են

3 Ու մերթ կուտակվում,

4 Մերթ կռանում են

Ու մերթ շիտակվում,

Մերթ ուրախ ճիշով

Ասես կարոտով

Իրար են պարզում

Լիտիկ թևերը,

Ցուցադրում են

Կարծես թե դիտմամբ

Փակ մարմինների բոլոր ձևերը, —

Որ աբեղային անհուր խորովեն,

Որ աստված ու նա կռվեն, խռովեն (ՊՍԱԶ, 35):

Արդ՝ ելից ի մտաց երիվարն և յարմարեցից զասպարէղն հանճարոյ, զաղղեցից զնպատակն խորհրդոյ և թափ տաց ուժի. բազկօքս և ձգտեցից ի կորովս գրչի մատանցս և լեզուաւ. զխորհուրդս յուզեցից, և շրթունքս ի շշնջել իմաստունս կարասցեն և կարգել հաստատական յեղեղուն հոլովել զանիւ պատմութեան բանիցս, զի կամակարագոյնս նաւիցիմբ զալիօք ժամանակագրական ծովուս (Ագաթանգեղոս, 18):

Հաճախ պատահում է նաև, որ պարբերության առաջին

մասը կազմվում է նախատակի երկրորդական նախադասություններից: Այսպիսի կառուցվածքը համարվում է շարահասական շրջում, որ կիրառվում է ոճավորված խոսքի կամ բանաստեղծության մեջ. օրինակ՝

Քեզ հարվածողին որպեսզի դարկես
Եվ ունեցվածքդ ու կյանքդ փրկես,—
Պիտի զարկողին իր զարկից զրկես (ՊՍԱ, 2, 71):

Պատճառի պարբերությունների առաջին մասը կազմվում է համասեռ նախադասությունների շարքից, որոնք արտահայտում են գործողություններ, իսկ երկրորդ մասը ցույց է տալիս այն պատճառը, որով հիմնավորվում են առաջին մասում հաղորդված բոլոր երևույթները: Ուրեմն պատճառի պարբերությունների առաջին մասը ղխավոր նախադասությունների շարք է, իսկ երկրորդը պատճառի շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասություն կամ այդպիսի նախադասությունների շարք. օրինակ՝

Ես այդ նորընտիր կաթողիկոսին շատ ու մեծամեծ սխրագործություններ չեմ պահանջում. չեմ պահանջում նաև նորամեն «Հայոց եկեղեցւոյ կերպարանափոխութիւնը ունեցմինչև գլուխ», չեմ պահանջում անուն անմահացնող և հոշակի փայլ տվող Կոթողներ, արձաններ և արձանադրութիւններ— այդ ամենը չեմ պահանջում նրանից, վասնզի նրանց մեջ ողորմ համար մեկ առանձին օգուտ չեմ տեսնում (ՌՊԵ, 508):

Այսպես ուրեմն՝ բախտը թող շտվամ, որ Ֆելիկյանը խնդա՝ օր մը Գում Գաբու երթալու տեղ սխալմամբ Ֆերիդեղ կերթա, օր մը իրիկվան դեմ հելվաճիին հարցուր տրամ հելվա տոնելու կերթա ու հելվային տեղ հելվաճիին լապտերը կառնե տուն կդառնա, օր մը փողոցին դացած միջոցին կույրի մէկդարնվի, կիյնա ոտքը կցավցնե, որովհետև գիշերները մտատանջութենեն չկրնալուլ քնանալ, ցերեկները քալած ատենը կը քնանա (ՀՊԸԵ, 1-ին, 370):

Երբ պատճառի պարբերության առաջին մասը սկսվում է ղխավոր նախադասություններով, ապա պարբերության ունի

ինքնուրույն սկիզբ, իսկ երբ առաջին մասը համասեռ երկրորդական նախադասությունների շարք է, ապա այդպիսի պարբերությամբ ինքնուրույն սկզբից զրկվում է. մեծ մասամբ այդպիսի երկրորդական նախադասությունները իրենց բովանդակությամբ առնչվում են խոսքի նախորդ մասերի հետ. օրինակ՝

Նկատելով որ Ռուսաստանի մեջ Լուսինյան մը կա, որ նամակով ինձի կիմացունե թե ես իրեն եղբոր որդին եմ. նկատելով որ բոլոր եղբայրներս Լուսինյան մականունը կը գործածեն. նկատելով որ հարազատ եղբայրներու մեջ տարբեր մականուններ գործածելն անտեղի է,— ես ալ որոշեցի, որ այսուհետև Լուսինյան գործածեմ (ՀՊԸԵ, 1-ին, 196)։

Պատճառի պարբերությի մյուս տեսակը այն է, երբ առաջին մասում թվարկվում են գլխավոր նախադասությունները, իսկ երկրորդ մասը իրրև պատճառի երկրորդական նախադասություն հիմնավորում է առաջին մասի ամբողջ թվարկվող շարքը միասնաբար. օրինակ՝

Եվ քանի որ ես ինքս ինձ անձամբ մատնեցի մահվան
իմ ինքնագրությամբ,

Ու շկանդնեցի երբեք ինչպիս մարդ՝ ոտքի,
Ու ոչ էլ ստացա սիրտ բանականի, դրքի համաձայն,
Զթողի նախկին մեղանշումներն իմ ու շփոխվեցի,
Զընթացա ուղիղ ճանապարհով ես,—

Ինչու՞ խավարի հետքերը խոտոր ցույց շտամ ես այս
խոսքի սկզբում (ԳՆՄՈ, 86)։

Համեմատիր միևնույն հեղինակից բերված հետևյալ օրինակը.

Հնար չի լինի ոչ խոսքով արդարանալ, ոչ վերարկուի
տակ պահվել,

Ոչ դիմակավոր կեղծել և ոչ երեսպաշտ խոսքերով մոտենալ,
Ոչ շինծու ձևերով խաբել, ոչ կցկտուր բառերով ստել,
Ոչ արագոտն փախչել, ոչ թիկունք դարձնել,
Ոչ երեսն ի վար՝ դեմքն հողին քսել
Եվ ոչ երկրի խորքերում թաքնվել,—

Քանզի ծածկվածները բաց են քեզ համար և աներևութները հրապարակված (նույն տեղում, 16):

Որպեսզի կիսատ խոսքի տպավորություն չստացվի, պատճառի երկրորդական նախադասություններով սկսվող պարբերությունները հաճախ ունենում են սեփական սկիզբ, որը հանդես է գալիս որևէ դրույթի ձևով, և որին հետևում են երկրորդական նախադասությունները իբրև այդ դրույթի պատճառաբանություն, իսկ պարբերության երկրորդ մասը գլխավոր նախադասություն է, որ կամ մի տեսակ կրկնություն է՝ պարբերության սկզբում դրված դրույթի և կամ այլ բովանդակության նախադասություն է. այս վերջին դեպքում պարբերության սկզբում առաջ քաշված դրույթը դուռ ներքին բովանդակության կապակցման հենարան է՝ ամբողջականություն և ավարտվածություն ստեղծելու համար. օրինակ՝

Ենթադրական և ուսական թերթերի էջերը մեծ մասամբ բռնված են քաղաքական հարցերով. ինչո՞ւ, որովհետև այդ ժողովուրդները ապրում են քաղաքական մեծ պայքարներով, **Ե**րկիրներ ու ազգեր տիրելու և կառավարելու ծրագիրներ ունեն, առևտուրի մեծ շուկաներ ու ազդեցությունների ասպարեզներ ձեռք բերելու խնդիրներ ունեն, **Դ**իվիարդներով փոխառություն անելու, դաշնակցություններ կապելու հոգսեր ունեն, **Տ**խաղում են իրենց ահռելի ուժերով, աշխարհքներ ու ազգեր են շարժում և արթուն, (ուշի-ուշով հետևում են ամեն մեկը մյուսի կամ ամբողջ աշխարհքի քաղաքական կյանքի ընթացքին) **Մ**անրամասն հաշվի են առնում դիմացինի այս կամ այն շարժումը **Ն**ավերի թիվն ու զորաբանուկը, **Մ**աշխատում են գուշակել մեկը մյուսի տեսակցությունն ու խոսակցությունը, **Ո**ղբաղվում են դրանցով, խորհրդածություններ են անում և այդ պատճառով իրենց թերթերն ու հոդվածներն էլ նվիրում են դրանց (ՀԹԵԺ, 4-րդ, 149—150):

Ծիշտ է, այդպիսի պարագայում պարբերության երկմասնությունը որոշ չափով խախտվում է, բայց բովանդակության տեսակետով այն ավելի ամբողջական է և ավարտված:

Պատճառի պարբերությունները կապակցվում են այն բոլոր պատճառական շաղկապներով, որոնք քննված են մեր «Հայե-

րենի շարահյուսութիւնն» աշխատութեան մեջ (տե՛ս հ. II, էջ 208—216)։

Տեղի պարբերութիւնը երկու ձևով է արտահայտուիմ. տեղի պարագայական նախադասութիւնները թվարկուիմ են նախադասութեան սկզբում և կազմում են պարբերութիւն առաջին մասը, իսկ երկրորդ մասը գլխավոր նախադասութիւնն է, որ սկսվում է այնտեղ բառով. օրինակ՝

Ուր սուր ծերպերով ահեղ ցիր ու ցան,
լեռներն են բազմած բնութեան արձան,
Չուր մութ ամպերն են գունդագունդ դիմում,
Փայլակ կայծակով իրար հետ կուլում՝
Ջարնելով միմյանց երկիր ու եթեր,
Թռչրոտում են հար կայծակի շանթեր,
Խաղում են, գոռում ճայթյուն որոտով,
Շեծում լեռներին, ծաղրում կարոտով,—
Այնտեղ գիշերվա խավարի միջին
Մի խարույկ վառվեց կալվարի լանջին (ՎՄԼՈ, 38)։

Եթե ուր հարաբերականով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասութիւնները թվարկվելով դառնում են պարբերութիւն առաջին մաս, իսկ դրանց հաջորդող գլխավոր նախադասութիւնը սկսվում է տեղ ցույց տվող որևէ բառով, ապա այդպիսի կապակցութիւնը դադարում է որոշիչային լինելուց. այստեղ արդեն հարաբերութիւնը տարածական բնութի ունի։ Այսպիսի կառուցվածքները նմանվում են նախորդին և նույնպէս կազմում են տեղի պարբերութիւններ՝ օրինակ՝

Ուր առլակները մայնուկ կարկաշով
Դիմում են ձորեր, լցնում հառաշով,
Ժայռերից ժայռեր թափ առած ուժով
Թնդուն օրոտով փրփրում է ջրվեժ,
Մոութը կիտած հին ապառաժով
Ջարդվելով անհույս, երգում է վրեժ.

- Ուր զեփյուռ մեղմիկ ցրվելով բույրը,
 Սուղում է սիրտը վայելքի ծովում,
 Իսկ թարմ շուրթերի կույսի համբույրը
 Ծաղիկների հետ անմեղ բարեում.
- Ուր զգացումն է բռնկում հուժկու,
 Աղավնուցը հեղ, արծվից ահարկու
 Որսի հրաթափ գնդակի թռիչ,
 Զրվեժի վայրի երգը ձորերում,
 Ամեն մի հնչյուն անուշիկ թովիչ
 Անցնում է սիրտը, նրանով փարվում,—
 Այն կամարի տակ անսահման կապույտ
 Լալվարն է զարթնում հարսի պես անփույթ
 (ՎՄԼՈ, 41):

Մյուս ձևը այն պարբերության է, որի առաջին մասը սկսվում է այնտեղ ձևական բառով, ապա նրան հաջորդում է տեղի պարտադյական նախադասությունների շարքը, և ապա հաջորդում է գլխավորը իբրև պարբերության երկրորդ մաս՝ սկսվելով դարձյալ այնտեղ բառով: Այսպիսով պարբերության առաջին մասը օղակաձև շրջանակվում է այնտեղ բառով. օրինակ՝

- 1 Այնտեղ, ուր լեռները խրոխտ դեպի երկինք են խոյանում,
 2 ուր արծիվները սավառնում են երկնային բարձրություններում՝ իրմին ակնդետ, շուր եղջերուներն են թռչում ծերպից ծերպի, այնտեղ իմ կարոտ սիրտն է թափառում:

Սրա հետ համեմատիր որոշիչային հարաբերություն արտահայտող հետևյալ պարբերությանը.

- 1 Այն ամիսներում, ուր դու, Օ, տարիներ առաջ,
 Թափառելով սիրո երգեր էիր գրում
 Եվ գուրգուրում իբրև սերունդների երազ
 Այն, որ թաղված մնաց քո գրքերում,—
 Այն ամիսներում հիմա մի բարբառոս հովիվ,
 Երազելով քեզ պես կնոջ զգվանք ու սիր,

Ունկնդրում է միայն շշուկներին հովի
Եվ երգերի տեղ քո, երգում անբառ մի շեր
(ԵԶԸԵ, 252):

Չափ ու քանակի պարբերությունները սկսվում են չափ ու քանակի երկրորդական նախադասությունների թվարկվող շարքով, որ դառնում է պարբերության առաջին մաս, իսկ սրան հաջորդում է դիսավոր նախադասությունը կամ նախադասությունների շարքը՝ այնքան շաղկապական բառով. օրինակ՝

Որքան դաշտեր որ կան,
Որքան որ կան լեռներ,
Որքան գյուղեր, հյուղեր
Ու քաղաքներ հսկա,—
Կուղեմ ողջուն այնքան
Հողուս խորքից թևեր,
Կուղեմ ամեն ժխոր
Հողիս ասլրի, դգա (ԵԶԸԵ, 137):

Ու մեր աչքի առջև հետզհետե քանի ժողովրդասիրական ղգացմունքներն ուժեղացան, քանի դեմոկրատական ուսմունքներն ու հայացքները խորացան, ծավալ առան, քանի տառապող հայրենի երկիրն ու բնիկ ժողովուրդը ուշադրություն դրավեցին, — էնքան ավելի ու ավելի երևան եկան, ճանաչվեցին ու սիրվեցին հայ ժողովրդի աղգային տեղծագործությունները, նրանց թվում նաև լեզուն և ամենից առաջ լեզուն (ՀԹԵԺ, 4-րդ, 378):

Ինչպես երևում է բերված օրինակներից, ըստ նշանակության չափ ու քանակի պարբերությունները երկու բնույթ ունեն. մեկը ալտահայտում է իսկական չափ ու քանակ, իսկ մյուսը ժամանակի տևողության չափն է մատնանշում:

Բաղդատության պարբերության առաջին մասը կազմում են բաղդատության երկրորդական նախադասությունները, որոնք համեմատության միջոցով պարզում են այն, ինչ որ

ասվում է երկրորդ մաս հանդիսացող գլխավոր նախադասու-
թյան կամ նախադասութիւնների մեջ. օրինակ՝

- 1 Ինչպես որ աշնան արևը աղոտ
2 Չէր սթափեցնելու մեռնող տերևներ,
Ինչպես արհեստը ծաղկանցը անհոտ
Կորուսած բույրը էլ հետ տալու չէր,—

Նույնպես քո սիրը նորից բորբոքված
Իմ մարած հոգուն հարութիւն չի տա,
Քեզ համար, հոգյակ, իմ սիրտը մաշված
Այլևս չունի նույն սիրն, հավատա (ՀՀՀ, 16):

Պարբերութի առաջին մաս կարող են կազմել նաև ենթա-
կա երկրորդական նախադասութիւնները, երբ թվարկվում են
սկզբում, իսկ սրանց հաջորդում է գլխավոր նախադասու-
թիւնը իբրև պարբերութի երկրորդ մաս. օրինակ՝

- 2 Ասում են ով որ միշտ վառ հալատով
Փալիս է լալվար որևէ ուխտով,
3 Խնդրում, աղերսում քաջ Սուրբ-Սարգսին,—
Հասնում է անշուշտ սրտի մուրադին
(ՎՄԼՈ, 42):

Ստորադասական կապակցութեամբ արտահայտվող պար-
բերութիւնը արտահայտում է հետևանքային հարաբերութիւն
ևս: Առաջին մասում թվարկվում են մի շարք փաստեր ու երե-
վութիւններ, որոնք իրենց ամբողջութեան մեջ հիմք են դառնում
մի հետևանքային գործողութեան. օրինակ՝

- 1 Այդ օրը նա այնքան էր վազել, այնքան էր սրուն-նրան
դիմել, այնքան էր նվաստացել իրենից ցած կանգնած մարդ-
կանց առաջ, որ հոգնել և կորցրել էր ախորժակը:

ՇԱՐԱՀԱՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒՅԹ

Պարբերույթները կառուցվում և ամբողջանում են ոչ միայն այլևայլ շաղկապներով ու կապակցական բառերով, այլև առանց շաղկապների, դուռ շարահարական եղանակով: Այս դեպքում պարբերույթի երկու մասերի հարաբերությունը պայմանավորվում է այդ մասերի նշանակությունների փոխադարձ կապով և նրանց կառուցվածքով: Իբրև կապակցման միջոց առանձին նշանակություն են ստանում կշռույթը և հնչերանգը, որոնցով հենց որոշվում են պարբերույթի մասերի սահմանները:

Շարահարական պարբերույթների մեջ ցայտուն կերպով է դրսևորվում հակադրական հարաբերությունը. առաջին մասում թվարկվում են գործողություններ, առարկաներ, երևույթներ, իսկ երկրորդ մասը հակադրվում է դրանց: Առաջին մասը երկրորդից տարբերվում է իր թվարկվող բարձրացող հնչերանգով, հակադիր նշանակությամբ. երկրորդ մասը սկսվում է իջնող հնչերանգ, մատնանշում է հակադիր գործողություն, երևույթ, առարկա, և անպայման փոփոխվում է ելթական. օրինակ՝

- Մահու պես դաժան ձմեռն է իջել,
 — Մարել են մեռել երգ, ծաղիկ ու բույր,—
 Դու քար ցրտում էլ, ձյունների մեջ էլ,
 Հավետ կենդանի, կարկաշուն աղբյուր

(ՎՏ, 1-ին, 87):

էյ, բարով դնաս, սիրելի թոշուն,
 Գարուն կբացվի, ետ կուգաս կրկին,
 Զուգով-ընկերով կուգաս դեպի տուն՝
 Քո բունը հերվան շինարու գլխին,—
 Ախ, ես բնավեր, ընկած սարե-սար,
 Ու քաշ եմ դալի, ու քաշ եմ գալի,
 Անքուն ջրի պես դիպչում քարե-քար,
 Անշունչ քարին էլ երնեկ եմ տալի

(ՀԹԵԺ, 1-ին, 124):

Շարահարական պարբերությից հակադրության հետ արտահայտում է նաև զուգադրական հարաբերություն. օրինակ՝

1 Կռունկն հրկնքում ճամփա կհանի,
 2 Կըռ, կըռ, ձեն կուտա էն խավար ամպում,—
 Ղարիբ մոլորել՝ շիտե ինչ անի
 Անգութ աշխարհքում, անծանոթ ճամփում
 (Թումանյան):

1 Թովիշ քնքշությամբ հանգչող աշխարհում
 Երեկոն վառեց լույսեր դժգունակ.
 2 Մութը հյուսում է տրամության մանյակ,
 3 Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում,—
 Իմ սիրտը տրտում, իմ սիրտը մենակ
 (ՎՏ, 1-ին, 44):

Հակադրական ու զուգադրական պարբերությիցներ, երբեմն կաղմում են մեր ժողովրդական երգերի տրոշ քառատներ, ուր առաջին մասում թվարկվում են բնության երևույթներ, իսկ երկրորդ մասը հակադրվում կամ զուգադրվում է դրանց իբրև հոգեբանական երևույթ, իբրև սիրտ, մտերմության, տխրության արտահայտություն. օրինակ՝

Ամպել ա, ձուն չի գալի
 Մթննչ ա, ստուն չի գալի,—
 Էս անտեր տեղի միջին
 Առանց յադ քուն չի գալի:

Համեմատիր սրա հետ Տերյանի հետեյուլ քառատուր, որ ժողովրդական երգի հետևողությամբ է ստեղծագործված.

Լույսն է մեռնում, օրը մթնում,
Մութը տնից տուն է մտնում,—
Նստեսա քեզ իմ ճամփի մոտ,
Իմ մտերիմ, իմ անծանոթ

(ՎՏ, 1-ին, 4):

Սողում են դանդաղ օրերը անձիր,
Կորած է մթնում մոլոր իմ ուղին,—
Քնքուշ խոսքերով թախիժս ցրիր,
Անխոս ամոքիր ցաված իմ հոգին

(նույն տեղում, 27):

Շարահարական պարբերությունները հակադրություն կամ զուգահրություն են արտահայտում նաև անուղղակի կերպով. բուն հակադրվող երկրորդ եզրի բովանդակությունը արտահայտվում է կողմնակիորեն:

Գիշեր է իջել, լուել են բոլոր
Աղմուկները շար, խոսքերը պատիր,
Ջրերը մեղմիկ երգում են օրոր,—
Սիրտ իմ, հանդարտիր

(ՎՏ. 1-ին, 115):

Իսկական հակադրություն կլինեն, եթե ասվեր՝ իմ սիրտը անհանգիստ է և բողոքում..., բայց հենց այն նշանակությունը կողմնակիորեն է հուշվում, այսինքն՝ հանդարտել բայի հրամայականով իմանում ենք, որ այն անհանգիստ է:

Շարահարական պարբերությունները արտահայտում են հետևանքի, եզրափակման հարաբերություն. առաջին մասը կազմում է նախադասությունների կամ դարձվածների ու բուռակապակցությունների թվարկվող շարք, իսկ երկրորդ մասը այդ թվարկման եզրափակումն է՝ իբրև նրանից բխող հաղորդում: Պետք է նշել, որ այս դեպքում լարվածությունը բավա-

կանաչափ ուժեղ է, հնչերանգային շրջադարձը կտրուկ է և նկատելիորեն ընդհատվող. օրինակ՝

Անվ ահա խառնեալ զանմաքորս բան ընդ նախագրեալ
երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ
գոչինք եղի հաճութիւն, և նա ընդ նոսին իբր դառնութիւն
եղեալ ընդ քաղցու կամ տատասի ընդ ողորկութեան, տղե-
ղութիւն ընդ վայելչութեան և տիղմ ընդ գեղեցկութեան մար-
դարտի, կամ հող ընդ յստակութեան ոսկւոյ և կամ քարինս
անարգս ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն ընդ
ճշմարտութեան կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղութեան
զանգուածոյ հացի, քարդ լուր, հզօր, հնարաւոր, գովեալ, զնո-
ցայն վասն իմ և զիմս ընդ նոսին ի նոցին գովեստ, ի փրկու-
թիւն իմ ի փառս քո, ամենագութ բարերար, օրհնեալ, եր-
կայնամիտ, կարող, անքնին, անճառ, անեղծ և անստեղծ
(ԳՆ, ԶԲ, 5):

Մենք այստեղ փաստորեն քննեցինք պարբերութիւնների
երեք հիմնական տեսակներ՝ համադասական, ստորադասա-
կան և շարահարական: Այսպիսի քննությունը հիմնված է
պարբերութիւնների քերականական առնչությունների վրա, այ-
սինքն՝ այսպիսի բաժանումը զուտ քերականական է. բայց
քերականական բաժանումը զուտ ձևական բնութիւն չունի,
տարբեր կապակցութիւնների քննության հետ բացահայտ-
վեցին այդ կապակցութիւնների իմաստային հարաբերու-
թիւնները:

Անկախ այս կապակցութիւններից նշվում է պարբերութի-
ւնի մի այլ ձև, որով կարող են կազմավորվել վերոհիշյալ երեք
կապակցութիւններին ենթակա պարբերութիւնները. այսպիսի
պարբերութիւնը կոչվում է ընդհանրական. սրա առաջին մասում
թվարկվում են գործողութիւններ, առարկաներ, երևութիւններ,
իսկ երկրորդ մասը մի ընդհանրացնող պնդում է, որ վերա-
բերում է ամբողջ առաջին մասի թվարկված շարքին. օրինակ՝

Թե երկրագործն է հորովել կանչում,
Թե մայրը որդուն օրորք է ասում,

Թե հովիվն իրան սրինգը հնչում,—

Մի հուսակտոր հառաչքն եմ լսում

(ԶԹԵԺ, 1-ին, 30):

Ընդհանրական պարբերությունները շատ ավելի ցայտուն ու որոշակի են, երբ երկրորդ մասը սկսվում է ընդհանրացնող որևէ բառով կամ բառակապակցությամբ. օրինակ՝

Իր բոլոր ջանքին հակառակ իմ սենյակս միայն չկարողացավ կարգի կանոնի բերել. օրը տասն անգամ կը շտկեր ու տասն անգամ կ'ավերշտկեի իր բոլոր տանտիկինի խնամքին արդյունքը. զգեստներս հոս կնետեի ու ճերմակեղեններս հոն, դիրքերս ցիրուցան բաղձոցին վրա կամ գետինը անկյուն մը ձգված,— և այս բոլորը հարյուր անգամ իր տեղը կդրվեր, ժամ մը վերջը առաջի վիճակին վերադառնալու համար (ԳԶԵԺ, 1-ին, 31):

Ամեն օր խանութը փակելուց հետո գրպանները լցրած տուն էր գնում. շերբեմն տանում էր բրինձ, շերբեմն շամիչ, շատ անգամ կաղին և ընկույզ, ուրիշ անգամ զանազան բաներ, շերբեմն էլ շայ ու շաքար, մեկ խոսքով նրա այրի մոր համար ապրուստի հորդահոս աղբյուր էր բացվել (ՌՊԵ, 498):

Փակել թատրոնը՝ ցրել խումբը՝ մի ամբողջ տարվա իմ աշխատանքը համարել շեղյալ իմ ծննդավայրում հայաշունչ թատրոն ստեղծելու իմ ոսկի երազը լոկ բանդագուշանք, ահա թե ինչը չէի կարող հանդուրժել (ՎՓՀՀ, 1-ին, 285):

Շերբեմն պարբերության առաջին մասը սկսվում է ընդհանրացնող բառով, ապա թվարկվում են դրա բովանդակության մեջ մտնող առանձին երևույթները, իսկ երկրորդ մասում կրկնվում է այդ ընդհանրացնող բառը կամ բառակապակցությունը. օրինակ՝

Բոլոր շարշարանքները՝ թե կրթություն ստանալու ջանքերը, թե տուն ու ընտանիք ստեղծելու համար կատարած դոհողությունները՝ թե որևէ հարմար կին գտնելու փորձերը, բոլորը, բոլորը իզուր անցան:

Այսպիսի պարբերությունները յուրահատուկ օղակ են կաղմում և ունեն այն ոճաբանական նշանակությունը, որ կար-

Ժես ամբողջ կառուցվածքը սկսվում և վերջանում է միևնույն որակի հնչարտաբերական հնարավորություններով. սակայն իրականում այդպես չէ. մենք արդեն տեսանք, որ պարբերության առաջին մասը այլ բարձրության հնչերանգ ունի, իսկ երկրորդը բոլորովին հակադիր է. Բացի այս, օղակի երկու եզրերը տարբեր տրամադրություններով ու հուզարտահայտչական լիցքով են հնչվում. երբ նոր ենք սկսում, դեռևս անհաղորդող ենք խոսքի իմաստային ու ոճական ամբողջությանը, ուստի օղակը առաջին եզրում դեռևս անարտահայտիչ է հնչվում, իսկ երբ արդեն ղգում ենք բանաստեղծությունը և տարվում նրա հուզարտահայտչական հարստությամբ, կրրկրնվող մասը ստանում է նոր գունավորում և հնչարտաբերական նոր լիցք:

Պարբերության մի առանձին տեսակ է համարվում հենց այսպիսի օղակային ձևեր: Ընդհանրական օղակային պարբերության մեջ երկրորդ մասը այնուամենայնիվ ունենում է բառական այլ թեմա իր ինքնուրույն ձևավորվածությամբ, որ կազմում է պարբերության, երկրորդ մասը՝ օղակային տարրի կրկնությամբ. սակայն բուն օղակային պարբերության մեջ երկրորդ մաս է կազմում առաջին մասի սկզբի արտահայտությունը նույնությամբ կամ որոշ փոփոխությամբ. օրինակ՝

Առաջին տնգամ, առաջին անգամ
 Աստ Վեհարանի հին պատերի մեջ,
 Սրբապղծորեն թուրք երգ է մխում
 Աստ՝ հայոց հոտի այս սուրբ փարախում,
 Հովվապետն ինքը ականջ է կախում
 Ինչ-որ մի մանկան անօրեն երգի,
 Աստ՝ ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
 «Հայր մեր», «Տէր կեցո», «Արեգակն արդար»,
 «Բարեխօսութեամբ» կամ «Խորհուրդ խորին»,
 Ուր գրաբարն է հնչել դարեդար,
 Եվ շարականն է հուղել բոլորին,—
 Աստ՝ Վեհարանի հին պատերի մեջ

Առաջին անգամ, առաջին անգամ
Սրբապղծության մանանեխն ընկալ (ՊՍԱԶ, 20):

Մաքուր օղակի օրինակ է Տերյանի հետևյալ
պարբերությունը.

Երանի նրան, ¹ ում մի մայր գթոտ
Օրորում է իր երգով հնամյա,
Ում չի սարսեցնում մի ահ անծանոթ,
Ով հայրենական տուն ունի հիմա,
Ով պարզ է ժպտում արևոտ օրվան.
Ով խաղաղ սրտով մանում է շիրիմ,
Հաղար բյուր անգամ երանի նրան

(ՎՏ, 2-րդ, 56):

Այս ձևական օղակին հար և նման է իմաստային կամ
ավելի ճիշտ կառուցվածքային օղակը. պարբերության առաջին
մասը սկսվում է գլխավոր նախադասության մի մասով, սրան
հաջորդում է երկրորդական նախադասությունների շարքը, որ
փակվում է գլխավոր նախադասության մյուս մասով. օրինակ՝
|| Իմ առարկությունը, որ օրիորդը առնվազն տասնհինգ տա-
րով մեծ էր ինձնից, որ ուսուցչուհիս էր եղել, որ վերջապես
կարիք չէի դրում ամուսնության ընդհանրապես և այդ ամուս-
նությանը մասնավորապես, — համոզիչ շեղավ (ՎՓՀՀ, 1-ին,
286):

ՊԱՐԲԵՐՈՒՅԹԻ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ինչպես արդեն ասվել է, պարբերությամբ երկու մասից է հաղմված, որոնք որևէ առնչությամբ հակադիր են միմյանց։ Պարբերության առաջին մասին հաստատվել է բարձր և աստիճանաբար բարձրացող հնչերանդ, իսկ երկրորդը, հակադիր նախորդ մասին, ունի ցածր և անընդհատ ցածրացող հնչերանդ։ Պարբերության առաջին մասը գտնվելով հնչերանդային շարունակ բարձրացող ընթացքի մեջ մշտապես, համապատասխան բարձրացմանը, սրվում է ու լարվում։ Որքան մասի մեջ տեղավորված անդամները անընդհատ արտաբերվում են բարձրացող հնչերանդով, նույն չափով էլ լարման աստիճանը մեծանում է, և ընթերցողն ու լսողը դրվում են սպասողական վիճակի մեջ։ Հնչերանդային լարմանը զուգընթաց զարգանում է նաև իմաստային կողմի լարումն ու հարստացումը, այս բանը առավել նկատելի է մանավանդ այն ժամանակ, երբ գրողը կամ խոսողը առաջին մասի թվարկվող անդամները շարադասում է այնպես, որ նշանակություններով ոչ հարուստ անդամներին աստիճանաբար հաջորդում են լիցքավորված, նշանակություններով առավել ցայտուն անդամներ, որոնք իմաստային և ոճաբանական արտահայտչությամբ բարձրացնում ու մեծացնում են մասի լարման աստիճանը։ Եվ հնչերանդային բնական բարձրացման ու լարման զուգակցվում է նշանակությունների յճավորման նպատակային լարվածությունը, որը պարբերության բնագրի մեջ յուրահատուկ հնչողություն է հաղորդում։ Ահա մի օրինակ այդպիսի պարբերության, որտեղ

առաջին մասը կառուցված է աստիճանի (կլիմաքս) ոճաբանական հնարներով և պարզ ու բացորոշ ցուցադրում է վերոհիշյալ մեկնաբանությունը.

Առյուծի զարթելից մի փոքր առաջ Սահարա անապատի լուծյունը, Նոորանից հետո առյուծի քանի-քանի անգամ ամպրոպաձայն մոնչելը, հետո ավելի և ավելի սաստկացնելը յուր ահեղ մոնչյունը, հետո արյունառուշտ հարձակման պատրաստությունը, հետո մպառազինված որսորդների հանդիպելը, հետո կատաղի պատերազմը երկուստեք, հետո հրացանների ճայթմունքը խառն առյուծի մոնչելուն, հետո վիրավորված և հոգեվարք գաղանի ոռնալը և վերջապես որսորդների հաղթության երգը, այս ամենը պատկերացան լսողի երևակայության մեջ Սուսաննայի ճարտար և խոսուն մատերի զորությամբ (ՌՊԵ, 405):

Որքան շատ են առաջին մասի թվարկվող անդամները, այնքան լարվածությունը ուժեղ է. լարվածության ուժգնությունը կախված է նաև անդամների բեռնվածության աստիճանից: Համառոտ և հատուկ արտահայտությունները նույն ուժգնությամբ չեն արտաբերվում, ինչպիսի ուժգնությամբ արտաբերվում են ընդարձակ և լրացումներով օժտված անդամները: Այս վերջինները իրենց հիմնական հնչերանգային գծին միացնում են լրացումների արտաբերական յուրահատուկ հնչերանգային նրբությունները, հարստացնում և ուժեղացնում են հիմնական հնչերանգային շղթայի լարվածությունը: Ճիշտ է, մասամբ այդ հիմնական շղթան մի տեսակ դադարներ է տալիս, բայց այդ դադարները ընդհատումներ չեն. լրացումներից առաջ ընդհանուր շղթայի արտաբերական լարվածությունը մնում է իր ուժի և բարձրության մեջ, մինչև որ հաջորդում է շարունակությունը՝ զորացած լրացումների հնչերանգային տարբերակներով:

Առաջին մասը վերջանում է ամենաբարձր հնչերանգային կետում, որին հաջորդում է դադարը: Որքան մեծ է առաջին մասի լարվածությունը, այնքան էլ տևական է դադարը: Անկումը բարձր կետից ավելի ուժեղ է: Դադարի ժամանակ արտաբերական ընդհանուր շղթան ընդհատվում է, այսինքն՝

պարբերույթի առաջին մասը վերջանում է, սակայն լարվածութունն ու սպասողականութունը չեն թուլանում, որովհետև դեռևս անհրաժեշտ լուծումը չի կատարվել: Ընթերցողը կամ լսողը անհամբեր սպասում են խոսքի ամբողջացմանը, բնական (հնչերանգային առումով) և տրամաբանական ավարտին: Ոչ մի խոսք չի կարող ավարտված համարվել արտաբերական բարձր կետում, այդ կետից հետո պետք է տեղի ունենա հնչերանգային աստիճանական իջեցումը և դրան համապատասխան թվարկումներին հաջորդող տրամաբանական ու քերականական ավարտն ու հզրահանգումը:

Հնում պարբերույթը օգտագործվում էր հոետորական խոսքի մեջ, լսողին կամ ընթերցողին համոզելու համար թվարկվում էին փաստերն ու պատճառաբանութունները, ապա դրանց հաջորդում էր կոռ տրամաբանական եզրահանգումը: Հետագայում դա ընդհանրացավ. նույնիսկ պարբերույթը հաջողությամբ կիրառվում է բանաստեղծության մեջ: Ժնշպես արդեն ասվել է, պարբերույթի առաջին մասը կազմվում է համասեռ լեզվական միավորների շարքից (միավորյալ նախադասութուններ, բառակապակցութուններ և այլն), այս շարքի անդամները երբեմն այնպիսի շափակցություն ու համաշափության են հասնում, այնպես ներդաշնակ ու դուզահեռ են դասավորվում; որ պարբերույթի առաջին մասը դառնում է կշռույթավոր միավորների գեղեցիկ մի հորինվածք, որ թե՛ արտաբերողի և թե՛ լսողի համար հաճելի ու գեղեցիկ ապավորություն է առաջ բերում. օրինակ՝

Այս անտառին մեջ գարունը գեղեցիկ պիտի ըլլա՝ մատաղ բարդիի, ուռենիի ոստերե խրճիթ մը պիտի շինեմ, կաղնիի տերևներով ծածկված, շամեն առավոտ ծառերուն երգովը ու թռչուններուն դալալովը պիտի արթննանք, հսկայական մայրիներու խիտ գագաթեն արևի ճառագայթները դուրսով տերևի ստվերի ծակ-ծակ պատկերով մը մեզ պիտի ծածկեն, — ու դուն այդ պատկերի մեջ ավելի գեղեցիկ պիտի նրկվաս (ՌԶՑ, 196):

Ուրեմն պարբերույթը ավելի կամ պակաս շափով կշռույ-

թաւոր ու շաւիակից լեղվական միավորների այնպիսի միասնութիւն է, որ խոսքի մյուս տեսակի կապակցութիւնների միջավայրում ձեռք է բերում յուրահատուկ հնչեղութիւն:

Պարբերույթի որ տեսակն էլ վերցնենք, նրա երկու մասերի միջև կա այս կամ այն տեսակի հակադրութիւն. եթե նույնիսկ իմաստային հակադրութիւն չկա, հնչերանդային ու քերականական հակադրութիւնները ուղեկցում են նրան ամեն պարագայում իբրև պարբերույթի համար էական նշանակութիւն ունեցող հատկանիշներ, իբրև նրա բնույթին հատուկ օրինաչափութիւն: Եթե պարբերույթի առաջին մասը կաղմված է երկրորդական նախադասութիւններից իրենց հատուկ հնչերանդային ձևավորվածութեամբ, ապա երկրորդ մասը գլխավոր նախադասութիւն է, ուր փոխվում են ենթակաները, ստորոգյալի ժամանակները, եղանակները և դրանց ուղեկցող հնչերանգը, կշռույթը և այլն, որոնցով էլ իրականանում է քերականական հակադրութիւնը: Իսկ եթե սրանց միանում է նաև նշանակութիւնների հակադրութիւնը, այս դեպքում պարբերույթը լրիւ դառնում է միմյանց ընդհարվող երկու մասերի հակադրամիասնութիւն, ուր ընդգծվում են առանձին մասերի նշանակութիւնները, այդ մասերը բացահայտում են միմյանց և մեր ողջ ուշադրութիւնը գրավում իրենց հակադիր ու տարբեր դրսևորումներով:

Պարբերույթի միջոցով երևույթները, դեպքերը, իրողութիւնները նկարագրվում են այնպես, որ դրանք միմյանց հետ առնչվում են քերականական, հնչերանդային և իմաստային փոխադարձ կապերով, ընկալվում են իբրև միասնական մի ամբողջութիւն, իբրև դանաղան մտքերի սերտ միասնութիւն: Ընթերցողը կամ լսողը այդ միասնութեանը վերահասու է դառնում նրա սկսման, ձևավորման և ամբողջացման ընթացքում և, շնորհիւ պարբերույթի կառուցման այն հատկանիշի, որ նրա սկզբի ու վերջի անդամները իմաստային, քերականական ու հնչերանդային սերտ կապի մեջ են, այդ տարբեր մտքերը միասնաբար մեխվում են նրա հիշողութեան մեջ:

Պարբերույթին հատուկ է ծավալունութիւն, մեծափառ

հանդիսավորություն, սպառիչ լրիվություն, ընթացքի որոշակի շափավորություն, սկսման ու ավարտման որոշակիություն, որոնք յուրահատուկ ոճաբանական գույն ու բնույթ են տալիս նրան՝ ի տարբերություն խոսքի կառուցվածքի մյուս ձևերի։ Եթե իրացի կերպով արտահայտելու լինենք, կտրտված խոսքը նման է շղթայի քանդված օղակներին, որոնք մտքի հատուկ ջանքով պետք է շղթայակցենք իրար, որպեսզի բոլոր օղակները ընկալենք. իսկ պարբերությամբ աչդ օղակներից կազմված պատրաստի շղթան է իր հատուկ ձևավորվածությամբ, օղակների համաշափ տեղաբաշխումով, միանման անդամների զուգահեռականությամբ, կշռույթի և հնչերանդային երևույթների մշակումով, և այս ամենի հետ նրան հատուկ է նաև ընդհանրացումը։

Երբեմն պատումը բացվում է պարբերությամբ, այսինքն՝ հեղինակը իր երկի մատուցումը սկսում է պարբերությամբ, որ դառնում է մի տեսակ մուտք, նախապատրաստություն, հետագա շարադրանքի համար հենարան։ Չարենցը իր «Յոթը խորհուրդ գալիքի սերմնացաններին» բանաստեղծությունը սկսում է այսպես.

Ով գալիքի սերմնացաններ, որ լիաբուռ
հետևելու եք ձեր սերմը մեր ձեռքերով հերկած
Այս դաշտերում, բերրի այս հերկերում՝
Մեր քրտինքով, երգով ու արյունով ներկած,
Ով, որ դալու եք դվարթ ու թեթևաքայլ,
Արևի ու ոգու ծնծղաներով ձեր լուրթ, —
Ահավասիկ դրում եմ, որպես հեռու նշխար,
Ձեր ընթացքի համար յոթը խորհուրդ (ԵԶԸԵ, 264):

Այս պարբերության հաջորդ մասը գրված է քառատողերով և նախորդին կցվում է հետևյալ ձևով.

Եվ առաջին խորհուրդս, որ հղում եմ...

Այսպիսով պարբերությամբ դառնում է հետագա շարադրանքի համար նաև թեմային նյութ և իմաստային շղթա-

յակցման հենարան, որով բացվում է խոսքը և առաջ տարվում:

Պարբերույթը կարող է մտնել նաև պատումի մեջ և դառնալ մասերի համար ցեմենտող տարր. այն մի ծայրով իմաստային կապի մեջ է մտնում նախորդ մասի հետ, իսկ մյուս ծայրով պարզվում է դեպի հաջորդը և այդ երկու անջատ մասերը ձգում, մոտեցնում է իրար՝ նրանց համար ստեղծելով կապակցման աղերսներ, ու այդպիսով ընթերցողին հիշեցնում է, որ դրանք միմյանց շարունակությունն են. կազմում, միևնույն նյութի տարբեր դրվագներն են. օրինակ՝

Բեռնակիրներու այս հանդգնությունն այնքան պարսավելի է, որչափ այն մարդերուն, որ խոհարարությունն ուսած են և բանադատություն կընեն, կամ քիչ մը երկրաշուփության պարսպած ըլլալով՝ աստղերուն շարժումներուն վրայոք կը ճառեն, կամ երկու սագ և շորս կով մեծցուցած ըլլալով դաստիարակության խնդիր կը հուզեն, կամ զավակ մը ունեցած ըլլալով առաջին մարդուն որ աշխարհին մեջ ծնած ըլլալուն վրա կատենարանեն, կամ վերջապէս անանկ նյութի վրա կխոսին, որ բոլորովին օտար է իրենց, այո, այս մարդերուն հանդգնությունն ավելի է, վասն զի բանադատությունն կամ աստղագիտությունն կամ մանկատածությունն և այլն Մադկի փողոցն է, որ ուրիշներուն հարցնելով անմիջապէս սորվի մարդ (ՀՊԸՆ, 383):

Ընթերցողը պարբերույթի մեջ նկատելով նախորդ նյութի որեւէ տարր, որեւէ հիշեցում, անմիջապէս անդրադառնում է նրան, մտքով վերադառնում է ընդհատվածին, իսկ հաջորդ թեմայի տարրերը նրան նախապատրաստում են հետագա շարադրանքը ընկալելու և նախորդին կապակցելու համար: Այսպիսով իրականության տարբեր երևույթներ պատումնային մի շղթայի մեջ են դրվում և շարադրանքը տարվում է հետևողական ու տրամաբանական ընթաժիրով:

Պարբերույթը երբեմն դառնում է երկի մի գլխի, մասի կամ ամբողջի եզրափակող, ընդհանրացնող, ամփոփող միջոց, իբրև ավարտի խոսք, որ մի անգամ էլ հիշեցնում է ընթերցողին ողջ պատումը և ազդարարում է վերջը: Չարենցի «Դանթեական առասպելը» վերջանում է հետևյալ ձևով.

Ու պետք է քայլել ու քայլել համառ՝
 Ապրելու հսկա տենչը բեռ արած,
 Քայլել անիմաստ մի կյանքի համար,
 Մարել ու վառել աստղերը մարած,—
 Որ տիեզերքի զառանցանքը մառ
 Չցնդի երբեք ու մնա երազ (ԵԶԸԵ, 12):

Ամբողջ Դանթեական զարհուրանքը հասվածական խոսքերով նկարագրելուց հետո բանաստեղծը վերջում իբրև եղբրափակում պարբերությամբ նշում է, թե այնուամենայնիվ պետք է ապրել, թե տիեզերքի՝ զառանցանքը շպտեք է ցնդի, նա պետք է երազ մնա իբրև անհրաժեշտություն:

Այսպիսով պարբերությամբ բնագրի որ մասում էլ լինի, հանդես է գալիս ինքնուրույն ոճաբանական դերով ու նշանակությամբ, դրանք տարածում է նաև խոսքի մյուս հասվածների վրա:

Պարբերությամբ ունի այն հարմարությունը, որ դրողին հնարավորություն է ընձեռում ծավալվելու. ունենալով մեծ տարածականություն, շատ երևույթներ մի միասնական ամբողջի մեջ ներկայացնելու կարողություն, միաժամանակ միջոց է տալիս հակադրության, ընդհանրացման, ամփոփման, եղբրափակման և այլն, իսկ սրանց հիման վրա ստեղծվում են հանդիսավոր արտահայտչություն, բարձր ու խոր ապրումներ դրսևորելու հնարավորություն, ծանրակշիռ լրջություն, արտասանական վառ հնչեղություն ու կշռությամբ՝ որ պատումին տալիս են հուզարտահայտչական մեծ լարվածություն: Նրա հատուկ ձևավորվածությունը, որ երբեմն դառնում է չափակից տարրերի մի միասնական ամբողջություն, օժտվում է որոշ երաժշտականությամբ և խոսքին հաղորդում է քնարական շունչ, բանաստեղծական տրամադրություն:

Պարբերությամբ, ինչպես երևում է օրինակներից, հասնախ կիրառվում է չափածո խոսքի մեջ. շնորհիվ այն դոն՝, որ պարբերությամբ երբեմն չափակցված ու կշռությամբ անդամների միահյուսումն է մի ամբողջի մեջ, ինքնին արդեն

ունի շափածոյի սկզբունքային առանձնահատկութիւնները:
 Չափածո խոսքի այս սկզբունքային առանձնահատկութիւն-
 ների համընկումը պարբերութեային խոսքի նման հատկա-
 նիշների հետ, բանաստեղծին հնարավորութիւն է տալիս
 հրքեմն պարբերութեային օգտագործելու իբրեւ իր մտահղացումն
 արտահայտելու միջոց: Եթե այդ մտահղացումը մի ամփոփ
 թեմա է, ապա նրա առանձին մտքերը միահյուսում են շղթա-
 յակից մի ամբողջի մեջ՝ շարադրելով ոչ միայն թեման, այլև
 նրա զարգացման ընթացքը, հիմնավորումը, և եղբակացու-
 թիւնը. օրինակ՝

Երբ որ նոր դարուն այս տարի հասնի,
 Սարերը հագվին և դաշտերն ըլլան
 Զերթ քղանցքն անոնց զգեստին հարսի.
 Երբ որ դրախտեն ընելով թալան
 Արևը բուռ-բուռ ծաղիկներ բերե
 Եվ սփռե ամբողջ աշխարհի վրա,
 Զեփյուռը անցնի ամեն մարգերե
 Եվ դեռափթիթ խոտի հետ խաղա,
 Թռչուններն երգել սկսին նորեն,
 Գառները մային և բյուր հճիներ
 Հողի վրա անվերջ երթեակ ընեն,
 Երբ որ վերջապես այս ձմեռը ծեր
 Մեռնի և թաղվի դալարի ներքե,
 Երբ ձյունասպիտակ թիթեռներ թևթև
 Զմռան դամբանին վրա բռնեն սլար,
 Հորդառատ առուն բարձունքներեն վար
 Երբ հոսի հստակ ու խոխոջաձայն,
 Փափկաթույր ամպեր կապույտ երկնքին
 Առագաստաբաց երբ անցնին երթան,
 Յորենները երբ հարութիւն առնեն
 Եվ մեզ կերակրել նորեն խոստանան,
 Երբ շարժի, թռի, խնդա ամեն բան,—
 Ինչպես հոգիս ալ թռած ժրաթև

Պիտի վերջմպե հրճւանք ու արե,
 Եւ իր գարունին փարած ուժգնապես
 Պիտի վայելե զայն խենթերու պես (ՎԹԵՔ, 112):

Ամբողջ ընդարձակ բանաստեղծությունը այստեղ շարա-
 դրւած է մի պարբերութի մեջ. սկզբում մի երկար շղթայի
 վրա շարված են բնության մեջ կատարւող գործողություններ,
 որպեսզի զգացվի, որ դրանք միմյանց հետ կապակցված են.
 մեջքնդմեջ կիրառվում է երբ ու կամ երբ շաղկապը, որ սերտ
 է դարձնում այդ տառնձին թվարկումների կապն ու շղթայա-
 կցումը: Այս թվարկումները բոլորն էլ ժամանակի երկրորդա-
 կան նախադասություններ են, որոնցով բանաստեղծը զար-
 գացնում է ու ընդարձակում իր թեման, ապա դրանք փակում,
 վերջացնում է գլխավոր նախադասություններով, որ այլ թե-
 մատիկ նյութ են և նախորդի հետ կապակցվում են ոչ միայն
 քերականորեն, այլև բաղդատության հիմունքով:

Այսպիսի մեծ ծավալի բանաստեղծությունների պարբե-
 րութային շարահյուսումը կարող է ծանրաբեռնվել և խճող-
 վել միանման անդամների միատոնությամբ: Հաճելի տպա-
 վորություն է գործում, երբ պարբերութով են գրվում փոքր
 ծավալի ոտանավորները. համեմատիք Թումանյանի հետևյալ
 ոտանավորը, որ նույնպես գրված է պարբերութով:

Քույրիկ, այդքան որ սիրում ես
 Հայի հնչյուն, հայի տաղ,
 Որ սրտալի մեծարում ես
 Ազգիդ երգչին դեռ մատաղ,
 Ներշնչում ես նրա հոգուն
 Հզոր թռիչք և եռանդ,
 Եվ հիշում է նա յուր մտքում
 Ցուր պաշտոնը երկնավանդ,—
 Այս հարազատ ներշնչանքի
 Փոխարենը ընդունիր
 Նորա սիրո և տանջանքի
 Անվարժ տողերն ինքնագիր (ՀԹԵԺ,

1-ին, 518):

Պարբերութի՛ն՝ քերականական և թեմային այս ամբողջացման առանձնահատկությունից օգտվելով՝ բանաստեղծները բառատողերը կամ դանադան շափսի տները նույնպես երբեմն պարբերութիւնով են կազմում: Դա տնատման դեղեցիկ մի միջոց է, որ յուրաքանչյուր տուն դարձնում է բովանդակութեամբ ու քերականական ձևավորվածութեամբ ինքնուրույն թեմատիկ միավոր. օրինակ՝

Սարի ետևում շողերը մեռան.
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.
Տխուր երեկոն դարկել է վրան:—
Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:
Խորհրդավոր է երկինքն երազուն.
Վարսաթափ ուռի, դողդոջուն եղեգ.
Արծաթ խոսքերով անբյուրն է խոսում.—
Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ
(ՎՏԾԺ, 1-ին, 55):

Երբ մանկությունս հավիտյան չվեց
Թիթեռների հետ իմ թիթեռ գարնան,
Երբ մանուկ կյանքիս նոկոնից բացվեց
Մաղիկն իմ անհոգ պատռնեկութեան,—
Չգիտեմ ինչո՞ւ պատանի հոգիս
Երանի տվեց մանուկ անցյալիս
(ՀՇՔՀ, 240):

Ամբողջ բանաստեղծությունը այսպիսի պարբերութային տներով է գրված:

Չարենցի «Երգ մաքառումի» ընդարձակ բանաստեղծությունը, որ կազմված է 13 ութնյակ տներից (չհաշված մուտքի հնգատողանոց տունը) գրված է մեծ մասամբ պարբերութեներով, որոնք երբեմն միմյանցից թեմատիկ տարրեր են փոխառնում, որպեսզի բանաստեղծության միասնական սյուժեի կապը չխախտվի, չվերածվի ինչ-որ առանձին հատվածների. օրինակ՝

Արդեն կտրել ես, արդեն անցել
 Դու երկար, երկար մի հանապարհ,
 Եվ բարձունքներ ես դու ունեցել
 Եվ անկումներ ես ունեցել հար,—
 Բայց դու սրբել ես հոգիդ միշտ էլ
 Ճամփեքի մաքուր, վսեմ հրով,
 Եվ միշտ պայծառ է հոգիդ եղել,
 Եվ սիրտդ լիքն է եղել սիրով:

Եվ սիրտդ լիքն է եղել հաճախ
 Ցասման թուլնով ու ատելությամբ,
 Եվ կասկածը սև, կասկածը շար
 Քեզ ճնշել է մերթ իր ծանրությամբ,—
 Բայց դու մաքրել ես միշտ էլ հոգիդ
 Կասկածանքներից այդ խոժաղուծ,
 Եվ մաքառել ես, որ չլռի
 Քո սրտին երբեք հոգնության մուծ:

(ԵԶԸԵ, 176):

Պարբերությամբ օգտագործվում է նաև գիտական ու հրապարակախոսական գրականություն մեջ:

Գիտական ու հրապարակախոսական խոսքի հիմնական խնդիրն է նշգրիտ ու տրամաբանական հետևողությամբ մըտքերը դարգացնել, սահմանել դրանց մեջ եղած իմաստային փոխադարձ կապերն ու հարաբերությունները և այդ ամենը արտահայտել համապատասխան լեզվական հնարավոր միջոցներով: Բառերի կապակցման միջոցների ղեկչում ու բացթողում այս դեպքում բնավ չի նախատեսվում: Փաստարկումները, ապացույցները, եզրահանգումները, ընդհանրացումները գիտական ու հրապարակային խոսքի բովանդակության էական պայմաններն են, իսկ դրանք պահանջում են շաղկապների լրիվ ու առատ կիրառություն՝ ընդհանրացնող, եզրափակող ու ամփոփող բառերի սերտ ուղեկցությամբ: Գիտական ու հրապարակախոսական խոսքի մեջ պարզ, մանավանդ

համառոտ նախադասությունները ստիպել են. մտքերը պերա-
դանցապես փոխադարձ: Կապի ու պայմանավորվածության
մեջ գտնվելով, պահանջում են բարդ ու յուրույն հարաբերու-
թյուններ արտահայտող կապակցումներ ու շղթայավորում-
ներ: Բաղադրյալ շաղկապների առատ կիրառությամբ այդ-
պիսի խոսքը օժտվում է տրամաբանական սուր շրջադար-
ձումներով, հնչերանգային կտրուկ փոփոխություններով: Ոչ
միայն... այլև, որովհետև... ապա ուրեմն, որպեսզի... ապա
ուրեմն, չնայած որ... այնուամենայնիվ, քանի որ... ուստի,
բայց քանի որ... ապա ուրեմն, ոչ այլ ինչ է, եթե ոչ, մանա-
վանդ, որ... այդ պատճառով և այս կարգի այլ շաղկապներն
են, որոնք ձևավորվում են տրամաբանական կապերն ու հիշ-
յալ սուր շրջադարձումները: Սրանք նպատակ ունեն տրամա-
բանորեն ճիշտ արտահայտելու մտքերը: Զափակից անդամ-
ների հավասար տեղաբաշխումը, կշռույթը, շարադասական
դուգմադիր կառուցումները, հարակրկնությունները լինելով
դեղորվեստական խոսքի հիմնական առանձնահատկույն-
ներ, այստեղ մղվում են ետին գծի վրա: Ուստի դիտական ու
հրապարակային խոսքի պարբերույթների մեջ այդպիսի հատ-
կանիշներ չպետք է որոնել: Այս դեպքում բացառվում են շա-
րահարական պարբերույթները, որովհետև շաղկապների բաց-
թողումը բնավ հատուկ չէ գիտական, հրապարակախոսական
պարբերույթին. պարբերույթի մասերի մեջ քերականական
հարաբերությունը ճշգրտված է և շաղկապները անպայմանո-
րեն առկա են: Նույնիսկ կողմնակի լրացումները իրենց կա-
պակցություններով ճշգրտված են լինում:

Անմա՞հ հոգի, որ հայի բազմադարյան տառապանքով ու
ներա չավ ասպագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախար-
դական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ասպագայի
անհայտութունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական
դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վհատներին: Որ
տկարներիս համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզոր-
ների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու
ստրկության արտասուքը: Որ անհանգստություն տվիր հայ

ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, քէսօր եկել ենք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ մնում են թարմ և մեր զգացմունքները, որ համարկված են քո շնչով ու հիշատակով (ՀԹԵԺ, VI. 393):

Անախդիրները, որ դարերով մեծ ծառայություն քրած և միանգամայն մեծ խաղ խաղացած են հայ լեզվին մեջ, որոնց մեջ հին լեզուն մեծավ մասամբ իր ուժն ու գեղեցկությունը կառնուր չորն որչափ կարճ ու կոկ խոսելու միջոց էր, նույնչափ ավելի ճշտություն, մտադրություն ու ճաշակ կը պահանջեր, որոնց գեթ ըստ մասին խափանվել են ետքը փափուկ և կնճռյալ գործածությունը դժվարություն մը եղավ հաջորդ դարերու գրաբար գրողներուն, այս կնճռյալ անախդիրները, հըսեմ, սկսան (կամ թե պարզագույն լեզվին մեջ արդեն սովորական էր) անախդրությանց հեշտ գործածությանը տեղի տալու (ԱԱԲԲ, 87):

Հրապարակախոսական և գրական լեզվի պարբերույթի նպատակը չէ համաշափ ու զուգահեռ կիրառվող անդամների կշռույթավոր շարահյուսում, այս դեպքում հիմնական ուշադրությունը դարձվում է պարբերույթի անդամների առարկայական ու իմաստային ճշտության, նրանց լրիվ ու տրամաբանական կապակցության վրա: Այստեղ բարդանում են շաղկապային ոլորուն կապակցությունները, հանդես են գալիս շաղկապային հին ու նոր հոմանիշներ, որոնց նպատակն է արտահայտելու բարդ ու վերացական հարաբերություններ ու առնչություններ: Պարբերույթը հարստանում է կողմնակի բազմաբարդ ձևերով, անհետանում է շափակցութունը և դրա փոխարեն տիրապետող է դառնում տրամաբանական ու իմաստային նուրբ մշակումը: Գրողի ողջ ուշադրությունը բեռնվում է խոսքի բովանդակության հիշտ ու մանրամասն շարադրմանը, փաստարկների համողիչ ու հետևողական զարգացմանը: Լեզվական ձևերը չեն ծառայում ներդաշնակության, գեղեցկության, հնչականության, կշռույթի, պատկերավորման և գեղագիտական այլ պահանջների: հիմնականը խոս-

քի տրամաբանական ճիշտ մշակումն է և նրա հետեողական
ընթացքը, ուր խոսքը պահանջում է փաստեր ու ապացույց-
ներ, եղրակացություններ ու ընդհանրացումներ: Գիտական
և հրապարակախոսային խոսքը ծանրաբեռված է լինում բարդ
կառուցվածքներով, ընդ որում և առավել ընդհանրական պար-
բերույթներով, որոնք կառուցվում են հետևանք, եղրակացու-
թյուն, ամփոփում, մեկնաբանություն, կասկած, հավանու-
կանություն, հարցադրում, ավարտ և այլ այսպիսի նշանու-
կություն արտահայտող բառերով, կապակցություններով ու
շաղկապներով:

ՊԱՐԲԵՐՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ

Պարբերույթը հիմնականում փակ կառուցվածքի շարահյուսական ամբողջություն է. այդ նշանակում է, որ նա պետք է ունենա սեփական սկիզբ և ավարտուն վերջ: Սակայն պարբերույթի այդպիսի նեղ ըմբռնումը վերաբերում է շատ հեռավոր անցյալին: Մենք տեսանք, որ հաճախ պարբերույթը մղվելով խոսքի մեջ՝ իր մի թևով կապվում է խոսքի նախորդ մասերի հետ, իսկ մյուս թևով հիշեցնում, նախապատրաստում է անցումը հաջորդ մասին՝ դառնալով մի տեսակ միջնորդավոր կապ խոսքի առանձին մասերի միջև: Թիրևս պատումի սկզբում կիրառվող, մուտք հանդիսացող պարբերույթները արդարև ունեն ինքնուրույն սկզբնավորում, սակայն դրանք էլ իրենց ամբողջության մեջ վերջիվերջո կապվում են խոսքի հետագա շարադրանքի հետ: Խոսքի վերջում գտնվող պարբերույթները, որ գերադանցապես ամփոփում, ընդհանրացում, ավարտ են ազդարարում, նույնպես իրենց բովանդակությամբ առնչվում են ամբողջ նախորդ ասվածին: Թիրևս խոսքի ընդհանուր շղթայից դուրս են գտնվում այնպիսի պարբերույթները, որոնք խոսքի ընդհանուր հյուսվածքի մեջ կողմնակի հաղորդում են, լրացուցիչ տեղեկատվություն, որոնք առվում են փակագծերում: Ուրեմն պարբերույթը անկախ է միայն քերականորեն, ինչպես որ քերականորեն անկախ են շատ և շատ նախադասություններ: Խոսքի ընդհանուր շղթայից դուրս գտնվել այն չի կարող, եթե այդպես լինի, պարբերույթը կդառնա ինքնանպատակ մի լեզվական միավոր՝ աղքատ իր բովանդակած առնչություններով և սահմանափակ ոճաբանական դերով ու նշանակությամբ: Այն արժեք ու նշանակություն

է ստանում խոսքի մեջ, նրա հանդիսավորությունը, լրջությունը, կշռույթը, զուգահեռ թվարկվող անդամների համաշափ շարադասումը և այլ ոճաբանական հատկանիշներ նպաստում են ընդհանուր խոսքի յուրահատուկ կազմակերպմանն ու առանձին հնչեղությանը: Ուրեմն պարբերույթը արժեք է ստանում խոսքի մեջ՝ նրա հետ կապված զանազան թելերով ու առնչություններով. նրա անկախությունը զուտ ձևական ու քերականական է. այն կարող է նույնիսկ մի առանձին պարբերություն կազմել. նրա ինքնուրույն սկիզբ և ավարտ ունենալը քերականական հատկանիշ է, որ հաճախ նույնպես խախտվում է, այսինքն՝ պարբերույթը քերականորեն նույնպես դառնում է կախյալ. օրինակ՝

Եվ հենց դրա մեջն է էն մեծ ու հաստատ մխիթարանքը, որ էդ բոլոր աղետների մեջ ոչ թե հասարակ ժողովուրդն է մեղավոր, այլ նրա իշխանավորները, և քանի շատ էդ վերջինները թուլանան, իսկ իրենք ժողովուրդները դառնան ավելի գիտակից ու անմիջականորեն մոտենան իրար, և քանի իրավունքն ու իշխանությունը անցնի ժողովրդին, հասարակին, ընդհանուրին, աշխատողին, էնքան էլ մեղմանալու են էդ աղետները և վերջապես վերանալու (ՀԹԵԺ, IV, 223):

Այս օրինակի մեջ պարբերույթը սկսվում է և քանի շատ կապակցությամբ և վերջանում է վերանալու բառով. սա շափ ու քանակի մի իսկական պարբերույթ է, բայց քերականորեն անկախ չէ, այլ համադասական բարդ նախադասության մաս է կազմում: Այդպիսի պարբերույթները քերականորեն անկախ չեն, այլ բարդ նախադասության մաս են կազմում և չեն համարվում իսկական պարբերույթ: Մեր բերած վերահիշյալ օրինակի մեջ պարբերույթը համադասական կապակցությամբ շղթայված է մի բարդ նախադասության հետ և կազմում է այդ նախադասության մասը: Այսպիսի պարբերույթները իրենց մաս կազմող նախադասության հետ կոչվում են պարբերութային կառուցվածքներ: Պարբերույթը այս դեպքում հանդես է գալիս իբրև նախադասության կառուցողական տարր և կորցնում է թե իմաստային և թե քերականական անկախու-

թյունը: Մի այլ օրինակ, որտեղ պարբերությամբ ամբողջովին մի գլխավոր նախադասության համար երկրորդական նախադասություն է.

Եվ ոսկի ականոցին ետևը նույն կարճատև աշքի կոպերուն հարատև մերձեցումն է, հպումը գրեթե արուն բաց մնացող պզտիկ անջրպետին մեջ սղմելու կաշխատիս, փեշդ փեշիդ բերելու, պզտիկնալու փափաքներ կունենաս, խալարդյուն ջանքեր կընես դիմացինիդ նայվածքը շոգնեցնելու, տեսողությունը դյուրացնելու համար, իրդ դիպվածով դեմը գտնվիս այդ թարթափող աշքերուն (ԳՁԾ, 1-ին, 427):

Այսպիսի պարբերության կառուցվածքները բաժանվում են երկու խմբի՝ բաց և փակ: Բաց պարբերության կառուցվածքի մեջ միավորյալ թվարկվող անդամները դասավորվում են պարբերության մասի վերջում և մնում են շամբողջացած, իսկ փակ պարբերության կառուցվածքի միավորյալ անդամները շարադասվում են կառուցվածքի պարբերության մասի սկզբում և փակվում են գլխավոր կամ երկրորդական նախադասություններով՝ նայած թե առաջին մասի միավորյալ անդամները ինչ բնույթի են: Մեր բերած երկու օրինակներն էլ փակ պարբերության կառուցվածքներ են. առաջին օրինակը փակվում է գլխավոր նախադասությամբ, իսկ վերջինը՝ երկրորդական: Ահա բաց պարբերության կառուցվածքի օրինակ, որն աշխարհին թե այդ մարդիկը հենց դուք աղմկարարներդ եք, իսկ հանդուգն ու համարձակ ճեմում եք հրապարակում, քոսում բարձրագույն շաղակրատում անընդհատ, որ ներկայացնում եք ձեզ իբրև բարոյականության վարդապետներ, լուսավորության ջահեր, պրոմեթյան կրակի մատակարարներ (ՄԾԺ, 165):

Ուրեմն իսկական քերականորեն անկախ պարբերությունների հետ կան նաև պարբերության կառուցվածքներ, ուր պարբերությամբ բարդ նախադասության մի եզրն է կազմում: Պարբերությամբ կարող է նույնիսկ մտնել բարդ նախադասության մեջ և դառնալ տարբեր շարահյուսական միավորների կառուցվածքների միացման միջոց:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԱԲԲ — Այսորնյան Ա., Քննական քերականություն արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1886:
- ԱԲԵ — Բակունց Ա., Երկեր, Երևան, 1955:
- ԱԻԵԺ — Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, 4 հատորով, Երևան, 1950:
- ԴԶԵԻ — Զոհրապ Դ., Երկերի ժողովածու, երկու հատորով, Երևան, 1962:
- ԳԶ — Գրիգոր Նարեկացի, Գիրք աղօթից, որ կոչի Նարեկ, Վենետիկ, 1779:
- ԳՆՄՈ — Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Երևան, 1960:
- ԴՎԵ — Վարուժան Դ. Երկեր, Երևան, 1955:
- ԵԶԸԵ — Զարենց Ե., Ընտիր Երկեր, Երևան, 1955:
- ԶԵԵ — Եսայան Զ., Երկեր, Երևան, 1959:
- Բ — Բումանյան Հ., Երկերի ժողովածու, 6 հատորով, Երևան, 1950:
- ԽԱՆԼԺ — Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1947:
- ԽԱՎՀ — Աբովյան Խ., Վերջ Հայաստանի, Երևան, 1959:
- ՀԺՀ — Հայ ժողովրդական հեթաթեհներ, Երևան, 1959:
- ՀՀՀ — Հովհաննիսյան Հ., Հատընտիր, Երևան, 1953:
- ՀԸԲՀ — Շիրազ Հ., Քնար Հայաստանի, Երևան, 1958:
- ՀՊԸԵ — Պարոնյան Հ. Ընտիր Երկեր, երկու հատորով, Երևան, 1954:
- ՄԳՄ — Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Երևան, 1963:
- ՄԽՊՀ — Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Վաղարշապատ, 1913:
- ՄՄԵԺ — Մեծաբեկ Մ., Երկերի ժողովածու, Երևան, 1956:
- ՎՄԼՈ — Միրաքյան Վահան, Վալվարի որսը, Երևան, 1953:
- ՆԵԺ — Նար-Դոս, Երկերի ժողովածու, երկու հատորով, Երևան, 1955:
- ՇԵԲՍ — տե՛ս ՎՇԸԵ:
- ՊՍԱԶ — Սևակ Պ., Անլուրի Զանգակատուն, Երևան, 1959:
- ՊՍՍԸ — Սևակ Պ., Սիրո ճանապարհ, Երևան, 1954:
- ՌԶՑ — Զարդարյան Ռ., Ցայգալույս, Երևան, 1959:
- ՌՊԵ — Պատկանյան Ռ., Երկեր, Երևան, 1955:
- ՌՍԵ — Սևակ Ռ., Երկեր, Երևան, 1955:

ԻԶՊԻ — Զորյան Ս., Պապ թագավոր, Երևան, 1957:

ԵՆ — Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1963:

ՎԻԵ — Թոթովենց Վ., Երկեր, Երևան, 1957:

ՎԻԵՔ — Թեթեյան Վ., Երկեր, Երևան, 1958:

ՎՄԼՈ — Միրաբյան Վ., Լավարի սրբ, Երևան, 1953:

ՎՇԸԵ — Շերապիր Վ., Ընտիր երկեր, հրե հատորով, Երևան, 1951:

ՎՏԵԺ — Տերյան Վ., Երկերի ժողովածու, 1960:

ՎՓԸԵ — Փափազյան Վրթ., Ընտիր երկեր, Երևան, 1951:

ՎՓՀՀ — Փափազյան Վահրամ, Հետադարձ հայացք, Երևան, 1956:

ՎՓՍՊ — Փափազյան Վահրամ, Սրտիս պարտքը, Երևան, 1959:

ԲԵԺ — Բաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, Երևան, 1955:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պարբերության ըմբռնումը անտիք աշխարհում	5
Պարբերության ըմբռնումը հայ ճարտասանական արվեստում	18
Պարբերության ժամանակակից ըմբռնումը	39
Պարբերության դասակարգումը	78
Համադասական տարբերություն	96
Ստորադասական պարբերություն	102
Զիջական պարբերություն	109
Շարահարական պարբերություն	121
Պարբերության ոճաբանական բնութագիրը	128
Պարբերության լին կառուցվածք	142



Վարազ Դավրի Առաքելյան
Вараз Давидович Аракелян

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐԲԵՐՈՒՅԹԸ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Անառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ


Պատ. խմբագիր Մ. Հ. Մուրադյան
Հրատ. խմբագիր Ա. Հ. Շաղգամյան
Կազմը Կ. Հ. Յուրուջյանի
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ Զ. Խ. Օրմանյան

ՎՖ 03311, հրատ. 2820, ԽՀԽ 1067, պատվեր 301, տիրած 1000
Հանձնված է արտադրության 6/V 1967 թ., ստորագրված է տպագրության
19/1 1968 թ., տպագր. 9,25 մամուլ, պայմ. 7,38 մամուլ, հրատ. 5,96 մամուլ,
թուղթ № 1, $84 \times 1081/32$, Գինը 58 կ.


Հաշվական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան,
Բարեկամության, 24:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ ՏՊԱՐԱՆԻ ՄԵՂՔՈՎ

Էջ	Տող	Տարված է	Պետք է լինի
32	1 վ.	մենք	մեք
49	8 ն.	հատվածներ	հատածներ
62	15 ն.	ված որևէ խոսք է.	չկարգալ
70	3 ն.	լեզվով	լիզվով
71	10 վ.	հավիտիին	հավիտին
81	7 վ.	դրվե	դրելվե
87	13 ն.	ծխովում	ծխավում
89	17 ն.	Լյ, ջան-հայրենիք,	Է՛յ, ջան—հայրենիք,
146	6 վ.	տարբերությի	տարբերութի



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220042131

A

II

42131